Rechtsnormen

396(47)
Nl-43

396(47)
Ոի-43
Ա 120-10

Գրադիտարներ բոլոր յեկրներին, միացեք:

Հ. Կ. Ա. Ցե. Կ. ՌԱՆԵՎՈՐՈՒՀՈՒ-ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ՌԱՖԻՆ.

ՈՒՂԵՑՈՒՅՑ

(ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ՄԵՋ ԱՇԽԱՏՈՂ ՀՐԱՀԱՆԳՋՈՒՀՈՒ ՀԱՄԱՐ)

1006/29004

Հրատարակություն «ՀԱԿԵՆԻԳԱ»
ԹԻՖԼԻՍ
1926

27 AUG 2013

15/XI—26 Ն.Ն.Ձ.Ս.Ն. Պոլիգրաֆտր. 1-լո Ստամբա, Պլոտ. Պր. № 91.

Մատակարարված № 1570. Պատվ. № 1598/213 Տիրաժ 3000.

Հ.Կ.Կ. ԱՆԴՐԿՈՎԿ. ՅԵՐԿ. ԿՈՄ. ԲԱՆՎՈՐՈՒՀՈՒ-ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ԲԱԺՆԻՑ

«Ուղեցույց» գրքույկը թարգմանված է ռուսերենից, որը հրատարակված է Համամիութենական Կոմունիստական Կուսակցության Բանվորական Գեղջկական բաժնի կողմից։

Գրքույկը մի անհրաժեշտ ձեռնարկ է գեղջկուհիների մեջ աշխատող կազմակերպիչների ու բջջային կազմակերպիչների համար, որոնք աշխատանք են տանում կանանց մեջ։

«Ուղեցույցը» միևնույն ժամանակ ղեկավարող ձեռնարկ և հանդիսանում նաև գյուղկազմակերպիչների համար, որոնք շատ դեպքում չեն կարողանում պարզել իրենց ֆունկցիաները և զրկված լինելով ամեն տեսակ հնարավորություններից, մեր գյուղի կենցաղային պայմանների շնորհիվ շատ դեպքում տանում են աշխատանքը անկախ։

Ապա վիճակային կազմակերպչի տեղ գործ և ածված շրջանային, գավառական և գյուղկազմակերպիչ գործածական բառերը։

«Ուղեցույց»-ի պաշտոնական բաժինը Անդրյերկկոմիտեի բան. գեղջ. բաժնի կողմից փոխարինված և հավելվածով, որի մեջ ամփոփված են հետևյալ նյութերը.

ա) Անդրկովկասի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային հանրապետությունների կուս. կազմի մասին առ 1-ն հունիսի 26 թ.

բ) Պատգամավորական ժողովների 1924-25 թ. կազմը։

գ) 1926 թ. խորհրդի անդամների կազմը, այլև Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների կազմը։ Անդր. Յերկ. Կ. բան. գեղջ. բաժինը հրատարակելով «Ուղեցույց»-ը, գտնում է, որ նա լրիվ չէ նյութերի տեսակետից, որ լուսաբաներ Անդրկովկասյան հանրապետությունների կյանքը։

Անդր. Սոց. Խ. Ֆ. հանրապետությունների կին ազգաբնակության կյանքը և կենցաղը լուսաբանող նյութերի հրատարակությունը հերթական խնդիր է։

Հ.Կ.Կ. ԱՆԴՐԵՐԿԿՈՄ. ԲԱՆ. ԳԵՂՋ. ԲԱԺԻՆ։

Մանոր. «Ուղեցույց»-ը թարգմանվելու ընթացքում որոշ տեղերում շատ աննշան փոփոխության և յեն-

թարկված։ Ապա Խորհրդային Միութիւնների, Անդրկովկասյան թվական տվյալներից զատ՝ մեջ են բերված Խորհրդային Հայաստանին համապատասխանող տվյալները. այսպես օրինակ, հողային օրենսդրության, ամուսնական և ընտանեկան օրենքի վերաբերյալ մանկական հրապարակների կազմակերպման մասին. թողնված է նաև «Արևելքում» գլուխը։

Գրքում յեղած թվական տվյալների հետ մեկտեղ մեջ է բերված Հայաստանի զանազան կազմակերպությունների վերաբերյալ թվական տվյալներ։

ՀԿԿԿ Բաև. Գեղջ. բաժին

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԿԱՆԱՆՑ ՄԵՋ ՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

Կուսակցության անելիքները կանանց մեջ տարվելիք աշխատանքում պարզորեն դրված եր կուսակցության 13-րդ համագումարում հատուկ բանաձևով՝ իսկ կազմրյուրոյի և Կենտկոմի պլենումների զեկուցումների առթիվ ընդունված բանաձևերի մեջ մանրամասնորեն ձևակերպված և կանանց մեջ տարվելիք աշխատանքի խնդիրները։

Կոմունիստական Կուսակցության հիմնական խնդիրները կանանց մեջ տարվելիք աշխատանքի ընդհանրում փոփոխվում են հետևյալ յերեք հարցերում՝

1) Քաղաքական-կուլտուրական դաստիարակության միջոցով կուս. ազդեցությունը տարածել գեղջկուհիների և բանվորուհիների լայն շերտերի վրա։

2) Գեղջկուհիներին և բանվորուհիներին գրավել դեպի կուսակցական խորհրդային պրոֆեսիոնալ կոոպերատիվ շինարարության։

3) Խորհրդային, Պրոֆեսիոնալ Կոոպերատիվ և այլ կազմակերպությունների միջոցով անցկացնել այնպիսի հիմնարկների կազմակերպություն ու շինարարություն, վորոնք իրենց հերթին ազատագրեն բանվորուհիներին ու գեղջկուհիներին։

Այդ ցուցմունքների հիման վրա ազգային նահանգների ու հանրապետությունների բանվորուհիների, գեղջկուհիների և աշխատավոր կանանց մեջ տարածված և տարվելիք աշխատանքի ծրագիրը։

Վորպես հերթական խնդիր, կուսակցության առաջ դրված է՝ ուժեղացնել գործարաններում աշխատող բանվորուհիներին կուսակցության շարքերը գրավելու խնդիրը։ Նմանապես և բանվորական միջավայրից դուրս յեկած ավելի գիտակից և հասարակական աշխատանքում իրենց ցուցադրած բանվորների կանանց, ապա գիտակից գեղջկուհիներին, բանվորուհիներին, չքավորուհիներին և միջակուհիների. լայն մասսային նույնպես գրավել կուսակցության շարքերը։

Յերկրի ընդհանուր անտեսական զրության բարելավման հետևանքով և այն, վոր կուսակցությունն ուշադրություն և դարձրել կանանց մեջ տարվելիք աշխատանքին, այսոր անհերքելիորեն աճել է բանվորուհիների ու գեղջկուհիների լայն զանգվածների ակտիվությունը։ Բացի վերոհիշյալներից պետք է ընդգծել, վոր աճել է նաև աշխատավորական կանանց լայն խավերի ակտիվությունը։ Ինչպես օրինակ բանվորների, ծառայողների կանանց և ուսուցչուհիների։ Այս բոլորը պահանջում են կազմակերպություններից ճշգրիտ և սիստեմատիկ զեկավարություն տալ կանանց մեջ տարվելիք աշխատանքներին։ Վերջին ժամանակներս կուսակցությանը հաջողվել եր իր ազդեցությունը ծավալել բանվորուհիների և գեղջկուհիների ավելի լայն զանգվածների վրա հետևյալ միջոցներով, ավելացել է պատգամավորական ժողովների և ընտրողուհիների թիվը. խորհուրդներում, պրոֆմիությունների և կոոպերատիվ որգաններում բանվորուհիների և գեղջկուհիների թիվը նույնպես ավելացել է, կուսակցությանը հաջողվել է իր ազդեցությունը տարածել քաղ-դաստիարակչական սիստեմատիկ ու խորացրված աշխատանքների միջոցով։

Այդպիսով կուսակցության շուրջը աճել է անկուսակցական աշխատավոր կանանց ակտիվ մասը։ Այդ ակտիվի միջոցով կուս. կազմակերպություններն անկասկած սերտորեն կապված են կանանց լայն զանգվածների հետ, ավելի լավ են իմանում ինչով և հիվանդ այդ մասը և ինչ պահանջներ է դնում նա կուսակցության և պետության առաջ։

Ներկայումս մեր նպատակն է ամուր կապել կուսակցությունը ակտիվի հետ և ապա խորացնել դաստիարակչական աշխատանքը, նրանցից լավերին և անձնվերներին անցկացնել կուսակցության ու Կոմսոմոլի մեջ ու առաջ քաշել Խորհրդային, Պրոֆեսիոնալ, Կոոպերատիվ և այլ աշխատանքներում։

Մասսաների մեջ աշխատանքը տանելու վորպես սաուգված

մի ձև, անհրաժեշտ է մեկ անգամ ևս կուսակցությունների ուշադրությունը հրավիրել պատգամավորական ժողովների աշխատանքների վրա։

Պատգամավորուհիների վերջին վերընտրությունները, որ կատարված եր ներկայացուցչական նոր նորմայով (10 բանվորուհիներից մեկ պատգամավորուհի) զգալի չափով աճել է գեղջկուհիների, պատգամավորուհիների և պատգամավոր-աշխատավորուհիների թիվը գործարաններում, ընչինքերին կից՝ բանվորուհիներից պատգամավորական ժողովների կազմակերպումն պահանջում են կուսակցությունից ցույց տալ անդուլ ղեկավարություն այդ աշխատանքներին։

Պետք է հետևել, որպեսզի պատգամավորական ժողովները մեան կոմունիզմի դպրոցներ. դպրոցներ ուր բանվորուհիները և գեղջկուհիները կ՝դաստիարակվեն գործնական աշխատանքի համար։

Անհրաժեշտ է որպեսզի պատգամավորական ժողովը պարզ և որոշակի կերպով արտացոլի ընտրող կանանց լայն մասսաների տրամադրությունները, հարցումները և որ նա անխզելի կերպով կապված պետք է լինի բանվորուհիների և գեղջկուհիների լայն մասսաների հետ և վերջապես պատգամավորական ժողովներից, որ կուսակցության ազդեցությունը պիտի տարածի այդ մասսայի վրա։ Անհրաժեշտ է, որ պատգամավորական ժողովը իր աշխատանքների ընթացքում արտացոլի թե իր արդյունաբերության և թե գյուղի կյանքը։ Պատգամավորական ժողովները ոչ թե բազդրագիտական դպրոցներ են այլև հասարակական աշխատանքի դպրոցներ։ Աշխատանքը պատգամավորների հետ այս կերպ դասավորելով միայն մեկ տարվա ընթացքում մասսայական աշխատանքի ժամանակ եր ցրվել։ Անհրաժեշտ է լուրջ և մտածված կերպով դնել մասսայական աշխատանքը գործարաններում, այդ խնդիրը ավելի կարևոր նշանակություն է ստանում այն տեսակետից, որ գյուղից նոր բանվորուհիների հոսանք է սկսվել դեպի գործարանները, բանվորուհիներ որոնք չգիտեն ինչ կերպ է դասավորված գործարանային կյանքը, չեն մասնակցել պրոլետարական պայքարին, առանձին որակ չունեն աշխատանքի, ուստի պահանջվում է մի շարք միջոցներ նրանց վարակելու համար։ Յեվ անկասկած այդ գործում մեծ ոժանդակություն ցույց կտան գործարաններում գտնվող կանանց ակտիվը, որին պետք է նախապատրաստել այդ աշխատանքին։ Ապա կանգ առնելով արտադրության մեջ աշխատող կնոջ վրա, պետք է ասել, որ այստեղ

նկատվում է մեծ հառաջդիմություն։ Արտադրության միջից կանանց մասսայական հեռացումն դադատարեցված է, նույնիսկ մի շարք արտադրություններում աշխատող կանանց վորոշ ամրացում է կատարվել, որի հետևանքով և աճել է քանակական թիվը։ Կանանց բանվորական ուժի բացարձակ թիվը ամբողջ միության մասշտաբով հասնում եր 1924 թ. 1,466,679, իսկ 1925 թ. 1,682,991 կանանցի բանվորական ձեռքեր եյին աշխատում։ Բացարձակ ուժի աճեցման հետ միատեղ նկատվում է նաև նրա %-ի իջեցումն։ Նման յերևույթն այն բանի հետևանքն եր, որ արդյունաբերության մեջ կանանց ուժեր գրավելու խնդիրը շատ դանդաղ եր առաջ գնում, քան տղամարդկանց ուժի գրավումը։ Կուսակցությունը դեռևս շատ անելիքներ ունի կնոջ աշխատանքի վարակի բարձրացման գործում։ Պետք է պայքարել դեռ այն համոզմունքների ու կոնսերվատիվ վերաբերմունքի դեմ, կնոջ աշխատանքի վարակը բարձրացնելու նկատմամբ, որ գոյություն ունի շատ դեպքերում՝ գործարանային վարչություններում, բանվորների մեջ՝ մի քանի պրոֆմիություններում։ Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ կուսակցության ազդեցությունը շատ թույլ կերպով է տարածվում գեղջկուհիների վրա, ուստի առաջնակարգ խնդիր է դառնում առաջիկայում գեղջկուհիների մեջ սիստեմատիկ աշխատանքի կանոնավորումը։ Գեղջկուհիների պատգամավորական ժողովների քանակական աճման հետևանքը այն է, որ նա ընդգրկում է կանանցի լայն մասսաները։ Անհրաժեշտություն է զգացվում գեղջկուհիների պատգամավորական ժողովների աշխատանքներն ամրացնելու և պարապմունքները կանոնավորելու։

Անհրաժեշտ է վերացնել պատգամավորական ժողովի կազմի հաճախակի փոփոխումն։ Յուրաքանչյուր պատգամավորուհուն պետք է կապել իր ընտրողուհիների հետ, իսկ պատգամավորական ժողովը իր ամբողջությամբ կապել գյուղի քաղաքական և հասարակական կազմակերպությունների հետ։

Ընդգծելով անցյալ տարվա ընտրություններին գեղջկուհիներին խորհուրդներում գրավելու հաջողությունը, կուսակազմակերպությունների առաջ նպատակ է դրվում առաջվա պես առաջ քաշել գեղջկուհիներին Խորհուրդների մեջ, Կոոպերացիայում, Փոկերում, իսկ բատրակուհիներին Հողանատ պրոֆմիության մեջ և առաջ քաշել վերջիններիս ու ամրացնել նրանց դանազան մշտական գործնական աշխատանքներում։

Կուսակցության և խորհուրդների կողմից չքավոր և միջակ գյուղական անտեսություններին ոգնություն ցույց տալու դեպքում, անհրաժեշտ և հաշվի առնել և համապատասխան ուշադրություն դարձնել այն անտեսությունների վրա վորոնց գլուխ կանգնած են կանայք։

Աչքի առաջ ունենալով, վոր գեղջկուհիներին կուսակցության մեջ գրավելու աշխատանքը շատ դանդաղ և առաջ ընթանում. չնայած գոյություն ունի գեղջկուհիների ակտիվ, վորոնք շատ մոտ են կանգնած կուսակցության նպատակները կանանց մեջ տարվելիք աշխատանքում (պարզ կերպով չհասկանալ) անհրաժեշտ և մեծ ուշադրություն դարձնել կուսակցության մեջ գրավելու այն բատրակուհիներին և գեղջկուհիներին, վորոնք աչքի չեն ընկնում հասարակական աշխատանքում։

Գեղջկուհիների մեջ տարվելիք աշխատանքի ծավալման հետևանքով անհրաժեշտություն և զգացվում ամրացնել ապարատները, մանավանդ ստորին ապարատները, ձեռնարկել աշխատակիցների նախապատրաստման և առաջ քաշել գեղջկուհիներին այդ աշխատանքների մեջ։ Բանվորուհիների և գեղջկուհիների կենցաղային հարցը անշուշտ մնում և կենսունակ և այժմ այդ բնագավառում յեղած նվաճումները դեռ չեն բավարարում մասսաների հարցումներին։

Վորոշ չափով շատացել և ճաշարանների թիվը, այստեղ այնտեղ փորձ են անում մսուրներ ու մանկական հիմնարկներ բանալու, գլխավորապես ամառային մանկական հրապարակներ, բայց այդ դեռ բավական չի։

13-րդ կուս. համագումարից հետո կուսակցության մեջ ավելացել և բանվորուհիների և գեղջկուհիների տոկոսը։ Յեթե առ 1-ն հունվարի 1924 թ. կուսակցության մեջ յեղել և ընդհամենը 108,992 կամ 11,9% դրանցից գեղջկուհիները յեղել են 1-ն հունվարի 1924 թ. 5,926 կամ 15,4% իսկ առ 1-ն հուլիսի 1925 թ. 12,877 մարդ կամ 11,8%. բարելավվել և նույն կուսակցության սոցիալական կազմը։ Այստեղ մեր նպատակը պետք և լինի առաջիկայում բանվորուհիներին և գեղջկուհիներին քաշել կուսակցության շարքերը, վորոնք աչքի չեն ընկնում հասարակական աշխատանքում, առաջին հերթին պատգամավորուհիներին։ Ապա անհրաժեշտ և ոժանդակ միջոցներ ձեռք առնել դասաիարակելու կուսակցության մեջ անցած բանվորուհիներին և գեղջկուհիներին և առաջ քաշել նրանց կուս. աշխատանքներում։ Արևելքում աշխատանքը զգալի կերպով ծավալվել և։

Կուսակազմակերպությունները կարողացել են մոտենալ Արևելքի աշխատավորուհիներին. բացառապես դժվար և յուրահատուկ կյանքի և կենցաղի պայմանները, իսկ մի քանի տեղերում արթնացել են դեռ չշարժված աշխատավորուհիների լայն շերտերը, ընդգծվել են այն ուղիները, վորոնց միջոցով Արևելքի հետամնաց աշխատավորուհուն կապում են կուսակցության և խորհրդային իշխանության հետ։

Արևելքի ակտիվ աշխատավորուհիների միջոցով խորացնել այդ աշխատանքը, կապվել մասսայի հետ ճշտորեն և ուշադրությամբ, գործադրել ընդունված աշխատանքի ձևերը այդ մասսայի մեջ մտածված կերպով և հաշվի առնելով նրանց յուրահատուկ և բազմատեսակ առանձնահատկությունները՝ տանել կենցաղի վերամշակման աշխատանք։ Ահա սրանք են այն խնդիրները, վոր ասպարիզում ներկայումս կանգնած են կուսակցության առաջ։ Արևելքի բանվորուհիների, գեղջկուհիների ու աշխատավորուհիների մեջ տարվելիք աշխատանքում միշտ պետք և հաշվի առնվեն ընդհանուր խնդիրները, վորոնք յուրաքանչյուր ավյալ մոմենտում կանգնած են կուսակցության առաջ։

Յեվ ներկայումս յեթե մեր կուսակցության առաջ կանգնած են կարևորություն ունեցող հսկայական խնդիրներ, առաջադրված 14-րդ կուս համագումարի կողմից չքավորի դերի մասին մեր յերկրում, աշխատանքի այն ձևերի և մեթոդների մասին, վորով պետք և գրավել միջակին, հանել նրան կուլակի ազդեցությունից, քաշելով նրան բանվոր դասակարգի և գյուղական չքավորության կողմը։ Ապա բացատրել գյուղից նոր յեկած մասսային, առանձնապես բանվորուհիներին, մեր պետական արդյունաբերության սոցիալիստական բնույթի մասին. այդ խավերը դեպի սոցիալիզմի շինարարությունը գրավելու նպատակը կայանում և նրանում, վորպեսզի առաջացող աշխատավոր կանանց ամբողջ ակտիվը աշխատի ոգնել կուսակցության։

Վորպեսի կուսակցությունը կարողանա այդ ակտիվի միջոցով սերտորեն կապվել աշխատավոր կանանց լայն զանգվածի հետ և նրանց հետ միասին անցկացնի կյանքում սոցիալիզմի կառուցման դժվարին խնդիրները։

I.

ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ՄԵՋ ՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ.

ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ՄԵՋ ՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ.

ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ՄԵՋ ՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ։

Կուսակցությունը իր համագումարներում և կոնֆերենցիաներում քանիցս անգամ մատնանշել է, թե վորպիսի հսկայական նշանակություն ունի գեղջկուհիների մեջ տարվելիք աշխատանքը։ Կուսակցության 13-րդ համագումարն առաջադրել է մի շարք միջոցներ, վորոնք ուժանդակել են գեղջկուհիների լայն մասսաների առաջ քաշվելուն, գրավելով նրանց Խորհրդային, անտեսական շինարարության բոլոր բնագավառներում իսկ նրանցից լավագույններին քաշել կուսակցության շարքերը։

Գեղջկուհիների և բատրակուհիների ակտիվ ու գիտակից մասնակցությունը խորհրդային և հասարակական աշխատանքներում, ունի առանձնակի նշանակություն, հաշվի առնելով կուսակցության այն խնդիրները, վորոնք առաջադրված են յեղել 13-րդ համագումարի, 14-րդ կուս. կոնֆերենցիայի և 14-րդ կուս. համագումարի կողմից. այն է յերկրի արտադրական ուժերի զարգացումն ու բարձրացումը, բանվոր դասակարգի և գյուղացիության կապի ուժեղացումը, խորհուրդների գործունեության աշխուժացումը, կոոպերացիայի զարգացումը, հեղափոխական որինականության կիրկռումն կյանքում և այլն։

Այս աշխատանքն առանձնակի նշանակություն և ստանում և նրա համար, վոր գյուղացիական տնտեսության աճման հետ միասին՝ զարգանում և նայև տպրանքային հարաբերությունը գյուղում, իսկ սրա հետ միասին անխուսափելիորեն առաջ և գալիս գյուղացիության շերտավորում, սրվում և կուլակի, չքավորության ու միջակ գյուղացու պայքարը։ Հաճախ այս պայքարում կուլակ գյուղացությունն առաջ և բերում խոշոր ակտիվություն, ձգտելով իր ձեռքը գցել գյուղի հասարակական կազմակերպություններն և իր յետևից տանել չքավոր և միջակ տարրերին։

Հայաստանում գեղջկուհիները, վոր կազմում են գյուղական ազգաբնակության մի շոշափելի տոկոսը՝ հսկայակա դեր են խաղում գյուղատնտեսության և տնային տնտեսության մեջ և պարզ և, վոր առանց նրանց ակտիվ մասնակցության դժվար և իրագործել վերոհիշյալ խնդիրները։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ։

Գեղջկուհիների մեջ աշխատանքը լավ կնթանա միայն այն դեպքում, յերբ տեղական կազմակերպությունները, հաշվի առնելով այդ աշխատանքի ամբողջ կարևորությունը, կ՝ղեկավարեն նրան, յերբ այդ աշխատանքը կ՝լինի ընդհանուր կուսակցական աշխատանքի անբաժանելի մասը և վոչ թե բոլորովին կ՝թողնվի շրջկազմակերպչուհու վրա։

Գավկոմները և բջիջների բյուրոները պետք և մշակեն գեղջկուհիների մեջ տարվելիք աշխատանքի ծրագիրը և մտցնեն այն գավկոմների աշխատանքի ընդհանուր ծրագրի մեջ։ Հիշյալ ծրագիրը կյանքում կիրառելու համար, կուս. գավկոմները պետք և ամբողջապես պատասխանատու լինեն։ Գեղջկուհու կազմակերպիչները պետք և աշխատեն ավյալ կազմակերպության անմիջական ղեկավարությամբ։ Յեթե բջիջի և շրջկոմի բյուրոների կազմում չկան այդ աշխատանքների համար համապատասխան ընկերներ, և վոչ ել հնարավորություն՝ բջիջի բյորոյի անդամների միջից առաջ քաշելու վորպես կազմակերպիչ, այն դեպքում անհրաժեշտ և հանձնարարել Հ. Կոմ. Կուսակցության ավյալ կազմակերպության անդամներից վորևե մեկին, մտցնելով նրան կուս-կոմների բյուրոների մեջ խորհրդակցական ձայնի իրավունքով։

Շրջհրահանգչուհին համարվում և կուս-կազմակերպության պատասխանատու աշխատակից և մասնակցում և բյուրոյի բոլոր նիստերին։ Այն դեպքում, յերբ շրջ. կազմակերպչուհին ընտրված չե վորպես կուսկոմի անդամ, նման դեպքերում նա մասնակցում և շրջկոմների գաղտնաց նիստերին և պլենումներին։ Նկատի առնելով գեղջկուհիների մեջ տարվելիք աշխատանքների հսկայական կարևորությունը, այդ աշխատանքի համար պետք և ընտրել ամենալավ ընկերների, վորակյալ աշխատակիցների, վորոնք ճանաչում են գյուղը, գիտեն ու կ՝հասկանան գեղջկուհու կարիքներն ու պահանջները։ Կուս-կազմակերպությունները շահագրգռված լինելով գեղջկուհիների մեջ տարվելիք աշխատանքների հաջող կազմակերմամբ, պետք և պարբերաբար լսեն կազմակերպչուհու զեկու-

ցումը տարած աշխատանքների մասին, մասնանշեն աշխատանքի թույլ կողմերը և ցուցմունքներ տան այն վերացնելու համար:

Իրենք, կազմակերպիչները շահագրգռված լինելով վորպեսզի աշխատանքը արագ ընթանա, իրենց բոլոր հարցերը զնում են քննության շրջկոմների նիստերում, պլենումներում և ընդհանուր ժողովներում, վորպեսզի կուս. կոմիտեների անդամները ծանոթանան գեղջկուհիների մեջ տարվող աշխատանքների հետ, զեկավարեն և տան հնդհանուր ուղղություն: Շրջկոմների և բջիջների բյուրոները պետք է դնեն կազմակերպչուհիների առաջ խնդիրներ այդ աշխատանքի վերաբերյալ և միևնույն ժամանակ վորոշեն թե ինչով և ինչպես կարող են ոգնել կուսակցության հատկացած անդամները այդ աշխատանքների իրագործման համար: Գեղջկուհիների աշխատանքի վերաբերյալ բոլոր տվյալները պետք է մացվեն բյուրոների, կուսկոմների ընդհանուր ինֆորմացիոն և ստատիստիկական հաշվեվությունների մեջ:

Կուս-կազմակերպությունները շահագրգռված լինելով շրջ-հրահանգիչների վորակի բարելավմամբ և նրա աշխատանքի ընդունակությունները զարգացնելու մեջ, այդպիսիներին դրկում են շրջկոմների, բջիջների քարտուղարների և կուս. աշխատակիցների կուրսերը ու առաջ քաշում նրանց կուս-կոմների պլենումներում, վորպես զեկավարողներ:

ՇՐՋ-ՀՐԱՇԱՆԳԶՈՒՀՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ:

Շրջհրահանգչուհիների աշխատանքի հիմնական խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի կիրառեն կուսակցության տված հրահանգները գեղջկուհիների մեջ տարվելիք աշխատանքների ասպարեզում: Շրջհրահանգիչը պարտավոր է զեկավարել բջիջների և գյուղկազմակերպիչների գործունեությունը, մշակելով նրանց աշխատանքի ծրագիրը, գումարելով պարբերական խորհրդակցություններ, հետաքրքրվում և նրանց աշխատանքը և ոգնում, վոր իրագործեն բոլոր գործնական խնդիրները: Բայց և այնպես բջիջներին տրվելիք բոլոր ցուցմունքներն ու հրահանգները տրվելու են գավկոմի կամ շրջկոմի կողմից:

Շրջ-հրահանգչուհիներն իրենց աշխատանքի ընթացքում սերտ կապ են հաստատում տեղական խորհրդային և հասարակական կազմակերպությունների հետ, ըստ հնարավորության, մասնակցում են խորհրդակցական ձայնով նրանց նիստերին. մասնակցում են նույնպես գործկոմների, խորհուրդների, ՓՈԿ-երի, կոոպերացիայի, զվրոցական խորհուրդների հիմնական հարցերի մշակ-

մանը: Բայց կազմակերպչուհին հնարավորություն չի ունենա մասնակցել բոլոր ժողովներին, անցկացնել բոլոր այն խնդիրները, վորոնք հետաքրքրում են գեղջկուհիներին: Ցեվ այդ պատճառով նա ակտիվ պատգամավորուհիների, գյուղխորհրդի անդամների, հասարակական աշխատանքի քաշված գեղջկուհիների միջոցով, կապվում և վերոհիշյալ հիմնարկների ու կազմակերությունների հետ, զեկավարում նրանց և վերջիններիս միջոցով անցկացնում բոլոր այն խնդիրները, վորոնք աջակցում են գեղջկուհու դրության բարելավմանը: Շրջհրահանգչուհին պետք է հետևի, վորպեսզի գեղջկուհուն հետաքրքրող բոլոր ցավոտ խնդիրները քննվեն խորհուրդներում, կոոպերատիվներում, դատական մարմիններում և այլ կազմակերպությունների մեջ և ստանան իրենց համապատասխան վորոշումները: Մյուս կողմից էլ պետք է աշխատի կուս-կոմների միջոցով՝ խորհրդային և հասարակական կազմակերպություններին հրահրի, վորպեսզի վերջիններս իրագործեն բարձրագույն որգանների ցուցմունքներն ու հրահանգները: Շրջ-հրահանգչուհին առանձին ուշադրություն պիտի դարձնի կուսակցական, խորհրդային և այլ կազմակերպությունների միջոցով իրագործելու գեղջկուհու նյութական և տնտեսական աջակցության խնդիրները, մասնավորապես, չքավոր և բատրակ կանանց նկատմամբ:

Տեղական բյուջեները կազմելիս պիտի մացնել առանձին հոդվածներ մոր և մանկան պաշպանության, սոցիալական դաստիարակության հիմնարկներ կազմակերպելու համար:

Շրջ-հրահանգչուհին կուս-կազմակերպությունների միջոցով պիտի աշխատի, վոր խորհրդային որգանները, կոոպերացիան, ՓՈԿ-երը և ուրիշ այլ կազմակերպություններն ոգնության գան գեղջկուհու գյուղատնտեսական կոլեկտիվներ ստեղծելու գործում և ամեն կերպ աշխատեն դյուրացնել նրանց մուտքը նման կոլեկտիվ տնտեսությունների մեջ:

Յուրաքանչյուր շրջ-հրահանգիչ և գյուղ կազմակերպիչ պետք է հիշի, վոր գեղջկուհիներին դեպի կոոպերացիան գրավելու գործը, ոժանդակում և տնտեսության մեջ սոցիալիստական հիմունքների զարգացմանն ու ամրացմանը: Հենց այս պատճառով էլ ամեն կերպ պետք է աշխատել կոոպերացման յենթարկել գեղջկուհիներին: Շրջ-հրահանգիչը պիտի հրահրի ստորին կոոպերացիայի որգաններին, վորպեսզի նրանք ոգնության գան գեղջկուհուն՝ աշխատելու կոոպերացիայի ասպարիզում, ուղարկելով

նրանց կուրսերն ու դպրոցները և մասնակից դարձնեն գործնական ու սեկցիոն աշխատանքներին։ Պիտի աշխատել նաև գրավել գեղջկուհիներին հողային որդանների աշխատանքների մեջ, հետևելով միևնույն ժամանակ, որ գյուղխորհրդի և ընթերցարանների կից գտնվող գյուղատնտեսական սեկցիան ու խմբակները կանոնավոր աշխատեն։

Անհրաժեշտ է նույնպես հողորդանների ուշադրությունը հրավիրել տնտեսությունը միայնակ վարող գեղջկուհիների վրա և ցույց տալ նմաններին աջակցություն հողաշինարարության գործում։

Ամեն կերպ աջակցել տնայնագործուհիների կազմակերպմանը։ Գրավել նրանց տնայնագործական կոոպերատիվներում, առաջ քաշել խորհրդային և հասարակական աշխատանքի ասպարեզ, միաժամանակ հնարավորություն տալ ակտիվորեն մասնակցել գեղջկուհիների ընդհանուր աշխատանքին։ Շրջ-հրահանգչուհիները առանձին ուշադրություն պետք է դարձնեն ընտրված գեղջկուհիների, հատկապես խորհրդի անդամների ղեկավարության վրա։ Կուսակցական և խորհրդային կազմակերպությունների միջոցով, անհրաժեշտ է հետևել կենտգործկոմի շրջաբերականի կիրառմանը, այն է խորհուրդներում ընտրված գեղջկուհիները ակտիվ մասնակցություն ցույց տան գյուղ-խորհրդի աշխատանքներին։ Չնայած կուսակցության և խորհրդային իշխանության ցուցմունքներին, խորհուրդներին կից սեկցիոն աշխատանքը շատ տեղերում թույլ է դրված։

Անհրաժեշտ է հրահրել խորհրդային որդաններին, որ բարձրացնեն այդ աշխատանքը։

Շրջ-հրահանգչուհիները պիտի աշխատեն, որպեսզի պատգամավորական ժողովները կազմակերպվեն և աշխատեն կուսկազմակերպությունների անմիջական ղեկավարությամբ, աշխատեն կանոնավոր և ծրագրված, որպեսզի պատգամավորական ժողովների կազմակերպումն ու աշխատանքը տարվի համաձայն կենտկոմի կանոնադրության և ծրագրի։

Անհրաժեշտ է պատգամավորական ժողովների աշխատանքը դնել այնպես, որ նրա շուրջը կազմակերպվեն գյուղի չքավորները և միջակ տարրերը։ Պատգամավորական ժողովը պետք է կազմել այնպես, որ նրանք հանդիսանան մի տղակ կուսակցության և գեղջկուհիների լայն խավերի միջև։

Շրջ-հրահանգչուհու աշխատանքի մեջ է մտնում նաև ակտիվիստ գեղջկուհուն ղեկավարել, դարձնել նրան մասսայական, որ կարողանա գյուղի հասարակական աշխատանքներում առանձին տեղ գրավել և կարողանա իր հետևից տանել գեղջկուհուն։ Նա պետք է ակտիվիստ գեղջկուհիներին վերցնի առանձին հաշվեառման, տեղեկություն տա նրանց մասին գավ-կենտրոնին, հետագայում առաջ քաշելու նպատակով։ Թույլ է դրված պատգամավորուհիների հաշվետվության գործը, պրակտիկանտների հասարակական գործնական աշխատանքներն ու ղեկավարությունը։ Շրջ-հրահանգչուհիները պիտի աշխատեն գյուղ-կազմակերպչուհիների, առհասարակ կուսակցականների, հասարակական ու խորհրդային հիմնարկների ղեկավարների միջոցով ստանալ պրակտիկանդկանների վերաբերյալ համապատասխան ղեկավարություն և կարգի դնել պատգամավորուհիների հաշվետվությունը իրենց ընտրողների առաջ։ Գեղջկուհիների կազմակերպիչները պետք է ավելի սերտ կապվեն խրճիթ-ընթերցարանների աշխատանքի հետ։

Գեղջկուհիներին գրավել խրճիթ-ընթերցարանային ամեն տեսակի կուլտուր-կրթական աշխատանքներին (գրադարանների հաճախումն, մասնակցումն թերթերի ընթերցման, ներկայացումներին, զանազան դասերում և այլն) գյուղի կուսակցական, խորհրդային և հասարակական կազմակերպությունների միջոցով, տարածել գեղջկուհիների համար գրքեր, նամանավանդ «Հայաստանի աշխատավորուհի» ամսագիրը։ Ամեն կերպ աջակցել ավելացնելու գյուղ-թղթակիցների ընդհանուր թիվը, մտցնել գեղջկուհի թղթակցին ընդհանուր խմբակների մեջ, որպեսզի սովորեն տալ նյութեր, դիտողություններ, գրել հոդվածներ իրենց շրջանի գեղջկուհիների կյանքի և կենցաղի մասին «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրում և խորհրդային մյուս որդաններում։

Շրջ. և գյուղ-կազմակերպիչները պիտի սերտորեն կապվեն հողաշինարարության հետ և աջակցեն միությանը բատրակուհիների մեջ տարվելիք աշխատանքում, կազմակերպեն բատրակուհիներին, խորհրդային և հասարակական որդաններում։ Անհրաժեշտ է նայել կանոնավորել փոխ-հարաբերությունները կոմյերիտմիության և պիոներների հետ, աջակցել կոմսոմոլին աղջիկների մեջ տարվելիք աշխատանքներում, որպեսզի ավելի մեծ թվով աղջիկներ գրավվեն միության շարքերը։

Շրջ-հրահանգիչը գեղջկուհիների, բատրակուհիների, գյուղա-

տնտեսական աշխատավորուհիների միջից առաջ և քաշում ակտիվներին, կապում և նրանց հասարակական աշխատանքների հետ։ Ապա աշխատում է այդ ակտիվ յավագույն մասին քաշել կուսակցության շարքերը, իսկ աղջիկներին կոմսերիամիության մեջ։ Հարկավոր է նաև թեկնածու գեղջկուհիներին փոխադրել անդամության։ Անհրաժեշտ է կուսակցության անդամ գեղջկուհու և կոմսերիական աղջիկների մեջ դաստիարակչական առանձին աշխատանք տանել, այն նպատակով, որ նրանցից կարելի լինի պատրաստել գյուղում աշխատող ակտիվ կին կոմունիստներ։

Գեղջկուհիների մեջ տարվելիք աշխատանքը հսկայական խնդիրներ է դնում մեր առաջ։ Միայն շրջ-հրահանգչուհին հնարավորություն չունի ընդգրկելու այդ բոլոր աշխատանքը։ Անհրաժեշտ է այդ աշխատանքներին մասնակից դարձնել նաև գյուղի կուլտուրական ուժերին, որպիսին են գյուղատնտեսները, բժիշկները և մանավանդ ուսուցիչները։ Յեվ այդ աշխատանքը կարելի յե յուր կոչման բարձրության վրա դնել այն ժամանակ, յերբ կ՝ոգտագործվեն գյուղի ինտելիգենտ ուժերը, գյուղական ակտիվը և յերբ իրենք գեղջկուհիները յերևան կ՝բերեն իրենց ինքնագործունեությունը։ Կուսակցության անդուլ ղեկավարությամբ և սորին բջիջների ակտիվությամբ միայն հնարավոր է առաջադրել այդ աշխատանքների համար լավ ու պատրաստված աշխատակիցների. ապա ամեն կերպ նրանց ոգնելով, մենք կարող ենք վոչ միայն հասնել գեղջկուհիների մեջ տարվելիք աշխատանքի լայնացմանը, այլև խորացմանը, որպիսին ամենաժեշտ է գյուղում կուսակցության խնդիրները իրագործելու համար։

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԿԱԶՄԱԿԵՐՊԶՈՒՀՈՒ ՄՈՏԵՑՈՒՄԸ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻՆ

Գեղջկուհիների մեջ աշխատանք տանելու պայմանները դժվար են, գեղջկուհիների խոշոր մասը անգրագետներ են և անմիջական կախումն ունեն ընտանիքից։ Գեղջկուհու կյանքը այնպես և դասավորված, որ նա ծանրաբեռնված է տնային աշխատանքներով և յերեխաներով ու յերկար տարիներ շարունակ հնարավորություն չի ունեցել մասնակցելու գյուղի հասարակական կյանքին։ Մեր գեղջկուհին իր գյուղից ու տան պատերից բացի, լույս աշխարհ չի տեսել։ Յեվ դրա համար ել գեղջկուհիները դժվարությամբ են հասկանում, որ իսկապես իրենք այժմ

համահավասար և ազատ քաղաքացիներ են, չեն կարողանում ճիշտ մոտենալ բոլոր այն խնդիրներին, որ առաջադրում է կյանքը, հետևապես և չեն գիտակցում, որ իրենց շահերի տեսակետից, անհրաժեշտ է, որ մասնակցե նոր կյանքը կառուցման գործին։

Յեվ հենց այսոր, հեղափոխության 8-րդ տարում, գեղջկուհիներից դեռ շատերը սիրով չեն հաճախում ժողովներին և այնտեղ չեն խոսում իրենց դարդերից ու ցավերից։ Գեղջկուհիներից շատերը դեռ չեն գիտակցում, որ պիտի աշխատեն սիրով ու հոժարությամբ, պիտի գնան աշխատելու խորհուրդներում, կոոպերացիայում ու ՓՈԿ-երում։

Դարերի հարստահարումների շնորհիվ, գեղջկուհիների մեջ զարգացել է անհավատություն դեպի այս կամ այն գործը։ Միայն լավ-լավ խոսքերով չի կարելի համոզել գեղջկուհիներին, նրանք ավելի գործնական են և պահանջում են խոսքի տեղ—գործ։ Հրահանգչուհին պետք է կարողանա այս բոլորը հաշվի առնել։ Նա պիտի իմանա, որ գեղջկուհիների մեջ աշխատանք տանելու համար պահանջվում է մեծ հաստատակամություն և մեծ ու դժվարին աշխատանք։ Վոչ թե խոսքով, այլ գործնականով ցույց տալ առաջավոր գեղջկուհիներին, որ դեռ նրանց անհրաժեշտ է սովորել և մասնակցել խորհրդային-հասարակական աշխատանքներին։

Գեղջկուհիների մեջ տարվելիք ագիտացիոն աշխատանքները պիտի սերտորեն կապված լինեն կենդանի գործի հետ, որովհետև դա յի լինելու աշխատանքների հաջողության գլխավոր գրավականը։ Կազմակերպչուհին մենակ վոչինչ չի կարող անել, յեթե կ՝փորձե այդ բոլոր աշխատանքը տանել միայն իր ուժերով։

Կազմակերպչուհու անելիքը պետք է կայանա նրանում, որ նա կարողանա կոմբջիջների միջոցով հարկադրել խորհրդին, կոոպերացիային, ՓՈԿերին, տեղական դատական որգաններին եւ գյուղի խորհրդային ու հասարակական այլ կազմակերպություններին, որ վերջիններս ուշադիր լինեն գեղջկուհու հարցումներին, ամենուրյա աշխատանքների ընթացքում՝ գործնականով ապացուցանել, որ խորհրդային իշխանության բարեխնամությունը կայանում է նրանում, որ նա պաշտպանի միջոց եւ չարաչար խավերից դուրս յեկած կանանց շահերը, վորոնք բուրժուազիայի որոշ կրկնակի ճնշված եւ իրավազուրկ են յեղել։

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ։

Կուսակցությունը գործնականում համոզվել է, որ գեղջկուհիներին հասարակական աշխատանքի քաշելու միակ միջոցը հանդիսանում է պատգամավորական ժողովների կազմակերպումը, ապա առանձին ժողովներ ու կոնֆերենցիաներ հրավիրելն ու այս բոլորի հետ միասին աշխատանքի բազմակողմանի ոգտագործումը։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ։

Կոմունիստական կուսակցության կողմից գեղջկուհիների մեջ տարվելիք աշխատանքի հիմնական ձևը հանդիսանում է գեղջկուհիներից կազմված պատգամավորական ժողովները։

Պատգամավորական ժողովները կազմվում են միայն այն գյուղերում ա) որտեղ կան կուս. բջիջներ կամ շրջ-կոմներ, բ) որտեղ բջիջը կամ շրջկոմը կարող է անդամների կամ կազմակերպչուհիների միջոցով ցույց տալ համապատասխան ղեկավարություն, և վերջապես պատգամավորական ժողովներ պետք է կազմակերպել այն գյուղերում, ուր շեֆ-կոմիսյաները հնարավորություն կունենան ցույց տալու սիստեմատիկ ղեկավարություն։ Սա Կենտկոմի կողմից սահմանված կարգն է (կանոնադրությունը), որի մասին յուրաքանչյուր կազմակերպչուհի պիտի յերևան բերի պատգամավորական ժողովում և միայն այդ դեպքում կարող է ոգուտ բերել և սովորեցնել գեղջկուհիներին յերբ նա անմիջապես ղեկավարվում է կուսակցության կողմից։

Կենտկոմը վորոշակի կերպով սահմանել է, որ պատգամավորական ժողովները պիտի ընդգրկեն միայն այն գյուղերի գեղջկուհիներին, վորոնց հեռավորությունը շրջանից 4-5 վերստից հեռու չի անցնում։

Պատգամավորական ժողովների ընտրությունն այնպես պետք է տանել, որ նա կապի կուսակցությանը գյուղատնտեսական բանվորուհիների և գեղջկուհիների բոլոր խավերի հետ, բացառությամբ կուլակ տարրերի։ Պատգամավորական ժողովներն ընտրելիս այնպես պետք է անել, որ նրա կազմի մեջ մտնեն միջակ տնտեսության տեր գեղջկուհիները, միայնակ ամուսնացած, յերիտասարդ ու հասակավոր գեղջկուհիները, այլ և բատրակուհիներն ու խորհրդային տնտեսություններում աշխատող բանվորուհիները։ Առանձնապես ուշադրություն պետք է դարձնել պատգամավորական ժողովի կազմի մեջ գրավել միջակ տնտեսություն ունեցող գեղջկուհիներին, վորոնք իրենց թվով և տնտեսական կյանքում ունեցած իրենց մասնակցությամբ, կազմում են գյուղի գեղջկուհիների խոշոր մասը։ Վորպեսզի պատգամավորական ժողովը աշխատունակ լինի, նա պիտի ընդգրկի 18-ից վոչ պակաս և 35-ից վոչ ավելի պատգամավորուհիներ։

Պատգամավորական ժողովներն ամեն տարի վերընտրվում են։ Լավ է, յերբ պատգամավորուհիների վերընտրությունը ավարտվում է աշնանային ամիսներում և ձմեռային շրջանում սկսվում է պարապմունքները։ Պատգամավորական ժողովների ընտրություններին կուս-բջիջները պիտի տանեն նախապատրաստական աշխատանք և այդ ընտրություններն անց կացնեն վորպես առանձին կամպանիա։

Պատգամավորական ժողովները յերկու նպատակ ունեն, նախ՝ ծանոթացնել պատգամավորուհիներին քաղաքական սկզբնական գիտելիքների հետ, քաղ-զրույցների միջոցով, ըստ ծրագրի, ապա պատգամավորուհիներին առաջ քաշել հասարակական-քաղաքական աշխատանքների մեջ։

Պատգամավորական ժողովներ պետք է հրավիրել առնվազն ամսական յերկու անգամ։ Պատգամավորական ժողովի որակարգը պետք է դրվի Կենտրոնական Կին-բաժնի կողմից առաջադրված ծրագրից։ բացի պարապմունքներից կարելի յե դնել նաև գործնական ընույթ կրող խնդիրներ։

Պատգամավորական ժողովների պարապմունքները պիտի տանել զրույցի ձևով, այն հաշվով, վորպեսզի հասկանալի դարձնել նյութը՝ ավելի քիչ պատրաստականություն ունեցող գեղջկուհիների համար։ Ապա զրույցներ դնել այնպիսի խնդիրների շուրջը, վորոնք կ՝շոշափեն գեղջկուհիների անմիջական շահերը։ Յուրաքանչյուր պատգամավորուհի պետք է տանե վորևե հասարակական աշխատանք։ Դրա համար պատգամավորուհիներին կցում են գյուղի հասարակական՝ այս կամ այն կազմակերպության կամ հիմնարկության, վորպես պրակտիկանդկա-աշակերտուհի։ Փորձված ընկերների ղեկավարությամբ, պատգամավորուհի-պրակտիկանդկան սովորում և աշխատել։ Բջիջները միջոցներ պետք է ձեռք առնեն, վորպեսզի պրակտիկանդ պատգամավորուհիների համար ստեղծվի ընկերական շրջապատ և ցույց տրվի նրանց պետք յեղած աջակցությունը։ Անհրաժեշտ է նույնպես պատգամավորուհիներին դրավել դեպի խրճիթ-ընթերցարանի, լիկկայանի և այլ կուլտուրական հիմնարկների աշխատանքներին, ապա միջոցներ պետք է ձեռք առնել, վորպեսզի անգրագետ պատգամավորուհիները գրագիտություն սովորեն։

Պատգամավորուհիները պիտի հանդիսանան «Հայաստանի աշխատավորուհու» առաջին բարեկամները, աշխատեն բաժանորդագրվել ամսագրին, թղթակցել նրան՝ գրելով իր կյանքի յուր աշխատանքի մասին հոդվածներ։

Գովելի յե այն յերևույթը, յերբ պատգամավորուհիները հաճախում են կոմ-բջիջի դռնաբաց նիստերին։ Դա մոտեցնում է պատգամավորուհիներին կոմունիստների հետ։ Այն բոլորը, ինչ վոր սովորում է պատգամավորուհին պատգամավորական ժողովում, պետք է հաղորդի մյուս գեղջկուհիներին. նմանապես զեկուցում պետք է տա իրեն ընտրած գեղջկուհիների ժողովում և այսպիսով տարածի կուսակցության ազդեցությունը գեղջկուհիների լայն մասսաների վրա։ Պատգամավորական ժողովների աշխատանքը ուղիղ դնելու դեպքում՝ պատգամավորուհին առաջինը կ՝լինի գյուղում, վոր կոդնի կուսակցության և խորհրդային իշխանության կիրառելու կյանքում ձեռնարկած բոլոր խնդիրները. որինակի համար՝ խորհուրդների և հասարակական այլ կազմակերպությունների աշխատանքների աշխուժացումը և այլն։

Պատգամավորական ժողովների դասընթացներն ավարտող պատգամավորուհիներին պետք է ոգտագործել հասարակական աշխատանքների ասպարիզում. առաջ քաշելով նրանց թեկնածությունները խորհուրդների, կոոպերատիվների վարչությունների և փոխոգկոմների ընտրությունների ժամանակ։

ԱՌԱՆՁԻՆ ԺՈՂՈՎՆԵՐ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ընդհանրապես գեղջկուհիներից շատ քչերն են մասնակցում գյուղի համայնական ժողովներին։ Ընդունված որենք է, վոր համայնական ժողովներին մասնակցում են միայն տղամարդիկ։ Իսկ խոսկ չի կարող լինել նույնիսկ այն մասին, թե վորպիսի մեծ նշանակություն ունի գեղջկուհու մասնակցությունը համայնական ժողովներին, ուր քննվում են բոլոր այն հարցերը, վորոնք վերաբերվում են գյուղի հասարակական կյանքին։

Այն գյուղերում, ուր կան պատգամավորական ժողովներ, պիտի աշխատել պատգամավորուհիների միջոցով ագիտացիա մղել, վորպեսզի գեղջկուհիները մասնակցեն համայնական ժողովներին։ Իսկ այն գյուղերում, ուր չկան պատգամավորական ժողովներ, լավ կ՝լիներ նախ քան համայնական ժողովը, հրավիրել գեղջկուհիների առանձին ժողով. ծանոթացնել գեղջկուհիներին համայնական ժողովում դրվելիք հարցերի հետ, դրդել գեղջկուհիներին խոսելու համայնական ժողովում իրենց շահերը պաշտպանելու համար։

Բայց գեղջկուհիների առանձին ժողովները հրավիրվում են վոչ միայն համայնական ժողովների նախորյակին. այլ անհրաժեշտ է, վոր կուսակցական որգաններն ոգտագործեն ամեն մի հնարավորություն, գոնե ամսական յերկու անգամ հրավիրել գեղջկուհիների ժողով և զրուցել նրանց հետաքրքրող հարցերի շուրջը։

Գեղջկուհիների ընդհանուր ժողովներում՝ խորհուրդները, փոխոգկոմները, կոոպերատիվ վարչությունները, ուսուցչուհիները և այլն պետք է դնեն իրենց զեկուցումներն ու ծանոթացնեն գեղջկուհիներին իրենց աշխատանքների հետ։

ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐԸ

Անհրաժեշտ է տարվա ընթացքում յերկու անգամ, իսկ ավելի լավ է 8 ամիսը մի անգամ հրավիրել գեղջկուհիների շրջ. կամ գավառային կոնֆերանսներ։ Կոնֆերանսներին մասնակցելու համար ընտրվում են տվյալ շրջանի գյուղերի գեղջկուհիները։

Նախ քան կոնֆերանսը տարվում է նախապատրաստական աշխատանք, գյուղերում հրավիրվում են գեղջկուհիների ժողովներ, ուր դրվում է կոնֆերանսի խնդիրների մասին զեկուցում և կայացնում են ընտրություններ,

Աշխատել կոնֆերանսի որակարգը շատ չ՝լինի և քննության առնել ավելի կենսական խնդիրներ։ Մանավանդ գովելի յե, յերբ կոնֆերանսը վերջանում է վորևե գործնական աշխատանքով. որինակ՝ ընտրվում է հանձնաժողով պարզելու շրջանում մսուրներ կազմակերպելու հնարավորությունը, ծանոթանալու բուժման գործի հետ և այլն։

Կոնֆերանսը իր աշխատանքները վերջացնելուց հետո՝ պատգամավորուհիներն իրենց գյուղերում հաշվետվություն են տալիս կոնֆերանսի աշխատանքների մասին։

ՔԱՂ-ԼՈՒՍ ԱՇԽԱՏԱՆՔ

Խրճիթ-ընթերցարանը պետք է հանդիսանա գեղջկուհիների մեջ տարվելիք կուլտ-կրթական աշխատանքների կենտրոնը։

Գեղջկուհուն խրճիթի աշխատանքով հետաքրքրացնելու համար, կազմակերպվում է հատուկ «գեղջկուհու անկյուններ»։ Անկյուններում անհրաժեշտ է ունենալ պլակատներ, գրքույկներ, «Հայ. Աշխ.» ամսագիրը. ձեռնարկել «գեղջկուհու յերեկույթներ», կենդանի պատկերներ, վորում մասնակցում են իրենք գեղջկուհիները։ Կազմակերպել գրույցներ և ընթերցանություն «Հայաստանի Աշխատավորուհի»-ից։ Այսպիսով գեղջկուհիների մեջ տարվում է դաստիարակչական աշխատանք։

Առանձնակի խոշոր նշանակություն ունի ցուցադրական դասերի կազմակերպումը, վորոնց քննության առարկան պիտի լինի կենցաղային և գեղջկուհիներին հետաքրքրող հարցեր։

ԱՌԱՋ ՔԱՇՈՒՄ

Կազմակերպչուհին աշխատանքի առաջին որից, իրեն նպատակ պետք է դնի գեղջկուհիներից առաջ քաշել ընտրողական կազմակերպությունների և հասարակական աշխատանքների մեջ ավելի լավագույններին և ակտիվներին։

Կոմբջիջները տեղերում կազմակերպչուհիների ոժանդակությամբ գյուղացության մեջ նախապատրաստական աշխատանք տանելով, առաջադրում են գեղջկուհիների թեկնածությունները խորհուրդների, վոխոգկոմների, կոոպերատիվների վարչությունների մեջ, նույնը և ժողովրդական տաճնակալների ընտրությունների ժամանակ։

Ընտրված գեղջկուհիներն աշխատանքի ընթացքում պետք է հանդիսանան կազմակերպչուհու գլխավոր հենարանը. կազմակերպչուհին իր հերթին պետք է կապ պաշտպանի նրանց հետ և միասին քննության առնի բոլոր այն խնդիրները, վորոնք առաջանում են աշխատանքի ընթացքում։

Պետք է ոգնել նրանց, հաղթահարելու իրենց աշխատանքում առաջ եկած դժվարությունները։

Գեղջկուհիների առաջ քաշման աշխատանքների կարգավորումով միայն կարելի է ամրացնել կազմակերպչուհու տարած աշխատանքները, միայն այդ դեպքում, հնարավոր է լայնացնել աշխատանքներն. այդ առաջ քաշված գեղջկուհիների միջոցով՝ կուսակցությունը կ՝ապահովի իր ազդեցությունը միջակ և չքավոր գեղջկուհիների լայն մասսաների մեջ։

Մեր միությունը ունի Հայաստանի անտառապահությունների և խորհ. տնտեսությունների մեջ մոտավորապես 48 տեղական կոմիտեներ և 871 բատրակային կոմիտեներ գյուղերում։

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԲԱՏՐԱԿՈՒՀԻՆԵՐԻ ՀԵՏ

ԿՆՈՋ ԿԵՆՑԱՂԸ ԲԱՐԵԼԱՎՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

Արևելքի աշխատավոր կնոջ կենցաղը բարելավող հանձնաժողովներ կազմակերպվում են հանրապետության կենտրոնական Գործադիր Կոմիտեների կամ գավառական գործկոմներին կից։ Նման (կոմիսյաներ) հանձնաժողովներ գոյություն ունեն սակայն վոչ բոլոր տեղերում, այս հանձնաժողովները գոյություն ունեն առայժմ միայն Անդրկովկասում, իսկ մյուս հանրապետու-

թյուններում և շրջաններում միայն նոր են սկսվում կազմակերպվել։ Հանձնաժողովներն իրենց նպատակ են դնում ուսումնասիրել և բավարարել տվյալ վայրի ազգաբնակության կնոջ կենցաղը։

Իրենց գործունեության ընթացքում, հանձնաժողովներն ուսումնասիրում են նաև տնտեսական-իրավական հարցեր, կնոջը կենցաղապես ազատագրելու համար։ Հանձնաժողովները ձեռք են բերում դրամական միջոցներ. իրենք կամ համապատասխան որգանների միջոցով կազմակերպում են արտելներ, մսուրներ, անապատան մայրերի տուն, իրավական և բժշկական կոնսուլտացիաներ և նման այլ հիմնարկներ։ Հանձնաժողովներն իրենց աշխատանքով թեթևացնում են կին-բաժիններին տնտեսական և խորհրդային աշխատանքներից։

Կոմկուսակցությունը հանդիսանում է չքավորության և առաջին հերթին նրա ամենահարատահարված և հետամնաց մասի՝ այն է բատրակության պաշտպանը։ Գյուղատնտեսական պրոլետարիատի (բատրակների) պաշտպանության համար, կուսակցությունը ստեղծել է Հողանտառ միություն, վորպիսին կազմվել է 1019 թվին։

Ընկ. Լենինը հետևյալ կերպ է բնորոշել Հողանտառ միության խնդիրները՝ «Նա (միությունը) պետք է լինի գյուղում խորհրդային իշխանության իսկական հենարանը և առաջնորդող դունդը, գյուղական ամբողջ կյանքի վերափոխման գործում»։ Գյուղում տարվելիք աշխատանքներն այնքան էլ հեշտ չեն, միությունը պետք է հավաքի յեղած բատրակներին և բատրակուհիներին, բարձրացնի նրանց ինքնագործունեությունը, հասցնելով այն բանվոր դասակարգի գիտակցության ու զարկ տա բատրակների կրթական մակարդակին։

Պաշտպանել գյուղատնտեսական բանվորների տնտեսաիրավական շահերն և լավացնել նրանց նյութական դրությունը։

Աջակցել պետական՝ գյուղական բոլոր տնտեսությունների աճմանն ու ամրացմանը։

Նպաստել գյուղացիական տնտեսությունների արտադրողական ուժերի աճմանն և կռվել նրա անտեսական և կուլտուրական հետամնացության դեմ։

Ոգնել աշխատավոր գյուղացության. աշխատել, վորպեսզի չքավորներն և միջակները միանան կուլակների դեմ պայքար մղելու համար, մասնակցել խորհրդային իշխանության գյուղում տարվելիք շինարար աշխատանքներին։

Այժմս Հողանտառ պրոֆ-միությունը ինչպես և իրագործում իր նպատակները գյուղի վարձու բանվորության շահերի պաշտպանման գործում։

Ամեն մի գավառային և շրջանային կենտրոններում միությունն ունի իր բաժինները, վորոնց աշխատանքը համամիութենական մասշտաբով համախմբվում և Համամիութենական Կենտ. Կոմիտեյով։ Հողանտառ միության որգաններն անտառապահությունններում և խորհ. տնտեսություններում տանում են իրենց աշխատանքը ըստ աշխատանքի որենսգրքի, իսկ գյուղացիական տնտեսություններում վարձու աշխատանքի վերաբերյալ գործադրվում են 22 ապրիլի 1925 թվի հրատարակված ժամանակավոր կանոններն և 24 հունիսի 1925 թվի հրատարակված հրահանգը ի զարգացումն վերոյիշյալ կանոնների։ Խորհրդային միությունը անտառապահություններում և խորհրդային տնտեսություններում ունի 11,000 բանվորական կոմիտեներ իսկ 4,000-ից ավելի բատրակային կոմիտեներ գյուղերում։ Յուրաքանչյուր նահանգում, գավառում և շրջանի կենտրոններում կազմակերպված և միության բաժանմունքներ, միության բաժանմունքներն իրենց հերթին մտնում են հանրապետության կենտրոնական վարչության մեջ։ Այս բոլորի աշխատանքը միանում և Համամիութենական Կենտրոնական Կոմիտեներում։

ԲԱՏՐԱԿՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Յեղած սակայն վոչ լրիվ տեղեկությունների համաձայն, միություններում հաշվի յեն առնված 800,000 բատրակ-բատրակուհիներ, վորոնցից վոչ պակաս 300,000 կանայք են. բատրակուհիների տոկոսային հարաբերությունն Ուկրայնայում, Ղրիմում և Հյուսիսային Կովկասում տատանվում և 25-45 տոկոսի մեջ։

1925 թ. Հունվարի 1-ին միություններում կային 56,000 բատրակներ, մինչ առ 1-ն Հոկտեմբերի նույն միությունների անդամությունը ընդգրկված եր 116,200 բատրակ, վորպիսի թիվը բոլոր միությունների անդամների նկատմամբ 15,1% և։

Խորհրդային տնտեսություններում զեռևս բոլոր բանվորուհիները ընդգրկված չեն միություններում, յուրաքանչյուր 100 բանվորուհուց 28 հոգի մնում են միությունից դուրս, զեռևս չհաշված սեզոնային բանվորուհիներին, վորոնք շատ թույլ են կապված միություններում։

Միության որգանների նախընտրական կամպանիան 1925 թ. մեծ թվով բանվորուհիներ, բատրակուհիներ և բատրակներ գրավեց միության որգանների մեջ։ 1925 թ. միության ղեկավարող որգաններում բատրակների թիվը կազմում եր 15% և յերեք ամսվա ընթացքում բարձրացավ 9%-ով։

Ըստ միության հաշվառման, բատրակների ընդհանուր թիվը հասնում և 6363, վորոնցից բատրակուհիները կազմում են 260։

ԲԱՏՐԱԿՈՒՀՈՒ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վերոհիշյալ թվական տվյալները ցույց են տալիս, վոր գյուղ-կազակերպչուհին, առանձին ուշադրություն պետք և դարձնի բատրակուհիների մեջ տարվելիք աշխատանքներին։

Բատրակների կոմիտեների մասնակցությամբ հրահանգչուհին հաշվի պետք և առնի շրջանի բատրակուհիներին և քաշի նրանց միության շարքերը։ Ապա կազմակերպիչը պիտի կարողանա այդ գործի համար գրավել գիտակից գեղջկուհիներին ու պատգամավորուհիներին, վորոնք ավելի լավ կ՝ճանաչեն գյուղը, գյուղի անհատ բատրակուհիներին ու ծանոթ կ՝լինեն առանձին տնտեսությունների դրության հետ։

Բատրակուհիների հաշվառումը շատ դժվարին գործ և։

Կուլակները հաճախ թագցնում են, վոր վարձու բանվորուհիներ ունեն, իսկ բատրակուհին շնորհիվ իր հետամնացության և ընկճված դրության վախենում և յենթարկվել հաշվառման։

Բատրակուհիների տնտեսական դրությունը չափազանց ծանր և։ Հաճախ նրանք աշխատում են մի փոր հացի համար, չունենալով մի տաք անկյուն անգամ, տանելով տաժանակիր աշխատանք առավոտից մինչև կես գիշեր։ Բատրակի և ինչպես բատրակուհու աշխատավարձը չի հասնում անգամ ամենաքիչ աշխատավարձ ստացող քաղաքի աշխատավորին։

Յեթե տղամարդ հովիվը իր աշխատանքի համար ստանում և 32 ռ. 81 կ., ապա բատրակուհին նույն աշխատանքը տանելով ստանում և 9 ռ. 10 կ.,—այսինքն տղամարդու 27 տոկոսը միայն։

Խորհրդային միության զանազան վայրերում բատրակ կնոջ աշխատավարձը բատրակի աշխատավարձից միշտ 15-75 տոկոս պակաս և լինում։

Ուրեմն տնտեսական շահերի պաշտպանման այդ ծանր և դժվարին հարցը պետք և գրաղեցնի մեր կազմակերպչուհուն։ Անհրաժեշտ և բատրակուհուն ազատել շահագործումից. արթնացնել նրա մեջ դասակարգային գիտակցություն, վորպեսզի ինքը ան-

հրաժեշտ համարի տերերի հետ աշխատանքի պայմանագիր կնքել։ Կարևոր է նայել հետևել, որ այդ պայմանագիրը կիրառվի կյանքում։ Իսկ այդ գործում Հողանոտաս միությունը և ժողդատարանը կողնեն կազմակերպչուհուն. միայն անհրաժեշտ է պայմանագրի խախտման մասին իր ժամանակին հայտնել համապատասխան որգաններին։

ԻՆՉՊԻՍԻ ԿԵՏԵՐ ՊԵՏՔ Է ՄՏՑՆԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ

Աշխատանքի պայմանագիրը սահմանում է բանվորական որվա տևողությունը վարձողի համաձայնությամբ։ Աշխատավարձը պայմանավորվում է բանվորական որվա տևողությամբ։ Այս հարցին հարկավոր է մոտենալ չափազանց զգուշությամբ, վորովհետև յեթե պայմանագրում մտցնվի 8-ժամյա բանվորական որ, այն դեպքում բատրակի աշխատանքը դառնում է վոչ շահավետ վարձողի համար։ Քանի վոր գյուղացիք իրենց տնտեսության մեջ՝ նամանավանդ հնձի ժամանակ, աշխատում են 14—16 ժամ. նման դեպքում բատրակի արտաժամյա աշխատանքը դառնում է անխուսափելի։

Պետք է աշխատել բատրակուհու աշխատավարձը հասցնել նույն աշխատանքը կատարող բատրակի աշխատավարձին, սակայն այդ բարձրացումը այնպես զգուշությամբ պետք է անել, վոր աշխատավարձի բարձրացումը չ՝ոժանդակի բատրակուհու վտարմանը գյուղական տնտեսական աշխատանքներից։

Աշխատանքի պայմանագիրը կնքելիս անհրաժեշտ է մտցնել հետևյալ կետերը։

ա) Բատրակուհիներին հնարավորություն տալ մասնակցելու միության և հասարակական աշխատանքներին։

բ) Բատրակուհու առողջությունը պահպանելու համար որամադրել բնակարան և սնունդ։

գ) Այն վայրերում ուր ուժեղ կերպով տարածված է անդորձությունը յերկարացնել աշխատանքի ժամանակամիջոցը։

Այն պայմանագիրը, վորը շահավետ չէ և կ՝վատթարացնի բատրակուհու դրությունը, հայտարարվում է միության կողմից անվավեր։

Արբունքի չհասած և անչափահաս բատրակուհիներին արգելվում է ծանր և առողջությանը վնասող աշխատանք կատարել։ Իսկ հղի կանայք ազատվում են դժվարին և ուժից վեր աշխատանքներից։

Աշխատանքից վտարման դեպքում, բատրակուհին ստանում է նախորոք յուր յերկու շաբաթվա աշխատավարձը, յեթե արձակման մասին նրան վաղորոք հայտնված չի յեղել։ Կոնֆլիկտները քննվում են հաշտարար հանձնաժողովներում։ Կոնֆլիկտներ յեղած դեպքում կազմակերպիչը չպետք է միջամտի, այլ միայն պետք է, հետևի վորպեսզի կոնֆլիկտը չլուծվի ի վնաս բատրակուհու։

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԽՈՐՀ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Խորհրդային տնտեսություններում աշխատող բանվորուհու աշխատանքի պայմանները մոտենում է ձեռնարկություններում տարվելիք աշխատանքի պայմաններին։ Այստեղ յեթե կազմակերպչուհին աշխատանքը լավ հիմքերի վրա դնի մեծ հաջողություններ կունենա։

Այստեղ ուշադրություն պետք է դարձնել թե խորհրդային տնտեսությունների արտադրության մեջ աշխատող կինը ինչ դրության մեջ է գտնվում ու ըստ այմն հարց հարուցել վորպեսզի բանվորուհու աշխատանքի վորակը բարձրացնեն։

Զգտել բարելավելու բանվորուհու կյանքը։ Հարց հարուցել, վորպեսզի Աշխ-ժողկոմատի որգաններն ուսումնասիրեն բանվորուհիների կենցաղն ու աշխատանքն և ապա քաշել նրանց խորհրդային տնտեսությունների արտադրողական խորհրդակցությունների մեջ, առաջին հերթին, գրավելով գյուղատնտեսական փորձված կայանների աշխատանքներին։

26 թվի հունվարին կայացած Հողանոտաս միության համամիութենական խորհրդակցությունը վորոշեց, (վորպես միության աշխատանքի մի փորձ), խորհրդային տնտեսություններում աշխատող բանվորուհիների վրա տարածել իր աշխատանքը, վորպեսզի բատրակուհիներին ևս համախմբեն այդ տնտեսություններում։

ԲԱՏՐԱԿՈՒՀԻՆԵՐԻ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Բատրակուհիների կուլտ-քաղաքական դաստիարակությունը հանդիսանում է գեղջկուհիների կազմակերպչուհու անմիջական խնդիրը, վորը նա պետք է լուծի Հողանոտաս միության հետ միասին։

Հիմնական խնդիրը պետք է կայանա՝ համախմբել բատրակուհիներին և գյուղատնտեսական բանվորուհիներին պատգամավորական ժողովներում և պատգամավորական ժողովների միջոցով քաշել նրանց հասարակական աշխատանքների մեջ—այն և խորհուրդներում, փոխոգնություններում և սպառողական կոոպերատիվներում։

Հողանատ միության վերջին խորհրդակցությունը գտնում է, որ բատրակուհիներին գյուղի հասարակական կյանքի մեջ քաշելու գործում՝ միության որդանները մեծ աշխատանք պետք է տանեն։

Մենք ունենք բավականին որինակներ, որոնք ապացուցում են բատրակուհու անձնազոհությունը հասարակական աշխատանքներում։ Շրջ-կազմակերպչին ճնում է կայունացնել և ամրապնդել այդ աշխատանքը։

Շրջ-կազմակերպչուհին պետք է հատուկ ուշադրությամբ վերաբերվի յերիտասարդ բատրակուհիներին, աչքի առաջ ունենալով, որ բատրակուհիների մեծ մասը յերիտասարդ աղջիկներ են—յերեխաներ խնամողներ, հովվուհիներ կամ թե չե ոժանդակող բանվորուհիներ են բանջարանոցներում և դաշտերում։ Շատ է պատահում, յերբ յերիտասարդ բատրակուհիները դառնում են իրենց տերերի կամ նրանց տղաների ժամանակավոր կանայք, իսկ հետո նրանց կողմից խաբված լինելով, գնում են և յերեխայի հետ միասին դժբաղդ կյանք վարում, կիսահիվանդ և անոգնական։

Լենկոմյերիտմիությունը կամ կազմակերպչուհին առանձին ոգնություն պետք է ցույց տան նման դժբաղդացած յերիտասարդ բատրակուհիներին։ Աղջիկ բատրակուհիներին անհրաժեշտ է կազմակերպել, որպեսզի յերիտասարդ աշխատավորուհին մանի կոմյերիտմիության շարքերը, իսկ մանկահասները պիտի անցնեն պիոներների մեջ։ Այս կազմակերպությունների մեջ է, որ նրանք պետք է ստանան քաղ-դաստիարակություն։

Ապա անհրաժեշտ է ցույց տալ բատրակուհիներին իրավաբանական ոգնություն, տալ նրանց հետաքրքրող իրավաբանական հարցերի շուրջը տեղեկություններ, սերտ կապ հաստատել ժողդատարանների հետ և առաջ քաշել նրանց, որպես ժող-ատենակալների։

Բատրակուհիների ճնշող մեծամասությունն անգրագետներ են. կազմակերպչուհին է, որ նրանց պետք է տեղավորի լիկ-կայաններում։ Իսկ կիսագրագետ բատրակուհիների վերաբերմամբ կազմակերպչուհին պետք է աշխատի, որ բատրակուհին կարողանա հասկանալ կարդացած գիրքը, թերթը և բաժանորդագրվի ամսագրին։

Բատրակների համար «Մաճկալ» թերթի՝ իսկ բատրակուհիների համար «Հայ. աշխ.» ամսագրում կան առանձին բաժիններ, ուր լուսաբանվում են բատրակի-բատրակուհու կյանքն ու դրությունը զանազան շրջաններում։

Առանձին արժեք և ներկայացնում, յերբ բատրակուհին ինքը գրում է յուր կյանքի մասին—այդ իսկ պատճառով պետք է աշխատել, որ բատրակուհին դառնա «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրի, «Մաճկալ» թերթի աշխատակիցը և այսպիսով կամաց կամաց նա կ՝դառնա մեր թերթերի համար լավագույն թղթակիցներից մեկը։

Բատրակուհիները բաժանորդագրված չեն մեր ամսագրին յեվ վոչ էլ թղթակցում են նրան։ Կազմակերպչուհու պարտքն է առաջ քաշել հարյուրավոր բատրակուհիների—գյուղթղթակիցների ու կապի նրանց ամսագրի հետ։ Կազմակերպչուհին պետք է միշտ հիշի, որ գյուղատնտեսական պրոլետարիատը հանդիսանում է արդյունաբերական պրոլետարիատի կրտսեր յեղբայրը և սոցիալիստական շինարարության հիմնաքարը գյուղում։

14-րդ կուս-կոնֆերանսը պարտավորեցրեց մեզ, բատրակուհիների միջից դուրս քաշել ավելի թարմ և տոկուն ուժեր կուսակցության շարքերը ընդունելու համար։

Կրկնակի ուշադրություն պետի դարձնել առաջին հերթին բատրակ պատգամավորուհիներին կուսակցության շարքերն ընդունելու խնդրի վրա։

Ընդհամենը կուսակցության շարքերում մենք ունենք «0,3» տեկոս բատրակուհիներ։

II.

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԿԻՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՔԱՇՎԱԾ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ՄԵՋ.

ԱՆԽԱՏԱՆՔԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՄ.

Խորհրդային իշխանության եությունը կայանում է նրանում, որ հիմնական և միակ հիմքը ողջ պետական իշխանության և պետական ապպարատի՝ հանդիսանում է բանվորների և գյուղացիների մասսայական կազմակերպությունը։

Կազմակերպության ձևը, որի ոգնությամբ բանվորներն և գյուղացիները գրավվում են պետության կառավարման գործին հանդիսանում են խորհուրդները, գործկոմներն և համագումարները, ուր աշխատավոր մասսան ընտրում է իր ներկայացուցիչներին։

Իշխանության այս եությունը, կազմակերպության այս ձևը արդեն ընդգծում են կազմակերպչուհու համար հիմնական անելիքներ. պետության կառավարման գործում անհրաժեշտ և մեծ թվով աշխատավորներ գրավել, մասնավորապես կանանցից, ընտրական կամպանիայի ընթացքում անհրաժեշտ է խորհուրդների մեջ առաջ քաշել ակտիվ քաղաքացիների, մասնավորապես քաղաքացուհիներին, ապա անհրաժեշտ է խորհուրդների համար հատկապես պատրաստել աշխատակիցների մի կադր։

Անհրաժեշտ է կանանցից պատրաստել աշխատակիցներ խորհուրդներում աշխատելու համար։

Խորհուրդների գործունեության աշխուժացման գործնական աշխատանքը չի կարող իրագործվել մինչև որ խորհրդի անդամները—գյուղացիները և գեղջկուհիները ցույց չտան մասսայական մասնակցություն։

Ընկ. Լենինը բազմիցս անդամ շեշտել է այն հանգամանքը, որ պետության ղեկավարության գործում ոչ միայն պիտի մասնակցեն ընտրված կամ խորհրդային մշտական աշխատանքի առաջ քաշված բանվորներն ու գյուղացիները, այլ պիտի այդ գործին իրենց մասնակցությունը ցույց տան նաև աշխատավորների լայն խավերը։

Ընկ. Լենինի կողմից առաջադրված այդ խնդիրը, միանգամից կատարել չենք կարող։ Հենց այժմ մենք անցել ենք խորհուրդների աշխատանքի աշխուժացման գործին և գրավել այդ աշխատանքներին գյուղացիների և գեղջկուհիների լայն մասսաներին։

Խորհրդային հանրապետության ամենադժվար մոմենտներին ընկ. Լենինը ասել է՝ «այն բանվորները, որոնք չունեին քաղաքական և պետական վոչ մի փորձառություն, այսոր նրանք բարձրացել են, ահագին ուժ են տվել պրոլետարիատի ադիտացիայի կազմակերպման գործին, կատարել են նորանոր հրաշքներ։ Ցեվ նման ուժ, նման եներգիա շատ և շատ ունենք նորանոր հրաշքներ կատարելու համար։ Դեռևս աշխատանքի չքաշված բանվորների և գյուղացիների ամեն մի նոր շերտը մեր հավատարիմ բարեկամներն ու դաշնակիցներն են։ Այժմ, պետությունը կառավարելու գործում մենք հարկադրված ենք յուրաքանչյուր քայլափոխում հենվել այդ շերտերի վրա։ Մենք պետք է նորից և նորից դիմենք անկուսակցական բանվորներին և գյուղացիներին. վոչ այն նպատակով, որպեսզի նրանց միանգամից գրավենք դեպի մեր կողմը, քաշենք կուսակցության մեջ. մեզ համար դա այնքան էլ կարևոր չէ, այլ այն նպատակով, որպեսզի նրանց մեջ զարթեցնենք գիտակցություն, որ յերկրի ազատագրման գործում նրանց ոգնությունը կարևոր է։

Ցեվ այն դեպքում յերբ կապիտալիստներն ու կալվածատերերը բանվորներին և գյուղացիներին թույլ չեյին տալիս մասնակցելու յերկրի կառավարման գործին, իսկ այսոր մենք կ՝հասցնենք նրանց այն գիտակցության, որ նրանց կապում ենք մեզ հետ միասին սոցիալիստական հանրապետության ամուր հիմքը դնելու, միայն այս դեպքում մեր գործը կ՝լինի վերջնականապես անհաղթելի»։

Ցեվ խորհրդային իշխանության ամենադժվար մոմենտներին ընկ. Լենինը հարցը դնում եր այսպես՝ հաղթության գրավականը կայանում է նրանում, որ մենք կարողանանք ամենամեծ խնդիրների լուծման ժամանակ, գրավել միլիոնավոր աշխատավորների նորանոր զանգվածների։

Ապա ընկ. Լենինը նմանապես ասել է, որ միլիոնավոր աշխատավորների՝ պետության կառավարման գործին մասնակից դարձնելով, մենք դրանով իսկ առաջ քաշած կ՝լինենք աշխատավոր կանանց։

Յեվ արդեն վերջին տարիների ընթացքում կուսակցությունը վորոշակի կերպով դրել և աշխատավորությանը պետության կառավարման գործին քաշելու խնդիրը,—Խորհրդային Միության մասշտաբով տասնյակ հազարավոր բանվոր և բանվորուհիներ, գյուղացիներ և գեղջկուհիներ, ընտրված են խորհուրդներում։ Մեկ մոտ նրանց թիվը հասնում է 15.914-ի։

ԽՈՐՀՐԴՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ԳՐԱՎԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

Աշխատանքի հետևյալ շրջանը պետք է համարել աշխատավոր կանանց դրավելը խորհրդի աշխատանքին, զուգակցելով պետության կառավարելու գործը արտադրության և իրենց տնտեսության առորյա աշխատանքների հետ։ Խորհրդի անդամ գեղջկուհուն դրավելով գործնական աշխատանքի, սրանով մենք սերտորեն կապում ենք խորհուրդը գյուղական լայն մասսաների հետ, բացի այդ, միևնույն ժամանակ ոգնում ենք կուսակցությանը իր շուրջը ստեղծելու կուսակցական ակտիվ, վորը կարող է միացնել կուսակցությանը գեղջկուհիների և գյուղացիների լայն զանգվածների հետ։

Աչքի առաջ ունենալով, վոր մեր կուսակցությունը և խորհրդային իշխանությունը այժմ 26 թվին, սոցիալիստական շինարարության գործում դեռ ևս հարկադրված են դժվարություններ հաղթահարելու մեր արդյունաբերության ամրացման, չքավորության ու միջակ գյուղացության և պրոլետարիատի սերտ դաշնակցության կարգավորման, բանվորների և բանվորուհիների լայն դաստիարակման ասպարեզում, վորոնք ցրված են մեր որավուր աճող արդյունաբերության մեջ։ Կարելի յե ասել, վոր մեր կուսակցությունը կարող է այդ դժվարությունները հաղթահարել, ունենալով «հրաշալի միջոց», այն է՝ աշխատավորության լայն զանգվածներին խորհուրդների գործնական աշխատանքին քաշելով։

Դրա համար շրջ-հրահանգիչն իր գործնական աշխատանքներում պետք է դնի հետևյալ խնդիրները։

ՇՐՋՇՐԱՇԱՆԳԱՌԻՀՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ամենից առաջ շրջ. և գյուղ. կազմակերպիչները գյուղում, պետք է իմանան կուսակցության և խորհուրդային իշխանության բոլոր վորոշումները, վորոնք վերաբերվում են խորհուրդի անդամ-գեղջկուհիներին նրա գործնական աշխատանքների դրավելու մասին։

Այդ դեպքում անհրաժեշտ է վոչ միայն իմանալ վորոշումները, այլև կարողանալ հասկանալ նրանց նշանակությունը, թափանցել խնդրի լրջության մեջ, վորոնք աշխատանքի ընթացքում կանդնած են հրահանգչուհու առաջ։ 25-26 թ. խորհուրդների ընտրության կամպանիայի արդյունքները Անդր. Սոց. Ֆեդ. Խորհանրապետությունների մասշտաբով յեղավ այն, վոր 8,793 կին ընտրված եյին գյուղ-խորհուրդներում. իսկ գյուղ-խորհուրդների ամբողջ անդամների թիվը հասնում եր 80.973 հոգու։ Արդեն յուրաքանչյուր 10 տղամարդ անդամին գալիս է մեկ կին գյուղ-խորհրդի անդամ։

Գիտենալով, վոր Անդրկովկասյան հանրապետություններում 18 տարեկ. վեր կանանց և տղամարդկանց թիվը համարյա թե հավասար է, ուրեմն նման դրությունը գյուղ-խորհուրդների ընտրության վերաբերյալ պետք է խոստովանել, վոր աննորմալ է։

Հրահանգչուհին պետք է մի կողմից պայքարի այս յերևույթի դեմ, իսկ մյուս կողմից նա պետք է ոգնի խորհրդում ընտրված կին անդամներին՝ մասնակցելու խորհուրդների աշխատանքներին։

Այժմ համարյա չկա մի գյուղ կամ շրջան, վորտեղ չունենանք ընտրված խորհրդի անդամ-գեղջկուհիներ, վորոնք իրոք կոչված են պետությունը կառավարելու։

Միութենական մասշտաբով մենք ունենք ավելի քան 60,000 խորհրդի անդամ-գեղջկուհիներ։ Պետք է խորհրդի ամեն մի անդամին և 60,000 գեղջկուհիներին սովորեցնել՝ կառավարելու պետությունը։

Կինը ընտրվում է խորհրդի մեջ նրա համար, վորպեսզի իրական մասնակցություն ցույց տա մեր խորհրդային յերկրի շինարարությանը։ Խորհրդի անդամ գեղջկուհին պետք է լինի գյուղի տնտեսության կազմակերպողն և կառավարողն իր գյուղի կամ շրջանի։ Գյուղի բնակչությունը միայն այն ժամանակ հարգանքով կ՝վերաբերվի դեպի խորհրդի անդամ կինը, յերբ գործնականում կ՝տեսնի նրա աշխատանքը։ Իսկ մեր պարտականությունն է սովորեցնել խորհրդի անդամ-գեղջկուհուն՝ աշխատել վոչ միայն ի ոգուտ տեղական գյուղացիների և գեղջկուհիների այլև ի ոգուտ ամբողջ պետության։

Դրա համար անհրաժեշտ է իմանալ, թե ինչպես է նայում յերկրի բարձր իշխանությունը գեղջկուհիներին՝ պետություն կառավարելու համար առաջ քաշելու գործին։

Ս. Խ. Հ. Մ. խորհուրդների 3-րդ համագումարն ահա թե ինչ է ասել այդ առթիվ՝ «խորհրդային ապպարատի հետագա լավացման ուղին գտնվում է բանվորական և գյուղացիական լայն մասսաների առաջքաշման մեջ—պետության կառավարման գործում, այս ճանապարհով պիտի ընթանա բանվորների ու գյուղացիների, բանվորուհիների ու գեղջկուհիների ինքնագործունեության զարգացումը»։

Սրանից հետևում է, որ կուսակցությունը և Խորհրդային Իշխանությունը պետք է աշխատեն ձեռք առնել միջոցներ և ձևեր գեղջկուհիներին լիովին գրավելու խորհրդային շինարարության գործում, աչքի առաջ ունենալով, որ առանց գեղջկուհիների մասնակցության լիովին չի իրագործվի խորհուրդների աշխատանքի աշխուժացումը։

Ապա Խորհուրդների 3-րդ համագումարը ասում է, որ խորհրդային ստորին որգանները լիովին ուշադրություն չեն դարձնում ու բավարարում գեղջկուհիների պահանջներն ու հարցումները, որ գյուղական բնակչությունը պահպանողական հայացք ունի այն գեղջկուհիների նկատմամբ, որոնք մասնակցում են հասարակական աշխատանքներին։ Դրա համար էլ անհրաժեշտ է ավելի բարենպաստ պայմանների ստեղծելը ընտրված գեղջկուհիների աշխատանքների համար, ուժեղացնել ղեկավարությունը նրմանների աշխատանքի վերաբերմամբ և պատրաստել նրանցից խորհրդների ակտիվ աշխատակիցներ»։

Ցեվ այս որոշումը շրջ-կազմակերպիչը պետք է իմանա և կարողանա խելացի կերպով բացատրել, թե խորհրդային և թե տեղական բնակչության՝ յեթե նա դրանում կարիք է զգում։

Անհրաժեշտ է հիշել Անդրկովկասի Կին-գեղջկոմի նախագահությանն ուղարկած հրահանգի՝ հանրապետության Կենտ-գեղջկոմներին 1925 թ. սեպտեմ. ուղարկած 2-րդ և 3-րդ պունկտերը։

1, Շարունակել և լայնացնել Արևելքի աշխատավոր կանանց դեպի խորհրդային շինարարությանը գրավելու աշխատանքները։

2. Ավելի ակտիվ և ընդունակ կանանց պարբերաբար առաջ քաշել ավելի պատասխանատու աշխատանքներում, սկսելով գյուղխորհրդի աշխատանքներից և վերջացնելով հանրապետության կենտ. որգանների աշխատանքով։

Անդր. Կենտգործկոմին կից խորհրդակցության բանաձևի 4-րդ կետում (1926 թ. հունիսի 24-ին, և 25-ին) Անդր. Ս. Խ. Ֆ. հանր. խորհուրդների վերընտրությունների և խորհուրդների համագումարների առթիվ ասված է հետևյալը։

Չնայած կանացի մասսաների ակտիվության, այն վոր նրանց %-ը բարձրացել է խորհուրդներում, բայց և այնպես դեռ բավարար չի այդ %-ը, իսկ շատ տեղերում միանգամայն անբավարար է ու ձևական վերաբերմունք է նկատվում կանանց խորհուրդներում գրավելու աշխատանքների նկատմամբ։

Շրջ-կազմակերպչուհին պետք է առանձին ուշադրություն և յեռանդ ի հայտ բերի խորհրդի ընտրությունների շրջանում։

Խորհրդում առաջ քաշվող գեղջկուհին պետք է իրոք հանդիսանա գյուղական հիմնական մասսայի ներկայացուցիչը, վորպեսզի նրան ճանաչի գյուղի բնակչությունն ու վայելի գյուղական մասսայի վստահությունն ու հեղինակությունը։

Չի կարելի խորհրդում անցկացնել կանանց ձևականորեն և միայն նրա համար, որ «բարձրից է հրահանգված»։

Պետք է կարողանալ ապացուցել գյուղի բնակչության, թե վորքան կարևոր է աշխատավորուհիների մասնակցությունը պետություն կառավարելու գործում։ Գյուղախորհրդի ընտրությունները ավարտելուց հետո, կազմակերպչուհու առաջ դրվում է մի այլ խնդիր՝ ոգնել գեղջկուհուն սովորել աշխատելու խորհրդում, ոգնել մասակցելու գյուղի գործնական, շինարար աշխատանքներին և վերջապես կապել գեղջկուհուն ընտրողների հետ։

Յեթե խորհրդի անդամ-գեղջկուհին քիչ է պատրաստված հասարակական աշխատանք տանելու համար, այդ դեպքում անհրաժեշտ է մտցնել նրան գյուղի կամ շրջանի պատգամավորական ժողովի կազմում սովորելու համար։ Գյուղխորհրդի կին-անդամին անհրաժեշտ է առաջին հերթին տեղական խորհրդին վերաբերող հարցեր. պատգամավորական ժողովի աշխատանքի ընթացքում հետևվել, վորպեսզի խորհրդի անդամ-պատգամավորուհին աճի և զարգանա, դնել նրա զեկուցումները պատգամավորական-համայնական ժողովներում։

Յեթե խորհրդի անդամ պատգամավորուհուն անհրաժեշտ է սովորել, նրան առաջին հերթին պիտի ուղարկել լիկ-կայան կամ դպրոց։ Աշխատել համոզել նրան, որ անգրագետ լինելով՝ պետություն կառավարել չի կարելի։

Անհրաժեշտ է նաև գյուղխորհրդի կին անդամին ոգտագործել պրակտիկանտակների հետ տարվելիք աշխատանքում, որոնք ուղարկված են պատգամավորական ժողովներից խորհուրդները. ոգնել նրանց ու ծանոթացնել խորհրդին պրակտիկանտակների կող-

մից տարվելիք աշխատանքի և խնդիրների հետ, հիշեցնել խորհրդին բարձրագույն որգանների վորոշումները, վորտեղ ասվում է հետևյալը.

«Ի նկատի ունենալով, վոր շրջ-գործկոմների և գյուղ-խորհուրդների կողմից նկատվել է անուշադիր վերաբերմունք, գեղջկուհի—պատգամավորներին՝ խորհրդի գործնական աշխատանքի մեջ գրավելուն, ՍԽՀՄ կենտգործկոմը նպատակ ունենալով պատրաստել գեղջկուհի պատգամավորներից խորհրդային ակտիվ աշխատակիցներ, առաջարկում է գրավել նրանց, վորպես ձրի պրակտիկանտների, շրջ-գործկոմի, գյուղխորհրդների, հողային-հարկային, դպրոցական և այլն հանձնաժողովներում. նույնպես թույլատրելով մասնակցել վերոհիշյալ որգաններում խորհրդակցական ձայնի իրավունքով և նմանապես ոգտագործել գեղջկուհի-պատգամավորներին՝ այդ որգանների զանազան գործնական աշխատանքների կատարման մեջ»։

Բացի դրանից, շրջ-կազմակերպչուհին պետք է հետևի, վորպեսզի պատգամավորուհիները լավ իմանան իրենց գյուղի կարիքները, առաջին հերթին գյուղի չքավոր մասի և մանավանդ գեղջկուհու կարիքի մասին։

Գյուղի համայնական ժողովների աշխատանքներում պետք է պատգամավորուհին ի հայտ բերի կենդանի մասնակցություն, անպայման հաճախի ժողովները և դեպի ժողովները գրավի նաև մնացած գեղջկուհիներին։

Ընդհանուր ժողովներին այնպիսի հարցեր առաջադրել, վորոնք մոտ են գեղջկուհիների կարիքներին և ոգնել նրանց արտահայտվել իրենց կյանքի ցավոտ կողմերի մասին։

Շրջ-հրահանգչուհուն անհրաժեշտ է հաշվի առնել խորհուրդներում գտնվող պատգամավորուհիներին, ճանաչել նրանց, վորպեսզի հնարավոր լինի հետևել և ոժանդակել նրանց աշխատանքներին։

Գյուղի և շրջանի մասշտաբով, անհրաժեշտ է նաև հրավիրել խորհրդակցություններ։ Աշխատել վորպեսզի խորհրդի կին անդամը հաշվետու լինի իր աշխատանքների համար համայնքի առաջ և նմանապես շրջ-գործկոմների և գավգործկոմների նիստերում։ Յեթե շրջ-կազմակերպչուհին կարողանա իսկապես քաշել պատգամավորուհի գեղջկուհուն դեպի խորհրդի աշխատանքը, կարողանա կապել նրան գյուղի ընակչության հետ, կարողանա ցույց տալ խորհրդի անդամին, թե ինչպես պետք է աշխուժանցել խորհուրդ-

ների մասսաներին՝ դեպի խորհրդի աշխատանքները գրավելով, կարողանա սովորեցնել խորհրդի անդամ-գեղջկուհուն հասկանալ, վոր խորհուրդը վոչ միայն պետք է հավաքի հարկեր և հանդիսանա վարչական մարմին, այլ դա մեր մեծ ղեկավար և մեր մեծ ուսուցիչ ընկ. Լենինի մտքի (խորհուրդ) մի կազմակերպություն է, վոր միացնում է բանվորական և գյուղացիական մասսաները պետական անտեսություններ կազմակերպելու համար։ Իսկ խորհուրդն էլ պետք է բարձրացնի իր գյուղի անտեսությունը, բարձրացնի գյուղի կուլտուրական մակարդակը՝ շինելով դպրոցներ, հիվանդանոցներ, ծննդարերական ապաստարաններ, մսուրներ և այլն, և վերջապես խորհուրդը իր շրջանի տերն է ու մասնակցում է յերկրի քաղաքական կյանքին։

Յեթե պատգամավոր-գեղջկուհին շրջ-կազմակերպչի ոգնությամբ կ՝հասկանա խորհրդի այդ խնդիրները և այլ պարտականությունները, վորոնք դրված են իր վրա, այն դեպքում խորհուրդների աշխուժացման գործը՝ չքավորության գրավել դեպի պետության կառավարման գործը, առաջ կ՝գնա իրագործելու համար ընկ. Լենինի պատգամները։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՇՐՋ-ԿԱԶՄԱԿԵՐՊՉՈՒՀՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հասարակական փոխադարձ ոգնությունը ծնունդ է առել ընկ. Լենինի առաջարկությամբ։ 1921 թվի, Մայիսի 14-ին յերբ հրատարակվեց Գյուղական Հասարակական Փոխադարձ Ոգնության կոմիտեների որենքը, ընկ. Լենինը ասաց, վոր «բանվորա-գյուղացիական իշխանությունը չի կարող թողնել առանց ոգնության կարմիր բանակայինների ու թույլ անտեսությունները, այդ պատճառով գտնում է անհրաժեշտ ամեն մի գյուղում ստեղծել՝ իրենց գյուղացիներից փոխադարձ ոգնություն»։ Փոխոգնությունների հիմնական խնդրի իրագործումը, վորպիսին մատնացույց էր արել ընկ. Լենինը անմիջապես իրականացավ։

Սկզբնական շրջանում, դրանց աշխատանքը իր բնույթով հիշեցնում էր ավելի շուտ, գյուղական Սոցապը, վորովհետև նրանք գլխավորապես պարապում էին նպաստների բաշխման խնդրով։

1925 թ. ամառը Անդրկովկասի Բ. Գ. Տ-ն բազմակողմանի հետազոտման յենթարկեց գյուղ-Փոկերի և Անդր. Սոցիալիստական Խորհ. Ֆեդերատիվ Հանրապետութ. Փոկերի գործունեությունը. այդ հետազոտման արդյունքները հետևյալն է՝

Վրաստանում Փոկերը կազմակերպվել են 15-ին հունիսի 23 թվի և ընդգրկել են ամբողջ հանրապետությունը, բացառությամբ վերին Սվանեթի. Այդ ժամանակ Փոկերի թիվը հասնում եր 1,890. համեմատաբար ավելի ակտիվ կերպով ծավալվել է աշխատանքը Գորիի, Ողուրգեթի, Շորապանի և Ախալցխայի գավառներում, ուր Փոկերը ունեին 300-ից ավելի ոժանդակ ձեռնարկներ, ջրաղացներ, ջուլհակի արհեստանոցներ, կարմիր ճաշարաններ և այլն։ Փոկերի կազմի մեջ բոլորովին բացակայում եյին պատրաստված մարդիկ, գյուղական ինտելիգենցիան իսկ կանայք բոլորովին գրավված չեն յեղել Փոկերի աշխատանքում. Փոկերը շատ թույլ կապ ունեյին գյուղի ազգաբնակության հետ, տնտեսական ոգնությունը միանգամայն թույլ է յեղել, իսկ իրավականը միանգամայն բացակայել է, Փոկերի առևտրական գործունեությունը ընդունել եր վատառողջ ձևեր։

Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային հանրապետության Փոկերի գործունեությունը արտահայտվել է գլխավորապես թույլ տնտեսություններին նպաստ բաց թողնելու, այլև դպրոցներին, հիվանդանոցային պունկտերին, չունեվոր վորբերին և այլն։ Ինչպես Վրաստանում, այնպես և Խորհրդային Ադրբեջանում Փոկերի աշխատանքներում թույլ կերպով են գրվված գյուղական ինտելիգենցիան և կանայք։ Իրավական ոգնությունը միանգամայն բացակայում է։ Կարմիր բանակայիններին ընտանիքի և հաշմանդամների ստացած նպաստը միանգամայն անբավարար է յեղել։

Հայաստանի մի քանի վայրերում վոչ միայն ազգաբնակությունը, այլ և Փոկերը իրենք դեռևս չեն խորացրել Փոկերի փոխադարձ ոգնության նպատակը։ Աշխատանքային ոգնություն ցուցադրվում եր առանց հաշվեառման ու ծրագրի, Փոկերից շատերը կապված չեն յեղել ազգաբնակության հետ. Հայաստանում նույնպես գյուղական ինտելիգենցիան գրավված չի յեղել Փոկերի աշխատանքին, իսկ կանայք Փոկերում միանգամայն բացակայում են։

Նոր տնտեսական քաղաքականության և գյուղական տնտեսության զարգացման հետևանքով կոմիտեները վոչ միայն պիտի լայնացնեյին իրենց աշխատանքի շրջանակը, այլև պետք է փոխեյին իրենց բռնած ուղին։

Գյուղական մանր և թույլ տնտեսությունների բարձրացումը, գրավել միջակ գյուղացությունը դեպի բանվոր դասակարգը. հանելով նրան կուլակի ազդեցությունից, ամրապնդել միջակ գյուղացու դաշինքը չքավոր գյուղացու հետ—ահա այն բոլոր կա-

ռևոր խնդիրները, վորոնք այլ հարցերի հետ միասին, 1924 թվին դրված եր մեր կուսակցության և բանվորա-գյուղացիական կառավարության առաջ։

ԱՍՖԽՀ մեջ մտնող հանրապետություններում Գյուղական-Հասարակական Փոխադարձ Ոգնությունը կազմակերպվեց 1922—1923 թվերին, գյուղական փոխադարձ ոգնության մշակված կանոնադրության՝ հիմքում շեշտվում է այն հանգամանք, վոր գյուղկոմիտեները հանդիսանում են գյուղական մասսային ինքնագործունեության՝ փոխադարձ ոգնության կազմակերպություններ և կազմակերպվում են ընտրողական կամավոր կոլեկտիվ անդամակցության սկզբունքներով։

Այդ խնդիրները իրենց ամբողջությամբ և պարզությամբ դրված եյին 13-րդ կուս. համագումարի կողմից փոխոգկոմների առաջ (բանաձև—աշխատանք գյուղում կ. 5-7), 13-րդ համագումարը իր վորոշումներից վոչ միայն փոխոգկոմների ասաջ դրեց մի շարք խնդիրներ, այլև ցույց տվեց միջակ և չքավոր գյուղացության դաշինքի ուղիները, այլև գյուղական թույլ տնտեսությունների բարձրացման ճանապարհը։

Այդ հարցի վերաբերյալ բանաձևի 5-րդ կետն ասում է «անհրաժեշտ է գյուղի (տնտեսությամբ) անզոր շերտերին փաստորեն (գործնականում) ապահովել կոոպերացիային մասնակցելու հնարավորությունը։ Իսկ դրան հասնել՝ ասում է բանաձևը, հնարավոր է փոխոգկոմների աշխատանքի հետագա զարգացմամբ և Փոկերի ու կոոպերացիայի աշխատանքի համապատասխան կապի ուժեղացմամբ։

13-րդ կուս. համագումարի վորոշմամբ 24 թվի Սեպ. 25-ին, Ժողկոմխորհի և Համկենտգործկոմի կողմից հրատարակվեց դեկրետ, գյուղկոմիտեների անելիքների վերաբերյալ՝ «Գյուղական Հասարակական Փոխոգնության Կանոն» անվամբ։

ԳՅՈՒՂԱՑ. ՓՈԽԱԴԱՐՁ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Փոկերի աշխատանքի կենտրոնը պետք է հանդիսանա գյուղական թույլ տնտեսությունների բարձրացման խնդիրը, գլխավորապես թույլ տնտեսությունները քաշել կոոպերացիայի մեջ, ստեղծելով կոլեկտիվ աշխատանքի հասարակ ձևեր։ Այդ նպատակով կոմիտեները՝ պետք է անզոր տնտեսությունների համար արտոնության միջոցներ գտնեն, ժամանակելով այն չքավոր տնտեսությունները, վորոնց պետք է տրվի վարկ այլև նրանց համար անդամակցական փայեր մտցնել կոոպերա-

ցիան։ Վորպեսզի պաշտպանեն թույլ տնտեսությունների շահերը, Փոկերը պետք է մասնակցեն կոոպերատիվների անդամների ընդհանուր ժողովներին։ Զբաղվորների և միջակների ազդեցությունը կոոպերատիվներում ապահովելու համար, կոմիտեները կոմ-ֆրակցիայի ղեկավարությամբ և նրա հետ սերտ կապ պահպանելով, պետք է ստեղծեն կոոպերացիայում չքավորների և միջակների խմբակցություններ։

Վոչ պակաս կարևոր միջոցներից մեկն է հանդիսանում հասարակ ընկերությունների կազմակերպումը, վորը հնարավորություն կտա գյուղատնտեսական մթերքների միասնական վաճառման, գյուղատնտեսական առարկաների պատրաստելուն՝ արտադրման և սպառման նպատակով, (ընկերություններ՝ կանեփի վաճառման, լավագույն սերմերի, տրաքտորների, կալսիչների գնման), հասարակական միջոցների կազմակերպության (գյուղական տնտեսությանն ծառայող ջրաղացներ, ձիթհաններ), կոլլեկտիվ աշխատանքի հասարակ ձևերի կազմակերպությանը (հասարակական ցանքսեր կոմիտեների ֆոնդի համար, այգիների և բանջարանոցների շահագործումը, կենդանի և մեռյալ գույքերի միասնական ոգտագործումը)։

Ինչպես մատնանշեց 13-րդ կուս-համագումարը Փոկերի գործունեության մեջ առաջնակարգ տեղ պետք է բռնի՝ թույլ տնտեսություն ունեցող գյուղացիների առաջ քաշումը խորհրդային և հասարակական որգաններում։ Պետք է աջակցել նույն թույլ տնտեսություն ունեցողներին անդամակցելու կոոպերացիայում, ոգնել հողաշինարարության նոր միջոցներով բարձրացնելու տնտեսությունը։ Այլև արտոնություններ տրվի հարկերի գանձման ժամանակ թույլ տնտեսություն ունեցողներին։

Վոչ պակաս դեր պետք է կատարեն կոմիտեներն իրենց անդամներին իրավական ոգնություն ցույց տալու գործում։ Հետևել պետության կողմից տրված արտոնությունների ու առավելությունների իրագործմանը։ Պաշտպանել նմաններին՝ կուլակների հետ սարկական պայմաններ կնքելու դեպքում, որինակ՝ յերբ հողամասերը տրվում են կապալով, յերբեմն հանել բատրակուհուն գաղտնի պահող կուլակին, դեղջկուհի մոր և մանկան պաշտպանման գործում—հողաբաժանման և ապահարզանների դեպքերում։ Համաձայն նոր կանոնադրության, կոմիտեները հարկ յեղած դեպքում, պետք է դուրս գան պաշտպանելու իրենց անդամների իրավական շահերը։

Կոմիտեների գործունեության մեջ և մտնում նաև գյուղի կուլտուրական մակարդակի բարձրացումը, աջակցել իր անդամների միջից անգրագիտության վերացմանը, ցույց տալ դպրոցներին, հիվանդանոցներին, խրճիթ-ընթերցարաններին, մուրներին նյութական աջակցություն։

Փոխոգկոմները բացի այդ աշխատանքներից, ունեն նաև մի շարք այլ պարտականություններ իրենց անդամների նկատմամբ, վորոնց շնորհիվ գեղջկուհու և գյուղացու աշխատանքն ու կյանքը շատ խնդիրներում թեթևանում են։ Այդ բոլոր պարտականությունները ամփոփված են կոմիտեների կանոնադրության մեջ։ Փոկերի կանոնադրության կարևոր կետերից մեկն է հանդիսանում փոխոգնությունը կազմակերպել գյուղական ուժերով, կոլլեկտիվ կամավոր անդամակցության հիմունքներով։

Համաձայն Փոկերի նոր կանոնադրության՝ ընկերության հիմնադրումներ կարող է լինել գյուղի հասարակության հոժար կամքով և կազմակերպվել կարող է միայն այն քաղաքացիների ընդհանուր ժողովի վորոշմամբ (գյուղերում—գյուղական համայքների), վորոնք ըստ խորհր. որենսդրության ոգտվում են ձայնի իրավունքից։

Առանձին քաղաքացիների մասնակցությունը փոխոգկոմներում՝ յերբ վերջինս ստեղծվել և ընդհանուր ժողովի վորոշմամբ, անհրաժեշտ է ու պարտադիր և նամանավանդ գեղջկուհու շահերի տեսակետից, վորպեսզի նա ել ցույց տա իր մասնակցությունը։

Ինչպես մատնանշել է կուս. 13-րդ համագումարը, գյուղական փոխոգկոմների աշխատանքի հաջողության գրավականը պետք է կայանա նրանում, վոր Փոկերը պետք է աշխատեն կապել թույլ և միջակ տնտեսություն ունեցող գյուղացիներին։

Այդ մոմենտը ըստ նոր կանոնադրության, պետք է կարմիր թելով անցնի կոմիտեի վողջ աշխատանքով։ Նման միությունների կազմակերպման համար հող կա, դա կայանում է նրանում, վոր չքավոր և միջակ գյուղացությունը հետաքրքրություն է ցույց տալիս դեպի կոմիտեների աշխատանքը։ Զբաղվորը շահագրգռված է կոմիտեի աշխատանքով, վորովհետև վերջինս իրեն հիմնական նպատակ է դնում ոգնել չքավորության։

Միջակ գյուղացին, նույնպես շահագրգռված է գյուղկոմների աշխատանքով, վորովհետև վերջինիս միջոցով միայն նա կարող է ստանալ՝ մի շարք իրեն անհրաժեշտ արտոնություններ և բացի այդ, Փոկերի ոգնությանը նա կարող է դիմել անբերրիության, հիվանդության, տարերային ընդհանուր աղետների և այլ դեպքերում։

Այն բոլոր ոգնությունը, որպիսին ստանում է կոմիտեյից գյուղացին, հավասարաչափ պետք է ստանա և գեղջկուհին, որպես հավասար իրավունքներով ուժված միևնույն ընկերության անդամ։

Ընտանեկան փոխառության բաշխումը վատ է յեղել կազմակերպված, դեպքեր են յեղել, յերբ փոխառությունը տրվել է ցանքսի սեզոնը վերջանալուց հետո. թվելով Անդր. Սոց. Ֆ. Խ. հանրապետություններում գոյություն ունեցող այս թերությունները, Փոկերի աշխատանքի նկատմամբ՝ հրահանգչուհու առաջ մեծ խնդիրներ են դրվում, Փոկերի աշխատանքի բարելավման գործում։

Այդ աշխատանքում առաջին հերթին ոգնող պետք է հանդիսանա շրջ-կազմակերպչուհին, որպես գեղջկուհիների մեջ անմիջական աշխատող անձնավորություն։

ՇՐՋ-ԿԱԶՄԱԿԵՐՊԶՈՒՀՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այդ գործում շրջ-կազմակերպչուհու առաջնակարգ խնդիրն է՝ մոտեցնել իրեն փոխոգկոմներում աշխատող գեղջկուհիների ակտիվին, բազմակողմանի ուսումնասիրել այդ ակտիվը, ուսումնասիրել նրանց աշխատանքն ու պայմանները, որոնցում աշխատում են կոմիտեների անդամ-գեղջկուհիները։

Գեղջկուհիների ակտիվը բազմակողմանիորեն ուսումնասիրելը կոգնի շրջ-կազմակերպչուհուն, պարզել և հետագայում վերացնել այն պատճառները, որոնք խանգարում են նրանց աշխատանքի հաջող ընթացքին։ Նման արգելաբեր պատճառներ են հանդիսանում Փոկերի անդամ-գեղջկուհիների անգրագիտությունը, իրանց հանձնարարված աշխատանքի մասին լրիվ հասկացողություն չունենալը, իրանց ընտրողների հետ ունեցած թույլ կապը և այլն։ Հաճախ պատահում է նաև, որ Փոկի անդամ-գեղջկուհին անուշադիր վերաբերմունք չե ցույց տալիս գեղջկուհիների հարցումներին ու պահանջներին և այսպիսով կորցնում է գյուղի ընակչության համակրանքն ու վստահությունը։ Այդ բացերի վերացնելը հեշտ խնդիր չե. բայց հենվելով բջիջի ուժերի և գյուղական զանգվածի հասարակության վրա, համենայն դեպս շրջ-կազմակերպչուհին կարող է որոշ աշխատանք կատարել։ Նա պետք է ոգնի գեղջկուհիներին, լիկվիդացիայի յենթարկելու իրենց անգրագիտությունը, ոգնի նրանց քաղաքական զարգացման գործին, կապելով նրանց բջիջի և պատգամավորական ժողովների հետ։ Պատգամավորական ժողովների միջոցով՝ շրջ-կազմակերպչուհին առանձին աշխատանք պիտի տանի կապ հաստատելու Փոկերի անդամ-գեղջկուհիների հետ։ Գեղջկուհիների աշխատանքը Փոկերում կգա ամրացնելու այդ կապը, յեթե միայն Փոկերի անդամ ընտրված գեղջկուհիները հանդիսանում են գեղջկուհիների հիմնական մասսայի կարիքների ու պահանջների արտահայտիչը։ Գեղջկուհին ել իր հերթին պիտի աշխատի Փոկերի ունեցած միջոցները գործադրել գեղջկուհու կենցաղի բարելավման համար, նրանց տնտեսությունը և կուլտուրական մակարդակը բարձրացնելուն։ Ամեն կերպ պետք է աշխատել, որ Փոկերը հատկացնեն իրենց ֆոնդերից պետք յեղած միջոցները, մսուրներ, մանկական հրապարակներ, խորհրդատու կայաններ, ծննդաբերների մահճակալներ կազմակերպելու, բատրակուհիների, վորբևայրիների և կարմիր բանակայինների յերեխաներին դպրոց ուղարկելու ծախսերը հոգալ։ Կոմիտեներում աշխատող գեղջկուհիների հեղինակությունը բարձրացնելու նպատակով, շրջ-կազմակերպչուհին պետք է ձգտի, որպեսզի այդ գեղջկուհիները սիստեմատիկ կերպով հաշվետու լինեն իրենց աշխատանքի համար համայքների, փոխոգկոմների պլենումների և կոմիտեների համագումարների առաջ։

Շրջ-կազմակերպչուհին պետք է ոգնության գա գեղջկուհիներին ինչպես նրանց առանձին հանձնարարությունների կատարման, այնպես և նրանց ամբողջ աշխատանքի հետ ծանոթացման գործում. Այդ նպատակով նա պետք է հրավիրի շրջանում փոխոգկոմների անդամ-գեղջկուհիների առանձին խորհրդակցություններ, փոխոգկոմների աշխատանքները ղեկավարողների հետ միասին, որտեղ քննության պիտի առնել նրանց աշխատանքին վերաբերող հետաքրքիր հարցերը։ Շրջ-կազմակերպչուհին պետք է աշխատի Փոկերի կին-անդամներին ծանոթացնել նոր կանոնադրության և կուսակցության ու խորհրդային որգանների վորոշումների հետ՝ փոխադարձ ոգնության վերաբերյալ։

Յեթե կազմակերպիչը գործը կարողանա դնել այնպես, որ փոխոգկոմի անդամ-գեղջկուհին դառնա հեղինակավոր և ոգտակար աշխատող՝ հասարակության և փոխոգկոմի համար, դրանով իսկ կ՝ստեղծվի կոմիտեյի և ընակչության կողմից դեպի գեղջկուհիները այնպիսի մի տրամադրություն, որը կարող է միանգամայն ապահովել նրա հետագա աշխատանքների հաջողությունը։

Բայց շրջ-կազմակերպիչը վոչ միայն պիտի ստեղծի գեղջկուհիների համար բարենպաստ պայմաններ Փոկերում, բարձրացնելով նրանց նշանակությունը—այլ նրա նպատակը պիտի լինի հետևել

Փոկերի աշխատանքի աճմանն և գեղջկուհիների հետաղայում առաջ քաշման գործին, ինչպես խորհրդային, այնպես և կոոպերացիայի գծով։

Գեղջկուհիներից Փոկերի աշխատակիցներ պատրաստելու նպատակով՝ շրջ-հրահանգչուհին պետք է հետևի, վորպեսզի Փոկերի աշխատանքից վոչ մի բան անծանոթ չմնա այնտեղ աշխատող գեղջկուհու համար։

Այդ նպատակով անհրաժեշտ է գեղջկուհիներին քաշել հետազոտական աշխատանքներում, ձգտել վորպեսզի գեղջկուհիները ուղարկվեն նույնիսկ համամիութենական համագումարներին. (վորոնք արտահայտում են գյուղացության հիմնական զանգվածի տրամադրությունը) ուղարկել այդպիսիներին Փոկերի բարձրագույն որգաններում զեկուցումներ անելու իրենց աշխատանքների մասին։ Շրջ-հրահանգչուհին պիտի ոգտագործի փոխոգկոմների վերընտրական կամպանիաներում ու կոմիտեներում աշխատող կանանց, վորպեսզի հնարավոր լինի նրանց կազմում անցկացնել նաև գեղջկուհիներին։ Անշուշտ դա հնարավորություն կտա առաջ քաշելու Փոկերի աշխատանքում գեղջկուհիների նոր տարրեր։ Կոմիտեների համար աշխատողների նոր կադր պատրաստելու և պրակտիկանտակաների աշխատանքների զեկավարման գործը կանոնավորելու նպատակով, հրահանգչուհին պետք է առաջ քաշի աշխատանքների մեջ՝ կոմիտեյի անդամ ակտիվ գեղջկուհիներին։

Ցեվ վերջապես շրջ-հրահանգչուհու պարտքն է կոմունիստական կուսակցության շարքերը քաշել ավելի նվիրված և գիտակից՝ կոմիտեյի անդամ գեղջկուհիներին։

Կոմիտեյի անդամ-գեղջկուհիների՝ կուսակցության շարքերում լինելը ավելի շուտ կ՝իրականացնի գյուղացության լայն մասսաներում ընկ. Լենինի պատգամները հասարակական փոխադարձ ոգնության մասին։

ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ստեղծել այնպիսի պայմաններ և այնպիսի ապպարատ, վոր խորհրդային պետության մեջ ապրող յուրաքանչյուր քաղաքացի չը խանգարի՝ այլ ճշտությամբ իրագործի կյանքում կոմունիստական կուսակցության և խորհրդային իշխանության քաղաքականությունը. սա կը հանդիսանա ամենալավ միջոցը հեղափոխական որինականության ամրացման և գրավական կը լինի սոցիալիզմի իրագործման։ Իսկ վորպեսզի ստեղծել նման պայմաններ, անհրաժեշտ է քաղաքացիներին ընդհանրապես զինել գիտությամբ և մասնավորապես խորհրդային որենքների գիտությամբ։ Պետք է գիտենալ խորհրդային որենքները նրա համար, վորպեսզի չխախտել այն անգիտակցաբար. պետք է գիտենալ խորհրդային որենքները, վորպեսզի ճշտությամբ կատարել դատական պարտականությունները, վոր կուսակցությունը և իշխանությունը դնում են խորհրդային պետության աշխատավորության վրա։

Հեղափոխական որինականության ամրապնդման գործում դատարանը ունի հսկայական նշանակություն. Դատարանը հաճախ քննում է այնպիսի գործեր, վորոնք ունեն հասարակական և կենցաղային նշանակություն, որինակ՝ վանումներ և այլ պաշտոնական հանցագործություններ, սրիկայություններ (խուլիգանություն), աշխատանքի պաշտպանության կոդեկսի խախտում, յերեխաներին ապրուստ տալու հարցեր և այլն։

Այդ բոլոր դեպքերում էլ, դատարանի վորոշումը մասսաների դաստիարակման տեսակետից ունի խոշոր նշանակություն և նպաստում է բանվորա-գյուղացիական պետության շինարարության գործին։

ԱՇԽԱՏԱՎՈՐ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ՝ ԴԱՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աշխատավորության մասնակցությունը Ժող-դատարանի աշխատանքում չափազանց կարևոր է։ Ահա թե ինչ և ասված այդ մասին կուսակցության ծրագրի 11-րդ կետում՝ «Համամիութենական կոմ. կուսակցությունը պիտի ձգտի, վորպեսզի բնակչության աշխատավորությունը առաջ քաշվի դատարանական պարտականությունների կատարման գործում»։ Աշխատավորության դատարանական աշխատանքում մասնակցության վոր ձևն է ավելի տարածված։

Բոլորին էլ հայտնի յե, վոր Խորհ. միության մեջ Ժող-դատարանը, ինչպես և քննիչն ու դատախազը լինում են աշխատավորներից. բայց դեռ չի կարելի ասել, վոր այդ ասպարիզում առաջ են քաշված հասարակության լայն խավերը։ Չի կարելի ասել այն պարզ պատճառով, վոր մեզ մոտ յերկու շրջանի համար միջին թվով ընկնում է մի դատավոր, իսկ մի գավառի համար ունենք առայժմ մի դատախազ միայն։ Աշխատավորների դատարանական գործում մասնակցելու տարածված ձևը հանդիսանում

ե ատենակալությունը։ Այստեղ կանչվում են արդեն վոչ թե մի մարդ, այլև շրջանի մասշտաբով՝ մոտավորապես 100-150 հոգի, վորովհետև Ժող-ատենակալներից յուրաքանչյուրը հրավիրվում և մի որվա համար։ Ժող-ատենակալները դատական գործերի լուծման ժամանակ ոգտվում են այն բոլոր իրավունքներից, վորոնցով ոգտվում է Ժողովրդական դատավորը։ Ըստ եյության Ժող-ատենակալները հանդիսանում են ժամանակավոր դատավորներ։

Կինը ինչպես այլ բնագավառներում, այնպես և հիշյալ բնագավառում, ունենալով նույն իրավունքները ինչ վոր տղամարդը, նույնպես կարող է ընտրվել Ժող-ատենակալ։ Սակայն մինչ այժմ աշխատավորուհին շատ քիչ է մասնակցել դատական աշխատանքում, այդ են ասում մեզ՝ գավառներից ստացված տեղեկությունները։ Գյուղական մասշտաբով ատենակալների ընդհանուր թվի 20 տոկոսը կազմում են գեղջկուհիներ։

ՇՐՋ-ԿԱԶՄԱԿԵՐՊԻԶԸ ՊԵՏՔ Է ԱՋԱԿՑԻ ԺՈՂ-ԱՏԵՆԱԿԱԼՆԵՐԻ ԹԻՎԸ ՇԱՏԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾԻՆ

Ի՞նչ միջոցներ գործադրել վորպեսզի գեղջկուհիների հետաքրքրությունը բարձրացնել դեպի այդ կարևոր հասարակական աշխատանքը։ Յեվ ապա ինչ միջոցներով ավելացնել կին Ժող-ատենակալների թիվը։

Ժող-ատենակալները ընտրվում են քաղաքում գործարանային կոմիտեների, իսկ գյուղում և շրջաններում գործկոմների և գյուղխորհուրդների կողմից կրող բաշխումների համաձայն։ Նրա ցուցակները կազմվում են յուրաքանչյուր տարին առ 1-ն դեկտեմբերի։ Ուրեմն շրջ-հրահանգչուհու պարտականությունն է, վորպեսզի այդ ցուցակներում գյուղացիների թվի հավասար առաջ քաշի նաև գեղջկուհիների։ Ժող-ատենակալներ ընտրելուց հետո այդ ցուցակները ուղարկվում են ի հաստատություն գավառային հանձնաժողովին, վորը կազմված է գործկոմի անդամից, դատախազից և Ժող-դատավորից։ Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, վոր ատենակալների ընտրությունը կատարվում է տարին մի անգամ, ուստի հրանգչուհին պետք է աշխատի գեղջկուհիների մեծ մասին ատենակալների ցուցակում մտցնելու։

Շրջ-կազմակերպչուհին պետք է ուսումնասիրի և կիրառի կյանքում Արդժողկոմի համապատասխան շրջաբերականը, վորը պարտադրում է դատական որգաններին՝ միջոցներ ձեռք առնել կին-ժողովրդական ատենակալների թիվը շատացնելու։

ԺՈՂ-ԱՏԵՆԱԿԱԼՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԳԻՏԵՆԱՆ ԻՐԵՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՈՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Բայց բավական չե միայն Ժող-ատենակալուհու ընտրվելը, կարևորն այն է, վորպեսզի գեղջկուհին իրոք կենդանի մասնակցություն ունենա դատարանի աշխատանքներին։

Խորհրդային իշխանությունը դատական աշխատակիցների — դատախազների և դատավորների վրա մեծ պարտականություն ու պահանջ է դնում, վորպեսզի վերջիններս դուրս գան բանվորա-գյուղացիական մասսայական ժողովներում զեկուցումներ և զրույցներ տալու, դատարանի աշխատանքների, Ժող-ատենակալների պարտականությունների, իրավունքների և Խորհրդային Որենսդրության մասին։ Ժող-ատենակալների մեջ այդ աշխատանքը առաջին հերթին դատական աշխատակիցները պետք է տանեն։

Այս ասպարիզում՝ մի քանի տեղերում վորոշ աշխատանք կատարվում է։ Սակայն կարելի յե վորոշակի ասել, վոր այդ զրույցները կրում են պատահական բնույթ և ատենակալներին վերոհիշյալ աշխատանքների հետ ծանոթացնելու գործը տարվում է վոչ ամեն տեղ. նամանավանդ գյուղերում բոլորովին աչքաթող է արված այդ աշխատանքը։

Շրջ-հրահանգչուհին իր գործի հաջողության համար, պետք է յուր բոլոր աշխատանքները կապի Ժող-դատավորների, դատախազների և նրա ոգնականների հետ։ Ժող-ատենակալ ընտրված գեղջկուհին սիրով կը հաճախի այն ժողովին, ուր նրան կը ծանոթացնեն դատական որենքների և պարտականությունների կատարման հետ։ Սխալ կը լիներ կարծել, վոր այդ բոլորի հետ ծանոթացնելը կարող է սահմանափակվել միայն առաջին զրույցով, ուր ատենակալներին բացատրում են իրենց պարտականությունների և իրավունքների մասին։ Անհրաժեշտ է նաև ատենակալներին ծանոթացնել աշխատանքներին մասնակցելու կանոնների հետ, այն է՝ վորքան ժամանակվա համար են ընտրվում իրենք և ինչպիսի իրավունքներով են ոգտվում դատական նիստերի ժամանակ։ Առանձնապես պետք է ընդգծել, վոր գործի քննություն և վորոշում հանելու ժամանակ նրանք ոգտվում են դատավորի հետ միասին՝ նույն իրավունքներով։ Կին-ատենակալը իրավունք ունի մեղադրյալին և վկաներին տալ հարցեր։ Վորոշում հանելու ժամանակ, կին-ատենակալը վճռական ձայն ունի—ինչ-

պես դատավորը։ Ատենակալներին պետք է բացատրել այն հսկայական պատասխանատվության մասին, որպիսին ունեն դատավորները՝ յուրաքանչյուր վճիռ կայացնելիս։

Գործի քննության ժամանակ կողմնապահությունից խուսափելու համար, ժող-ատենակալը իրավունք չունի մասնակցելու այն դատավարության, ուր դատապարտվողն իր բարեկամն է կամ մի անձնավորություն, որի հետ նա ունի թշնամական հարաբերություն։

Ատենակալներին պետք է ծանոթացնել թեկուզ և ամենահասարակ, բայց դատական աշխատանքում կարևոր գիտելիքների հետ։ Պետք է բացատրել, թե որպիսի հանցագործությունները մեր պետության շահերի և անհատ աշխատավորի իրավունքների պաշտպանման տեսակետից յանթարկվում են խիստ պատժի։ Որինակ՝ վատնումները, կաշառակերությունը, անասնագողությունը, մարդասպանությունը, բռնաբարությունը, հրդեհումներն և այլն։

Բացատրել Խոր. դատարանի՝ քաղաքացիական մասի այն խնդիրները, որտեղ քննվում են քաղաքացիների մեջ ծագած գույքային, կապակով վերցված իրերի, ապրուստի բռնագանձման վեճերը և այլն (նման գործերը կոչվում են քաղաքացիական)։

Ավելի կարևոր նշանակություն ունեն ապրուստի բռնագանձման, ընտանեկան բաժանումների և նման գործերի քննության ընթացքում գեղջկուհու մասնակցությունը։ Անշուշտ ժող-ատենակալուհին նման գործերի քննության ժամանակ հանդես կ՝գա որպես գեղջկուհու պաշտպանը, այն որինական իրավունքների սահմանում, որ ավել և նրան որենքը։

Ի հարկե դեռ կան հետամնաց աշխատավոր կանայք, որոնք չեն կարող ոգտվել տրված իրավունքներից։ Պետք է լուսավորել այդպիսի կանանց։ բացատրել նրանց ազատագրող նոր որենքների ոգտակարությունը։

Ժող-ատենակալուհին կ՝կարողանա դատարանի միջոցով պայքարել հին կենցաղի մնացորդների դեմ և պաշտպան հանդիսանալ աշխատավոր կնոջ իրավունքներին։

ԺՈՂ-ԱՏԵՆԱԿԱԼ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՈՐԵՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Դատարաններում հաճախակի քննվում են մայրերի հարցերը, որոնք պահանջում են յերեխայի համար ապրուստի միջոց։ Ժող-ատենակալներին պետք է բացատրել, որ համաձայն խորհրդային որենքի՝ ծնողները (հայրը և մայրը) պարտավոր են տալ բոլոր դեպքերում՝ իրենց յերեխաներին ապրուստի միջոց։ Բոլորովին միևնույն է, թե այդ ամուսնությունը ցուցակագրված և յեղել ԶԱԳՍ-ում թե վոչ։ իսկ այն գործի քննության ժամանակ կարևոր է միայն հաստատել՝ իսկապես հայրն է այն անձնավորությունը, որից կատարվում է բռնագանձումը։

Ամուսինների բաժանված լինելը չի կարող անդրադառնալ յերեխայի ապագայի վրա։ Ծնողները պարտավոր են՝ միշտ ել հոգ տանել յերեխաներին և խնամել նրանց։ Ի հարկե դատական վորոշում կայացնելու ժամանակ, աչքի առաջ պետք է ունենալ, թե այն անձնավորությունը որից պետք է կատարել բռնագանձումը հնարավորություն ունի վճարելու։

Վոչ միայն յերեխաները, այլ նույնիսկ կինը կամ տղամարդը, աշխատանքի անընդունակ յեղած դեպքում, իրավունք ունեն ստանալու ապրուստի միջոց։ Ժող-ատենակալը պետք է հետևի վորպեսզի այն ծնողները, որոնք հնարավորություն ունեն պահելու իրենց յերեխաներին, բայց գցում են նրանց կամայականության գիրկը. մատնելով սովի, հիվանդության—այդպիսիները յենթարկվեն քրեական պատասխանատվության։ Նման գործերը համարվում են վոճրագործություն և զրանով մեղադրվող հայրը կամ մայրը, կարող են դատապարտվել տուգանքի, իսկ չարամտության դեպքում՝ ազատազրկման մինչև 6 ամիս ժամանակով։

Ապահարզանները այժմ սովորական յերևույթ են դարձել։ Հին ժամանակներում ապահարզան տալը ամուսինների համար անհնարին եր, թեկուզ և ընտանեկան կյանքի պայմանները անտանելի լինեին։ Հիմա ուրիշ բան է, տարկություն չկա այլևս։ Բայց կա և ուրիշ միջոց նման յերևույթների դեմ առնելու համար։ Ապահարզանների հետևանքով, դատարաններում ծագում են գույքերի բաժանման նորանոր գործեր։ Ահա այստեղ է, վոր ժող-ատենակալը պետք է իմանա մեր որենքները, վորպեսզի նման գործերի քննության ժամանակ, տա ճիշտ լուծումն։ Հիմնական կանոնը կայանում է նրանում, վոր կնոջ և տղամարդու իրավունքները՝ այն բոլոր գույքերի վրա, որոնք ձեռք են բերված իրենց աշխատանքային կյանքում—հավասար պիտի բաժնվեն։

Գյուղում հողից բաժին ստանալու իրավունք ունեն ընտանիքի յուրաքանչյուր անդամը, որի տարիքը հասնում է 18-ի—հեռևապես և կինը։ Հողաբաժանման գործում՝ գյուղացիների հաժարակամ համաձայնության չեղած դեպքում, վեճը լուծվում է հողային հանձնաժողովներում։ Անշուշտ ժող-ատենակալին պետք է ծանոթացնել ամուսնության, ընտանիքին և խնամակալության վերաբերող մեր բոլոր որենքների հետ։

ԺՈՂ-ԱՏԵՆԱԿԱԼԸ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱ ԲԱՏՐԱԿՆԵՐԻՆ ՅԵՎ ԲԱՏՐԱԿՈՒՀԻՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՄԱՆ ՈՐԵՆՔՆԵՐԸ

Այժմ, յերբ մենք թուլատրել ենք հողամասերի կապալով տալու լայն հնարավորությունը, ի հարկե բատրակների և բատրակուհիների թիվը կսկսի աճել։ Բատրակների և բատրակուհիների շահերը պաշտպանելու համար, գյուղական և նույնիսկ ամենափոքր տնտեսության մեջ, վարձու աշխատանքի ոժանդակության մասին հրատարակված են ժամանակավոր կանոններ։

Այդ կանոններով նախատեսվում է բատրակների հանգստի օրերը, նրանց իրավունքը հիվանդության դեպքում և այլն։ Դատարանը հաճախ հարկադրված է լուծել նման հարցեր, վորոնց մեջ առենակալուհին՝ յեթե ինքը բատրակուհի է, կարող է ամենից լավ պաշտպանել գյուղում ճնշված բատրակուհու շահերը, վորովհետև նա ստիպված է միայն դատարանի միջոցով ստանալ իր իրավունքները։

Ժող-ատենակալուհու հետ տարվելիք աշխատանքի հիմնական խնդիրը կայանում է՝ գյուղական տնտեսության մեջ վարձու աշխատանքին վերաբերվող օրենքների (ժամակավոր կանոնների) հետ ծանոթացնելը, վորպեսզի նա կարողանա հաջող կերպով պաշտպանել բատրակի և բատրակուհու շահերը դատարանում։ Այդ կանոնները սահմանում են՝ թե ինչքան դրամ և ստանալու բատրակը, նրա բանվորական ժամերի քանակը, վարձողի պարտականությունը աննդալից կերակուր տալու մասին—ինչով վոր ընտանությունը աննդալից կերակուր տալու մասին—ինչով վոր ընտանիքն և կերակրվում և այլն։ Բացի այդ ժամանակավոր կանոններից, հրատարակված է նաև մի հրահանգ։

Այդ հրահանգը պարզաբանում է, վոր վարձելու բոլոր դեպքերում, անհրաժեշտ է բատրակի և վարձողի միջև կնքել գրավոր պայմանագիր, վորը ապահովում է գյուղացության չքավոր մասի շահերը։

ՉՔԱՎՈՐԻ ՅԵՎ ՄԻՋԱԿԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒՄԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Ժող-դատարանը պետք է ուշադիր վերաբերվի դեպի այն գործերի քննությունը, ուր շոշափվում են չքավոր և միջակ գյուղացության շահերը։

Վորբևայրի-գեղջկուհին և կարմիր բանակայինի կինը, շատ հաճախ են ընկնում իրենց փոխ-տվող գյուղական հարուստի թակարդի մեջ։ Դատարանում այդպիսի գործերի քննության ժամանակ պետք է աչալրջությամբ նայել, վորպեսզի գեղջկուհու օրինական իրավունքները պաշտպանվեն, հիշելով՝ վոր մեր օրենքներն արգիլում են ամեն տեսակ ստրկական պայմանագիր կնքելը։

Դատական վճռի ժամանակ պիտի հիշել, վոր վճիռ չի կարելի կայացնել այն գույքի նկատմամբ, վոր անմիջական գործածության առարկայ է։ Չի կարելի վերցնել այն գործիքը, վորով պարտապանը իր գոյության միջոցներն և հայթայթում (կնոջից—կարի մեքենան, կոշկակարից—նրա գործիքները և այլն)։ Զանազան տեսակի գործեր են պատահում, վոր դժվար և նախատեսել։

ԴԱՏԱԿԱՆ-ՀՈՂԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Բացի ժող-դատարանից, գեղջկուհու մասնակցությունը կարևոր է նաև հողային հանձնաժողովներում։ Դա նույն դատարանն է, վորտեղ քննվում են գյուղացության համար ավելի կարևոր—հողային գործերը։ Ամեն մի շրջանում կա շրջ. հող-հանձնաժողով։

Շրջ-հող-հանձնաժողովի կազմում մտնում են՝ նախագահը, վորին նշանակում է շրջ-գործկոմը իր անդամներից, իսկ յերկուսը ընտրվում են խորհուրդների շրջ. համագումարում։

Զավազանց կարևոր է, վոր հանձնաժողովի կազմում լինի մի գեղջկուհի։ Համամիութենական կենտգործկոմը պարտավորեցրել է դատական-հողային հանձնաժողովներին, ընտրությունների ժամանակ մտցնել նրանց կազմի մեջ նաև կանանց։ Թե վորքան կարևոր է դա, նկատվում է այն բազմաթիվ նամակներից ու թղթակցություններից, վոր ստացվում են գյուղի թղթակիցների կողմից։

Ժող-դատարանների և հող-հանձնաժողովների աշխատանքի փորձառությունը ցույց է տվել գեղջկուհիների իրավունքների խախտման յերևույթները։ Դատարանում գույքի բաժանման գործերի քննության ժամանակ, դեպքեր են յեղել, յերբ կանայք հեռացվել են ընտանիքի ուտողների ընդհանուր թվից, կամ գույքի անարդարացի բաժանումն տղամարդու և կնոջ ապահարզան տալու դեպքում, օրինակ՝ կնոջը տան փոխարեն տրվել է մի կարպետ, կամ հանելիք կովի տեղ տրվել է վոչխար։

Ի հարկե, յեթե հողային հանձնաժողովի կազմում լինի մի գեղջկուհի, այն դեպքում նման տեսակի յերևույթներ ավելի քիչ չափով կը կատարվեն։

Այս բոլորից յերևում է, թե վորպիսի հսկայական նշանակություն ունի գեղջկուհու ակտիվ մասնակցությունը զատարանի աշխատանքում։ Շրջ-կազմակերպչուհին պետք է աջակցի, վորպեսզի գեղջկուհին՝ հասարակական աշխատանքի այդ կարևոր բնագավառում առաջ ընթանա։

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀՈՂԱՅԻՆ ՈՐԳԱՆՆԵՐՈՒՄ

Գյուղում խորհրդային իշխանության հողային քաղաքականությունը վարողներ հանդիսանում են հողային որգանները։

Գյուղական անտեսության վերաբերող կենսական և հարվածային բոլոր խնդիրները կենտրոնացված են հող-բաժնում։

Հող-բաժնում են լուծվում բոլոր այն գործերն ու հարցերը, վորոնք վերաբերվում են գյուղի հողաշինարարության, բարենորոգման, գյուղի շինարարության, խճուղային գործին, գյուղատնտեսական և անասնաբուժական ոգնության, գյուղատնտեսության բարվոքման ու բարձրացման և այլն խնդիրները։

Հող-որգանների միջոցով և կառավարվում մարգագետինների և հողերի ֆոնդի բաշխումը, բաժանում են սերմնավարկեր, հրատկում անտառային գործի բաշխման վրա և հող-բաժինը լուծում է գյուղացիական մի շարք հարցեր։

Դժբաղդաբար մինչև այժմ գեղջկուհին մասնակցություն չի ցույց տվել հող-որգաններում։ Զարմանալի յե, վորպեսզի գեղջկուհին մասնակցի հող-բաժնի գործնական աշխատանքներին։ Գյուղում գեղջկուհին ավելի ծանրաբեռնված է, քան գյուղացին։

Տնտեսության մի քանի ճյուղերը գտնվում են նրա անմիջական հսկողության տակ, որինակ՝ անասնապահություն, թռչնապահություն, բանջարագործություն և այլն։ Այդ իսկ պատճառով, գեղջկուհին պետք է մասնակցի այն հիմնարկների աշխատանքներին, վորոնք ծառայում են գյուղական անտեսության հիմնական կարիքներին։ Գեղջկուհիներին այդ կազմակերպությունների աշխատանքների մեջ գրավելը՝ հանդիսանում է կուսակցության և միաժամանակ կազմակերպչուհու հիմնական խնդիրներից մեկը։

Շրջ-հրահանգչուհին սկսելով այդ աշխատանքը, պետք է մոտենա հողային որգաններին, վորովհետև առանց շրջ-կազմակերպչուհու մասնակցության, վերջիններս չեն կարող առաջ քաշել գեղջկուհուն գյուղատնտեսության շինարարության մեջ։ Գյուղում հող-շինարարությունը և ագրոպրոպագանդան ընդգրկում են

մասնագիտական մի շարք հարցեր, վորոնք կարող են ուղիղ լուսաբանվել միայն գյուղատնտեսի և հող-բաժնի աշխատակցի կողմից։

Շրջ-հրահանգչուհին պետք է գիտենա, վորքան գեղջկուհիներ կան շրջանում, քանիսն են իրենց անտեսությունը ինքնուրույն վարում—առանց տղամարդու ոգնության և ինչ դրության մեջ են գտնվում անտեսությունները։

Հրահանգչուհու պարտականությունն է խրճիթ-վարի ոգնությամբ կարգավորել ագիտ-պրոպագանդայի գործը խրճիթ-ընթերցարաններում. գրավել գեղջկուհիներին գյուղատնտեսական խմբակներում, յերիտասարդական գյուղատնտեսական դպրոցներում և ավելի ընդունակ գեղջկուհիներին առաջ քաշել ուսումը շարունակելու նպատակով։ Խորհրդային իշխանությունը՝ գյուղական անտեսությունը բարձրացնելու համար, գյուղացիներին տալիս է ոգնություն, բաժանում է սերմային նպաստներ, բաց է թողնում գյուղ-վարկ, աղնվացնում է անասունների ցեղը և գնում է գյուղատնտեսական գործիքներ. ուրեմն հրահանգչուհին պետք է հոգա, վորպեսզի նյութական այդ ոգնությունից, գեղջկուհիներն ևս կարողանան ոգտվել։

Հրահանգչուհու աշխատանքներից մեկն է նաև զարթեցնել գեղջկուհու գիտակցությունը, վոր նա մասնակցի գյուղական անտեսության բարձրացման գործին և առաջ քաշել նրան գյուղատնտեսական ընկերության մեջ ակտիվ աշխատանք տանելու համար։ Գեղջկուհիների լայն մասսաները պետք է հետաքրքրվեն խորհրդային իշխանության քաղաքականությամբ և այն միջոցների հետ, վորով պետությունը ցանկանում է բարձրացնել գյուղատնտեսությունը։

Գեղջկուհիներից ավելի ակտիվ տարրերին պետք է առաջ քաշել գեպի գյուղատնտեսական շինարարությունը—վորպես խորհրդի, գյուղ-կոոպերացիայի և արտելների անդամներ և վերջապես գյուղատնտեսության զանազան բնագավառներում, վորպես աշխատողների։

Հողային հանձնաժողովներում, վորտեղ լուծվում են գյուղատնտեսության, հողաբաժանության և հողային զանազան վեճերի վերաբերյալ հետաքրքիր գործեր, գեղջկուհիները պետք է իրենց ակտիվ մասնակցությունը ցույց տան։ Նա պետք է մասնակցի ինչպես անտեսությունների հետազոտման, գյուղատնտեսական հարկի և հողային զանազան տուրքերի չափի վորոշման գեպքում այնպես և վարկերի, զանազան նպաստների բաշխմանը, որինակի համար՝ սերմային նպաստներ, անտառից փայտ բաց թողնելու և այլն։

Շատ դեպքերում գեղջկուհիների մասնակցությունը վոչ միայն ցանկալի, այլ և անհրաժեշտ է, վորովհետև նրանք ավելի ծանոթ են վորբերի, վորբեվայրի և կարմիր բանակայինների կանանց կարիքներին։

Գեղջկուհիները պետք է ուշադրություն դարձնեն գյուղի բարենորոգման աշխատանքների վրա։ Ամենքիս հայտնի է, թե վորքան կեղտոտ են մեր գյուղերը։ Ջմեռը մեծ դժվարությամբ միայն կարելի է անցնել մեկ տնից մյուսը՝ ցեխի պատճառով, իսկ գարնանը կեղտոտությունից անտանելի հոտ է կանգնում գյուղում։ Գյուղական ջրհորների և աղբյուրների աղտոտ և վատ պատրաստված լինելը, հաճախ հանդիսանում է վարակիչ հիվանդությունների տարածման աղբյուր։ Գյուղական տները այնպես պետք է շինվեն, վոր նրանք հաճախակի չենթարկվեն հրդեհների։ Գյուղի մաքրությունը և շինարարությունը ավելի շատ կախված է գեղջկուհուց, դրա համար վոչ պակաս կարևոր է գեղջկուհու մասնակցությունը հող-բաժնի աշխատանքներին։ Մեծ աշխատանք պիտի տանել և պայքարել գեղջկուհիների կախարդության և մոտիպաշտության դեմ։ Հաճախ են պատահում դեպքեր, յերբ գյուղացու անասունը հիվանդանում է, դիմում են վոչ թե գյուղատնտեսին կամ անասնաբույժին, այլ գյուղական հեքիմներին (կոբխչի)։ Յեվ վորովհետև անասունների խումբը մեծ մասամբ գտնվում է գեղջկուհիների խնամքի տակ, այդ իսկ պատճառով, նրանք ավելի հեշտությամբ կարող են կռվել նախապաշարմունքների դեմ։ Հենց դրա համար էլ շրջ-կազմակերպիչը աչքաթող չպետք է անի շրջանի անասնաբուժական գործը, անասնաբուժի հետ կապ հաստատել, կախարդների և մոտիպաշտների դեմ պայքար մղել։ Վոչ պակաս կարևոր նշանակություն ունի գեղջկուհու աշխատանքը գյուղատնտեսության բարվոքման գործում։ Տվյալ շրջանի գյուղատնտեսության բարվոքման և զարգացման համար, շրջ-կազմակերպիչը պետք է ոգտագործի գյուղատնտեսին։

Գյուղական որգանները իրենց հերթին պետք է ստեղծեն բարենպաստ պայմաններ այն գեղջկուհիների համար, վորոնք առաջ են քաշված գործնական աշխատանքում, հեռացնելով բոլոր դժվարությունները, առաջ քաշելով նրանց պատասխանատու աշխատանքներում, գրավելով գյուղատնտեսական կոնֆերենցիաներին ու նրանցից ընդունակներին ուղարկել գյուղատնտեսական դասընթացներ, դպրոցներ և այլն։

Շրջ - կազմակերչուհու գործն է, ըստ հնարավորության

մեծ թվով գեղջկուհիներ գրավել դեպի հող-բաժին, վորտեղ նրանց աշխատանքը վոչ միայն կարևոր է հողային գործի բարվոքման համար, այլ և գյուղի ընդհանուր, կուլտուրական մակարդակի բարձրացման տեսակետից։

Գեղջկուհիներին հող-որգաններում աշխատանքի գրավելու գործում, հրահանգչուհին պետք է հենվի Հող-ժողկոմատի վորոշման վրա։

ՀՈՂԱՅԻՆ ՈՐԵՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԸ։

Հոկտեմբերյան հեղափոխությունը վոչնչացրեց կիսաճորտատիրական կապանքների մնացորդները, վորոնցում գտնվում էր գեղջկուհին։ Այժմ Հոկտեմբերից հետո, գեղջկուհին ոժտված է հավասար իրավունքներով։

Հողային որենսգիրքը (վորը ուժի մեջ է 1923 թ. դեկ. 1-ից) վերաբերվում է գյուղացիներին այնպես ինչպես գեղջկուհիներին։

Ինչումն է կայանում հողային որենսգրքի էությունը։

Ամենից առաջ, հողային որենսգրքի առաջին հոդվածը սահմանում է, վոր խորհրդային միության սահմաններում գտնվող բոլոր հողերը, ում տրամադրության տակ էլ գտնվելիս լինին, ով էլ վոր նրանցից ոգտվի և մշակի—կազմում են բանվորա-գյուղացիական պետության սեփականությունը։ Այլ խոսքով, վողջ հողը յենթարկված է աղգայնացման և գյուղական անտեսության աղատ աճման բոլոր խոչնդոտները վերացված են։

Կարևոր է մատնանշել, վոր ըստ հողային որենսգրքի 27-րդ հոդվածի, հողի գնումն ու վաճառումը, կամ պայմանական վաճառումը, նրա կտակելն ու նվիրելը և նույնպես գրավ դնելը՝ արգիլվում է։

Համաձայն հողային որենսգրքի, գոյություն ունի միայն աշխատանքային հող-ոգտագործումն և հողից ոգտվելու իրավունք ունեն միության բոլոր քաղաքացիները. ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք, առանց ազգի և դավանանքի խտրության։

ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Այժմ հող-ոգտագործման վերաբերյալ գեղջկուհին ոգտվում է միահավասար իրավունքներով գյուղացու հետ։ Բայց ինչպես վերաբերվել այն դեպքում, յերբ ընտանիքում աշխատող ձեռք չկա, այրի կինը ծանրաբեռնված է յերեխաներով և այդ տնտեսությունը հնարավորություն չունի մշակել իրեն հատկացրված հողը, այսինքն կարելի՞ է այդ արդյոք հողը կապալով տալ։

Այս, կարելի է։ 1925 թ. մայիսին կայացած՝ խորհուրդների 3-րդ համագումարը ընդառաջելով բնակչության չքավոր մասի շահերին և ի լուսն այն հոդվածների, որոնք կան հողային օրենսգրքում—վորոշեց հետևյալը՝ այն դեպքում երբ անզոր տնտեսությունը միջոցների և գույքի պակասության պատճառով, հնարավորություն չունի մշակել իրեն հատկացված հողը, նման տնտեսությունը կարող է տալ այդ հողը կապալով։ Հողը կապալով տալը վորքան ժամանակով է թույլատրվում։

Հող վարձու տալը թույլատրվում է վոչ ավելի այն ժամանակից, վոր պահանջվում է վարձած հողի վրա մեկ լրիվ սերմնափոխություն կատարելու համար, իսկ կանոնավոր սերմնափոխության բացակայության դեպքում, վոչ ավելի յերեք տարուց։ Բացառիկ դեպքերում, գավառային գործադիր կոմիտեի թույլտվությամբ վարձակալության ժամանակը կարելի է հասցնել մինչև 2 սերմնափոխության տեվողությանը, իսկ կանոնավոր սերմնափոխության բացակայության դեպքում՝ 6 տարուց վոչ ավելի։

Այսպիսով գեղջկուհին կարող է տնօրինել իր հողը և տալ այդպիսին ժամանակավոր կապալով։ Դրա հետ միասին գեղջկուհին պետք է հիշի, վոր հողային օրենքը խստիվ կերպով արգիլում է կապալի իրավունքը տալ յերրորդ անձնավորության։

Թույլատրվում է արդյոք, հողային օրենսգրքով՝ ոժանդակող վարձու աշխատանք։

Գեղջկուհու համար նույնպես կարևոր է գիտենալ թե ինչպես և հողային օրենսգիրքը նայում այդ հարցի վրա։

Ըստ օրենսգրքի 39-րդ հոդվածի, գյուղատնտեսության մեջ վարձու աշխատանքը թույլատրվում է։

ԿԱՆՈՆՆԵՐ ՎԱՐՁՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

1925 թվի ապրիլի 18-ին, Ժող-Կոմ-Խորհը հաստատեց գյուղ-տնտեսություններում ոժանդակող՝ վարձու աշխատանքի պայմանների կիրառման ժամանակավոր կանոնները։

Ամեն մի գեղջկուհի պետք է գիտենա, վոր բատրակների և բատրակուհիների վարձման պայմանները, համաձայն Ժող-Կոմ-Խորհի այդ վորոշման, սահմանվում են հոժարակամ, գրավոր համաձայնությամբ, վորպիսիները ստորագրվում են վարձողի և վարձվողի կողմից։ Այդ համաձայնությունները կարող են կնքվել ու հաստատվել պրոֆմիությունների կողմից (Հողանտառամիության)։

Գրավոր պայմանները յենթակա յեն ցուցակագրման գյուղական խորհուրդներում, վարձման մոմենտից վոչ ուշ քան յերկու շաբաթ։

Գյուղական տնտեսություններում վարձվել թույլատրվում է 14 տարեկանից վոչ ցածր հասակ ունեցողներին, իսկ թեթև աշխատանքներ կատարելու դեպքում՝ կարելի է թույլատրել նաև 12 տարեկանից վոչ պակաս յերեխաներին։

Վարձվող գեղջկուհին (բատրակուհին) իրավունք ունի շաբաթական մի որ հանգստանալ (առն որ), իսկ լի որերին վոչ ընդհանրական ժամերը՝ կարող է ոգտագործել ըստ իր հայեցողության։

Կանոնները արգիլում են արբունքի չքնաած և հղի կանանց ուժից վեր և առողջությանը վնասող աշխատանք տանել։

Գեղջկուհու (բատրակուհու) հիվանդության կամ ծննդաբերության դեպքում, վարձողը պարտավոր է հոգատար լինել նրա նկատմամբ։

Բայց ինչ կերպ։

Յեթե գեղջկուհին աշխատել է վոչ պակաս քան մի ամիս, գյուղական այնպիսի տնտեսության մեջ, վորի տերը գյուղատնտեսական ամբողջ տարվա ընթացքում ոգտվում է վարձու աշխատանքից, այն դեպքում գեղջկուհին աշխատանքի դադարումից հետո՝ իր հիվանդության կամ ծննդաբերության դեպքում, իրավունք ունի ստանալու մի ամսվա աշխատավարձ, ոգտվելով միաժամանակ վարձողի բնակարանից և սննդից։

Իսկ գյուղական այն տնտեսությունները, վորոնք ոգտվում են վարձու աշխատանքով, միայն գյուղատնտեսական առանձին աշխատանքների ժամանակաշրջանում, պետք է բատրակուհուն տան աշխատավարձ և արտադրեն բնակարան ու սնունդ յերկու շաբաթվա ժամանակամիջոցում վերջինիս հիվանդության կամ ծննդաբերության դեպքում։

Գեղջկուհին պետք է իմանա, վոր բատրակուհու հիվանդության կամ ծննդաբերության դեպքում, նրան ձրիաբար պիտի ոգնություն ցույց տան բժշկական որգաններն ու հիմնարկները։

Յեթե բատրակուհին աշխատում է գյուղական այնպիսի մի տնտեսության մեջ, ուր կան 3-ից վոչ պակաս աշխատող բատրակուհիներ և աշխատանքը տևում է ամբողջ տարին, այդ դեպքում նա պետք է վարձողի կողմից ապահովագրվի սահմանված կարգով։

Վարձողը կարող է հարգելի պատճառներով հեռացնել աշխատող բատրակուհուն՝ մինչ պայմանական ժամկետի լրացումը. այդ դեպքում նա պետք է նախազգուշացնի 2 շաբաթ առաջ կամ վճարի 2 շաբաթվա համար աշխատանքից հեռացման նպաստը։ Նույնը և բատրակուհին, իր հեռանալու մասին պարտավոր է հայտնել վարձողին—մի շաբաթ առաջ։

Այն բոլոր վեճերը, որ ծագում են աշխատանքից հեռացնելու դեպքում, նույնպես և այն վեճերը, որ կապ ունեն աշխատանքի հետ, քննվում են շրջ-գործկոմներին կից հաշտարար հանձնաժողովներում։ Իսկ համաձայնության չգալու դեպքում, գործը փոխադրվում է ժողովրդական դատարան։

Գյուղական տնտեսությունները կարող են միանալ և կազմել հողային ընկերություններ։

18 կամ ավելի տարիք ունեցող գեղջկուհին հաշվվում է հողային ընկերության իրավազոր անդամ։

Համայնքում՝ գեղջկուհին ունի նույն իրավունքները, ինչ որ տղամարդը։

Գեղջկուհին նույնպես հանդիսանում է իր տնտեսության իրավազոր անդամը։

Նա կարող է լինել իր տնտեսության ներկայացուցչը, նույնիսկ տանը տղամարդ լեռած դեպքում։

Յերբ գեղջկուհին հասնում է 18 տարեկան հասակին, այն ժամանակ նա իրավունք ունի հարց բարձրացնել տնտեսության բաժանման մասին, դրա համար նա պետք է իր անմիջական աշխատանքով կամ դրամական ու այլ միջոցներով մասնակցություն ունենա տվյալ տնտեսության մեջ։

Յեթե գեղջկուհին գտնվելիս է լեռել պետական ընտրովի աշխատանքում, կամ տնտեսության մեջ չի աշխատել հիվանդության կամ սովորելու պատճառով, այդ դեպքում նա կարող է նորից պահանջել տնտեսության բաժանումը։

ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԲԱԺԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ

Հողի վերաբաժանման և բաժանման ժամանակ՝ գեղջկուհին ունի նույն իրավունքը, ինչ որ տղամարդը։ Նույնը և տեղափոխումների ժամանակ։

Յեթե գեղջկուհին ամուսնանում է, նա իրավունք ունի հողի վրա այն տնտեսության մեջ, որի մեջ գտնվում է և իր ամուսինը։ Բայց չոչ մի իրավունք չունի ոգտվել հողից միաժամանակ յերկու տընտեսություններում։

Այսպես բավական համառոտ կերպով գրի առանք հողային որենսգիրքը, և դա բավական չէ, խորհուրդ ենք տալիս ամեն մի հրահանգչուհու ունենալ հողային որենսգիրք ու մանրամասնորեն ծանոթանալ նրա հետ։ Ապա գեղջկուհին պետք է գիտենա, որ անտառներից ոգտվելու նույն իրավունքն ունի ինքը, ինչ որ տղամարդը։

Այժմ ինչպես գիտենք, գյուղացությանն և հանձնված տեղական նշանակություն ունեցող, 20 միլիոնից ավելի դեսիատին անտառներ։

Գեղջկուհին պետք է գիտենա, թե ինչպես ոգտվել նրանցից, որի համար անհրաժեշտ է ունենալ անտառային որենսգիրք

Այս գրքում պարզաբանվում է՝ որոնք են ընդհանուր պետական նշանակություն ունեցող անտառները, ինչ պայմանով է բաց թողնվում անտառը ընակչության՝ ձրիաբար թե վարձով, ինչպիսի արտոնություններ գոյություն ունեն և ովքեր իրավունք ունեն դրանցից ոգտվելու։ Յեզրափակման մեջ անհրաժեշտ է մատնանշել, թե ինչպիսի և ինչ ոգնություն և ստանում գեղջկուհին հողային գործերում։

Միայնակ գեղջկուհիներին, կարմիր բանակայիններին, այրի կանանց տրվում է հետևյալ առավելությունները—բաշխվում է գյուղատնտեսական վարկ առանց հերթի, առավելություն է տրվում հողաշինարարական աշխատանքներում, սերմացուի և անտառային նյութերի, գյուղատնտեսական մեքենաների, լծկան ցեղական անասունների բաշխման և այլ դեպքերում։

Ապահարզանների և բաժանման դեպքերում, գեղջկուհիներին և վերապահվում հողաբաժանումից՝ իրենց բաժին հասած հողամասերը։

III

ԱՇԽԱՏԱՆՔ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՆԴԱՄ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ՄԵՋ.

ԼԵՆԻՆԸ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

(Ըստ Լենինի „Կոոպերացիայի մասին" հոդվածից)։

«Մեզանում իրոք՝ քանի վոր պետական իշխանությունը բանվոր դասակարգի ձեռքումն է, քանի վոր այս պետական իշխանությանն են պատկանում արտադրության բոլոր միջոցները, մեզանում իրոք վոր միայն մի խնդիր է մնացել—ընակչության կոոպերացումը»։

«Յեվ իրոք, պետության իշխանությունը արտադրության բոլոր խոշոր միջոցների վրա, պետության իշխանությունը պրոլետարիատի ձեռքում, այս նույն պրոլետարիատի գաշինքը բազմամիլիոն մանր ու մանրագույն գյուղացիների հետ, այս պրոլետարիատի՝ գյուղացության նկատմամբ ունեցած ղեկավարության ապահովումն և այլն, մի՞թե այս այն բոլորը չե, վոր անհրաժեշտ է լիակատար սոցիալիստական հասարակակարգ կառուցելու համար»։

«Այժմ մենք իրավունք ունենք ասելու, վոր մեզ համար կոոպերացիայի աճումն ու սոցիալիզմի աճումը նույնն են»։

«Այժմ մենք պետք է գիտակցենք և գործ դարձնենք այն, թե ներկայումս այն հասարակակարգը, վորին պետք է ոժանդակենք սովորականից ավելի, կոոպերատիվ հասարակակարգն է։ Սակայն նրան ոժանդակել հարկավոր է բուռիս իսկական իմաստով, այսինքն՝ ոժանդակել ասելով, բավական չե հասկանալ վորևե կոոպերատիվ շրջանառության ոժանդակություն, այլ ոժանդակություն ասելով՝ պետք է հասկանալ այնպիսի կոոպերատիվ շրջանառության ոժանդակումը, վորին իրոք մասնակցում են ընակչության իրական մասսաները։ Պրեմիա տալ այն գյուղացուն, վորը մասնակցում է կոոպերատիվ շրջանառությանը,—այս անպայման ճիշտ ֆորմուլա չե, սակայն ընդ սմին ստուգել այս մասնակցությունը և ստուգել նրա գիտակցությունն ու լավորակությունը,—ահա թե վորն է խնդրի մեխը»։

«Մեզանում կոոպերացիայի վրա նայում են արհամարանքով՝ չըմբռնելով թե ինչ բացառիկ նշանակություն ունի այս կոոպերացիան նախ՝ սկզբունքային տեսակետից (արտադրության միջոցների սեփականությունը պետության ձեռքումն է), յերկրորդ՝ ըստ կարելույն ավելի հասարակ և հեշտ, գյուղացու համար մատչելի ճանապարհով, նոր կարգերին անցնելու տեսակետից»։

«Այլ բան է սոցիալիզմը կառուցելու համար՝ ամեն տեսակ բանվորական միություններին մասին ֆանտազիաների մեջ ընկնելը, այլ բան է սովորել՝ այս սոցիալիզմը գործնականորեն այնպես կառուցել, վոր յուրաքանչյուր մանր գյուղացի կարողանա մասնակցել այս կառուցմանը»։

«Կոոպերացիան հարկավոր է քաղաքականապես այնպիսի պայմանների մեջ դնել, վոր վոչ միայն կոոպերացիան վորոշ արտոնություն ունենար ընդհանրապես ու միշտ, այլ վոր այդ արտոնությունը զուտ գույքային արտոնություն լիներ (բանկային տոկոսի բարձրություն և այլն)»։

«Իսկապես ասած՝ մեզ մնացել է «միայն» մի բան—մեր ընակչությունը դարձնել այնքան «քաղաքակրթված», վոր հասկանար կոոպերացիային գլխովին մասնակցելու բոլոր օգուտները և գլուխ բերեր այս մասնակցությունը։ «Միայն» այս։ Մեզ հիմա վոչ մի «իմաստություն» հարկավոր չե՝ սոցիալիզմին անցնելու համար։ Սակայն այս «միայն»-ը կատարելու համար հարկավոր է մի ամբողջ հեղաշրջում, բոլոր ժողովրդական մասսաների կուլտուրական զարգացման մի ամբողջ շրջան։ Ուստի և մեր կանոնը պետք է լինի՝ վորքան կարելի չե քիչ իմաստություններ և քիչ աճապարություններ անել»։

«Լիակատար կոոպերացման դեպքում, մենք յերկու վոտքով սոցիալիստական հողի վրա կանգնած կը լինեինք արդեն»։

«Իսկ լիակատար միջոցների հանրային սեփականության ժամանակ, պրոլետարիատի՝ բուրժուազիայի վրա տարած դասակարգային հաղթության ժամանակ, քաղաքակրթված կոոպերատորների հասարակակարգն է հենց սոցիալիզմի հասարակակարգը»։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղատնտեսական կոոպերացիան միացնում է գյուղական առանձին տնտեսությունների միջոցներն ու բանվորական ույժը, ուղղելով այն ի ոգուտ ընդհանուրի, շահավետ դարձնելով ամեն մեկի համար։

Գյուղական առանձին տնտեսություններն իրենցից վոչինչ չեն ներկայացնում, վորովհետև նրանք բավականանում են միայն իրենց ուժերով ու այսպես դարերի ընթացքում մնում են անշարժ, միևնույն դրության մեջ։

Եթե կարողանանք միացնել, այսինքն կոոպերացման յենթարկել այդ բազմամիլիոն տնտեսությունների բանվորական ույժն ու միջոցները, այն դեպքում, նա կը հանդիսանա վորպես մի մեծ ույժ, վորը վոչ միայն կարող է վերականգնել հինը, այլև կառուցել սոցիալիստական նոր տնտեսություն։ Այն ինչ վոր մի հոգու համար դժվար է, կոոպերացիայի միջոցով հեշտությամբ կարելի յե իրագործել։

Ցրված տնտեսությունները համախմբելով այս կամ այն միավորումների մեջ, գյուղատնտեսական կոոպերացիան աստիճանաբար բայց ուղիղ կերպով, տանում է գյուղական տնտեսությունը դեպի կոլլեկտիվ, այն է հասարակական տնտեսություն։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գյուղատնտեսական կոոպերացիան իրեն հիմնական խնդիրն է դնում, գյուղական տնտեսության արտադրողականության զարգացումը։ Տնտեսությունը վորքան ավելի շատ է զարգանում, այնքան եվ բարձրանում է նրա մթերքի քանակը։ Ստացվում է ավելցուկ, վորը գյուղացին վաճառում է, վորպեսզի դրամ ունենա գործարանային ապրանքներ՝ յերկաթ մանուֆակտուրա և այլն գնելու համար։

Այն ավելցուկը, վոր գյուղացին ծախում է, կոչվում է գյուղատնտեսական ապրանք։ Վորքան լավ մշակվի տնտեսությունը, այնքան նա ավելի ապրանքներ կը տա։

Գյուղատնտասական կոոպերացիան կազմակերպում է նման ապրանքների վաճառքը գյուղացու համար, եժան գներով։ Գյուղատնտեսական կոոպերացիայի միջոցով գյուղացին կարող է ստանալ մեքենաներ, գյուղատնտեսական գործիքներ, ընտիր սերմեր, ազնվացեղ անասուններ և այլն։

Վորպեսզի գյուղացությունը հնարավորություն ունենա ձեռք բերել այդ բոլորը, պետությունը գյուղատնտեսական կոոպերացիայի միջոցով վարկ է կազմակերպում, փոխարինաբար բաց է թողնում դրամ, կամ գյուղատնտեսական գույք ու սերմեր և տալիս պարտքով։

Բացի վաճառքից, մատակարարումից և վարկից, գյուղ-կոոպերացիան զբաղվում է նաև մթերքների վերամշակմամբ։

Մթերքների վերամշակումով (որինակ՝ գետնախնձորների ոսլա և նման այլ մշակումներ) բարձրանում է շուկայում ապրանքների արժեքը։

ԳՅՈՒՂ-ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Պատերազմի և հեղափոխության տարիներում, գյուղական տնտեսությունը համարյա վոչինչ չի արտադրել—վոչինչ չի գնել և չի եվ վաճառել։ Ապրանքաշրջանառությունը անհայտացավ։ Գյուղատնտեսական կոոպերատիվները թուլացան՝ վաճառքի համար ապրանք չլինելու պատճառով։

Նոր տնտեսական քաղաքականության (ՆԵՊ) հետ միասին, գյուղական տնտեսության ապրանքայնությունը նորից սկսեց վերականգնել։ Դրա հետ մեկտեղ, սկսեց նաև ամրանալ գյուղատնտեսական կոոպերացիան։

Համամիութենական մասշտաբով, գյուղական տնտեսությունների թիվը հասնում է 22 միլիոնի, իսկ Հայաստանում 160,000-ի։

Դրանից 5 միլիոնը միացել ու կազմել են կոլլեկտիվ տնտեսություններ, իսկ Հայաստանում դրանց թիվը չնչին է։

ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

Մինչ-պատերազմը, գյուղ-կոոպը միացնում եր 12 միլիոն տնտեսություններ։ Այդ 5 միլիոն տնտեսությունները միացված են 38 հազար կոոպերատիվներում, վորոնցից կոմմունալ և գյուղատնտեսական արտելները կազմում են 6 հազար։

Կանանց աշխատանքը գյուղատնտեսության մի շարք ընագավառներում առաջնակարգ տեղ է բռնում։ Դրանց աշխատանքի մեծագույն մասը կլանվում է կաթնատնտ. ձվի, թռչնաբուծական, կանեփի, բանջարեղենի և տնտեսության մի քանի այլ ընագավառներում։ Գեղջկուհին վոչ միայն իր աշխատանքը դնում է այդ տնտեսության մեջ, այլև հաճախակի ինքն է ստեղծում և կարգավորում տնտեսությունը։

ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային միության բոլոր հանրապետություններում, 1923-24 թվի տվյալների համաձայն հաշվվում էր 20 միլիոն կովեր, որոնցից միայն 2 միլիոնը ընդգրկված էին կոոպերացիայի կողմից։ Այս տարի կոոպերացիայի միջոցով արտահանված (արտասահման) և դուրս է բերված վաճառքի ներքին շուկայում 3 միլ. փթից ավելի պանիր և յուղ։ Մեր գյուղերում (Ա. Ս. Ֆ. Խ. հանրապետությունների) կաթնատնտեսական կոոպերացիան սկսել է զարգանալ միայն վերջին տարիներում, մեր գյուղերում կոոպերացիայի այս տեսակը մեծ ապագա ունի, մանավանդ այն շրջաններում, ուր գերակշռում է անասնապահությունը։

Պարզ է, որ գյուղատնտեսության այս բնագավառը ամբողջապես կոոպերացման յենթարկվելու դեպքում, կունենա հրատապական նշանակություն մեր տնտեսության վերականգնման տեսակետից։ Գեղջկուհին պետք է լավ խնամի իր կովը, որից կախված է և նրա կաթնատու լինելը և կաթի որակը, հետևաբար և մթերքի որակը։ Այժմ այն յուղը, որ մենք հանում ենք արտասահմանի շուկան, իր որակով դեռ ցած է, անմաքուր և կծու։ Մեր յուղի որակը կը բարձրանա միայն այն դեպքում, երբ գեղջկուհին գիտակցորեն կը մոտենա՝ ոչ միայն կովի խնամքին, այլև յուղ պատրաստելու աշխատանքներին։

ՁՎԱ-ԹՌՉՆԱ-ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ձվա-թռչնա-տնտեսությամբ զբաղվելը համարյա ամբողջապես գեղջկուհու գործն է։ Հաճախակի գյուղացուության մեջ՝ ձվից և հավից ստացած յեկամուտը համարվում է տնտեսուհու յեկամուտը։

Ներկա տարվա ընթացքում, կոոպերացիան գյուղական տնտեսությունների միջոցով, պատրաստել էր 6 հազար վագոն ձու, 30 միլիոն ռուբլու արժեքով, որի կես մասը արտահանվեց արտասահման և դրա փոխարեն մեր պետությունը ստացավ 15 միլիոն ռ. վոսկի։ Մինչ պատերազմը 1913 թ. արտահանվել է 23 միլիոն ռուբլու ձու։ Այս բոլորից հետևում է, որ թռչնատնտեսությունը մեր յերկրի համար ունի խոշոր նշանակություն։ Տնտեսության այդ ճյուղը զարգացնելու համար, հարկավոր է գեղջկուհու ուշադրությունը դրավել դեպի այդ գործը։

Գյուղում մեր տարվելիք աշխատանքի խնդիրներից մեկը պետք է հանդիսանա՝ դրավել գեղջկուհուն—կազմակերպել թռչնաբուծական արտելներ և ընկերություններ։

ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԿՈՈՊՈՒՄ

Վերոհիշյալ բոլոր ասածներից հասկանալի է, որ գեղջկուհու լայն մասնակցությունը գյուղական տնտեսության մեջ բարենպաստ պայմաններ է ստեղծում, նրան դեպի գյուղատնտեսական կոոպերացիան գրավելու համար։

Անհրաժեշտ է մոտ ապագայում ձեռք առնել մի շարք միջոցներ, գեղջկուհիներին գյուղատնտեսական կոոպերացիայի շուրջը կազմակերպելու նպատակով, նախապատրաստելով նրանց ավելի հասկանալի, տնտեսապես շահավետ հարցերի միջոցով։ Անհրաժեշտ է գյուղատնտեսական գիտելիքների տարածումը գեղջկուհիների մեջ, որը ոժանդակում է տնտեսությունը լավագույն միջոցով վարելու գործին։

Մինչ այժմ, գեղջկուհին շատ թույլ մասնակցություն է ցույց տվել գյուղատնտեսական կոոպերացիայի շինարարությանը։ Գեղջկուհի-փայատերերի քանակը ընկերություններում և արտելներում չնչին տոկոս է կազմում ընդհանուր փայատերերի դիմաց։ Դրա պատճառը կայանում է հետևյալում՝ մինչ այժմ գյուղատնտեսական կոոպերացիայի անդամ հաշվվում է գյուղական տնտեսությունը, իսկ տնտեսության ներկայացուցիչը հանդիսանում է «ընտանիքի գլուխը», որը ունի իրավական բոլոր իրավունքները։ Իսկ մենք գիտենք, որ մեծ մասամբ «ընտանիքի գլուխ» հանդիսանում է տան-տղամարդը։

Այսպիսով գեղջկուհին հնարավորություն չունի մասնակցելու և կառավարելու կոոպերացիայի գործերը։

ՏԵՂԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Վորպեսզի փոքր ինչ փոխել գոյություն ունեցող այդ դրությունը, կոոպերացիայի նոր որենքը սահմանում է փոխարինելու կարգը։ Յեթե փայատեր անդամ-ընտանիքի գլուխը, ժամանակավորապես բացակայում է կամ աշխատում է իր գյուղից ու շրջանից դուրս—հանքերում, գործարաններում կամ հիմնարկում, այդ դեպքում ըստ նրա հայտարարության, իր փոխարեն կոոպերացիայի ընդհանուր ժողովներին ու աշխատանքներին կարող է մասնակցել նրա կինը կամ չափահաս յերեխան։

ԻՆՉ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԳՐԱՎԵԼ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

Վորպեսզի ուղիղ մոտենանք գեղջկուհիներին գյուղատնտեսական կոոպերացիայի աշխատանքին գրավելու գործին, անհրաժեշտ է այս աշխատանքը բաժանել յերկու մասի՝ 1) դեռ կոոպերացման չ՝ենթարկված գեղջկուհիներին դեպի գյուղատնտեսական կոոպերացիան գրավելու խնդիրը և 2) արտելների, ընկերությունների, կոլեկտիվ տնտեսության մեջ աշխատող՝ անդամ-գեղջկուհիների մեջ տարվելիք աշխատանքը։ Նախ քան գեղջկուհիներին գյուղատնտեսական կոոպերացիայի աշխատանքին գրավելը, բացատրել գեղջկուհիների վայն խավերին գյուղատնտեսական կոոպերացիայի նշանակության և անելիքների մասին։

Պետք է բացատրել, թե ինչ է անում գյուղ-կոոպը և ինչպես նա կարող է ոգտակար լինել գյուղական տնտեսությանն ու իրեն գեղջկուհուն։ Պետք է հասկացնել գեղջկուհուն, թե ինչու իրեն շահավետ է ձուն, կանեփը և կաթը կաճառել կոոպերացիային և վոչ թե մասնավոր առևտրականին։

Պետք է շոշափելի թվերով ու հաշիվներով, շատ պարզ կերպով հասկացնել գեղջկուհուն, թե վորքան ոգուտ է անում մասնավոր առևտրականը յերբ գնում է մթերքները գյուղացիներից ու վաճառում։

Ներկայումս կոոպերացիան մի քանի տեղերում, շնորհիվ ընդհանուր պատճառների, այնքան էլ լավ չի աշխատում, Բայց կոոպերացիայի աշխատանքները հետզհետե կը լավանա, այն ժամանակ, յերբ մեծաքանակ տնտեսությունները կ՝ենթարկվեն կոոպերացման և դրա հետ միասին, յերբ գեղջկուհին իր մասնակցությունը կ՝ուժեղացնի կոոպերացիայում։

Անհրաժեշտ է գեղջկուհուն բացատրել, վոր կոոպերացիայի ոգնությամբ կարելի յե տնտեսությունը բարձրացնել, որինակի համար, մանր և հնացած ձևերը, վատ դասավորված (сортированный) կանեփը, վատ պատրաստված յուղը գնորդներ չեն գտնում կամ ցածր են գնահատվում։ Կոոպերատիվը ցանկանալով ունենալ մեծ ոգուտներ, անշուշտ պահանջում է գեղջկուհուց բարելավել գյուղատնտեսական մթերքների վորակը և ոգնում է իր անդամներին ստանալ մեքենաներ, աղնվացնել թռչունների, անասունների և ընտիր սերմերի տեսակները։

Այդ բոլորը ձեռք բերելու համար, կարելի յե գյուղատնտեսական կոոպերացիայի միջոցով ստանալ դրամական փոխատվություն։ Առանձնապես կարևոր նշանակություն ունի միայնակ և չքավոր գեղջկուհիների համար՝ ընկերություններում կամ արտելներում կազմակերպվելը։ Ընկերություն կազմակերպելու համար, պետք է միանան վոչ պակաս քան 5 տնտեսություններ։ Ի հարկե վորքան անդամների թիվը շատ լինի, այնքան էլ լավ և հարուստ կը լինի կոոպերատիվը։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ

Վորպեսզի այս բոլոր տեղեկությունները լայն կերպով տարածվեն գեղջկուհիների լայն մասսաների մեջ, անհրաժեշտ է ոգտագործել պատգամավորական ժողովները, կանանց կոնֆերենցիաները, դնելով այնպիսի հարցեր, վորոնք կը լուսաբանեն գյուղատնտեսական կոոպերացիայի և գյուղական տնտեսության մթերքների կազմակերպված վաճառքի ամբողջ նշանակությունը։

Գյուղատնտեսական կոոպերացիան սերտորեն կապված է գյուղական տնտեսության հետ. դրա համար էլ խոշոր նշանակություն է ստանում գյուղատնտեսական գիտելիքների տարածումը գյուղում։ Հարկավոր է գեղջկուհիներին գրավել դեպի գյուղատնտեսական խմբակները, վոր այժմ հաճախ կազմակերպվում է գյուղատնտեսների և շեֆերի կողմից։

Անհրաժեշտ է գեղջկուհիներին գրավել նույնպես և խրճիթ-ընթերցարաններին կից կազմակերպվելիք դասընթացները, վորոնց ծրագրում մտնում է գյուղատնտեսության վերաբերյալ հարցեր։ Այնտեղ, ուր հողային վարչությունների և գյուղկոոպերի կողմից կազմակերպվում են գյուղատնտեսական ցուցահանդեսներ—կաթնատնտեսության, թռչնաբուծության և կանեփի մշակման վերաբերյալ, անհրաժեշտ է գեղջկուհուն մասնակից դարձնել նման ցուցահանդեսներին։

Մի խոսքով, շրջ-կազմակերպչուհու կողմից պիտի ոգտագործվի բոլոր հնարավորությունները, վորպեսզի գեղջկուհին զինվի տնտեսական գիտելիքներով։ Յեթե գեղջկուհին սովորի՝ թե ինչպես շատացնել կովի կաթնատվությունը, թե ինչպես ավելի լավ հետևել կանեփի մշակմանը, վորպեսզի բարձրացնի նրա վորակը, թե ինչպես պատրաստել սունկերն ու պտուղները, վորպեսզի նրանք դառնան արտահանման նյութեր, այն դեպքում գեղջկուհուն կոոպերացիայում գրավելու գործը կիսով չափ կատարված կը լինի։

Յեթե գեղջկուհիները գիմեն շրջ-կազմակերպչուհուն՝ արտելներ կամ ընկերություններ կազմակերպելու գործին ոգնություն ցույց տալու համար, նման դեպքում վերջինս պետք է անպայման

պարզի՝ թե այդ խնդրի իրականացման համար կան արդիոք ընտեսական հնարավորություններ—այսինքն վաճառքի պայմաններ կարելի է արդիոք նոր ընկերության կամ արտելի աշխատանքը կապել կոոպերացիայի ընդհանուր սիստեմի հետ, հնարավոր է վարկ ստանալ թե վոչ և այլն։

Ընդհանրապես, վորպես կանոն պիտի ընդունել, վոր գեղջկուհուն գյուղատնտեսական կոոպերատիվում գրավելու ամբողջ աշխատանքը պետք է տանել հողային որգանների և գյուղական կոոպերատիվ կազմակերպությունների համաձայնությամբ։

Հարկավոր է մատնանշել, վոր զուտ կանանցից արտելներ կազմակերպելը միտք չունի։ Կարևորն այն է, վորպեսզի գեղջկուհին գիտենա կոոպերացիայի նշանակությունը և հասկանա, թե ինչպես պետք է կառուցել այն, իսկ թե նա կը մտնի արդիոք վորպես անդամ ընդհանուր կոոպերատիվում, թե ընդհակառակը 5-10 գեղջկուհիների կազմակերպությանը կը միանան նաև գյուղացիներ—այդ միևնույն է և կոոպերացիայի հաջողության համար, վոչ մի բացասական նշանակություն ունենալ չի կարող։

Այն տեղերում, ուր զարգացած է կաթնատնտեսությունը և կանեփի մշակումը, կարելի է ստեղծել զուտ կանանց արտելներ, վորովհետև այդ ընդավառներում գեղջկուհին հանդիսանում է իսկական տնտեսուհին և նրան հեշտությամբ կարելի է հետաքրքրեցնել կոոպերացիայի գործով։

Շրջ-հրահանգչուհին առաջին հերթին պետք է ուշադրություն դարձնի, գրավել կոոպերացված միավորումների մեջ այնպիսի գեղջկուհիների, վորոնք կանգնած են տնտեսության գլուխ՝ միայնակներին, վորբևայրիներին, կարմիր բանակայինների կանանց և այլն։

Դրանից հետո, գեղջկուհիներին գյուղատնտեսական կոոպերացիայի մեջ գրավելու աշխատանքը կարող է ուժեղ կերպով զարգանալ այն տեղերում, ուր ազգաբնակչության աշխատող ձեռքը (տղամարդը) տարվա մեծ մասը աշխատում է գյուղից դուրս, իսկ գեղջկուհին ղեկավարում է գյուղական տնտեսությունը։

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՆԴԱՄ-ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ՀԵՏ ՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Գեղջկուհիներին կոոպերացիայի մեջ գրավելով հանդերձ, անհրաժեշտ է նաև մտածել ընկերությունների, արտելների և կոլեկտիվ տնտեսությունների մեջ մտնող գեղջկուհիներին՝ տալ ղեկավարություն. դա անհրաժեշտ է, վորովհետև հաճախ գեղջկուհին կոոպերատիվի անդամ լինելով հանդերձ,

չի հասկանում նրա նշանակությունը և դեռ հեռու է կոոպերատիվի գիտակից անդամ դառնալուց։

Հաճախ կարելի է հանդիպել այսպիսի մի յերևույթի, յերբ գեղջկուհին հանդիսանալով կաթնա-արտելի անդամ, չի մասնակցում նրա շինարարությանը։ Նա միայն կթում է կովը և կաթը տանում գործարան։ Գեղջկուհին չի իմանում, ինչպես և գնում աշխատանքը, ուր և գնում ոգուտը, ինչպես կարելի է լավացնել մթերքը։ Նրան պետք է ոգնել, վորպեսզի նա հետաքրքրվի նման հարցերով։ Գեղջկուհու առաջ-քաշման գործում պետք է ի հայտ բերել առանձին ուշադրություն։

Նրանցից ավելի գիտակիցներին ու ակտիվներին անհրաժեշտ է առաջ քաշել վարչության և վերահսկիչ որգաններում։

Վորպեսզի գեղջկուհին կարողանա հանդիսանալ վորպես ակտիվ աշխատակցուհի, անհրաժեշտ է տալ նրան կոոպերատիվ լուսավորություն, գրավելով կոոպերացիայի, հաշվետարական, յուղագործական և այլ դասընթացքները։

Անհրաժեշտ է առաջ քաշել նաև արտելների, ընկերությունների և կոլ-տնտեսությունների անդամ գեղջկուհիների թեկնածությունները, հրահանգչական դասընթացներ ուղարկելու համար. վորպեսզի նախապատրաստել գյուղ-կոոպի այնպիսի աշխատակիցներ, վորոնք կապված լինեն աշխատավոր գեղջկուհիների լայն մասսաների հետ։

Գեղջկուհուն գյուղ-կոոպի աշխատանքում առաջ քաշելու նախապատրաստական միջոցներից մեկն է հանդիսանում, ընկերություններում և միություններում գործնական աշխատանք տալը։ Առանձին արժեք կունենար գեղջկուհու գործնական աշխատանքը, ընկերություններում ապրանքներ ընդունելու, կանեփը տանքը, զատավորելու և յուղի ու պանրի գործարանի կաթը ընդունման ժամանակ։ Այստեղ գեղջկուհին ուշադրությամբ նայելով բոլորին, քայլ առ քայլ կը բարձրացնի իր գիտելիքները և աստիճանաբար կարող է դառնալ կոոպերատիվ գործում ոգտակար աշխատակցուհի։

Դժբաղդաբար մինչ այժմ՝ այլ վերաբերմունք է յեղել գեղջկուհուն կոոպերատիվում առաջ քաշելու նկատմամբ։ Նույնիսկ յեղել են դեպքեր, յերբ գեղջկուհուն արգելել են նայելու, թե ինչպես է աշխատում յուղի գործարանը։ Այն ինչ գործնական աշխատանքի համար առաջ քաշված գեղջկուհին, կարող է վոչ միայն ծանոթանալ գործի հետ, այլև պատմել ուրիշներին։ Յեթե

գործարանական աշխատանքը կապված է ծախսերի հետ և ի նկատի ունենալով, որ գյուղ-կոոպը դեռ այնքան էլ ամրացած չի և որ չի կարելի պարծենալ մեծ ոգուտներով, գործնական աշխատանքի վարձատրման հարցը կարելի չէ դնել միայն տնտեսական ուժեղ միություններում, որոնք աշխատում են առանց վնասի։

Գյուղատնտեսական կոոպերացիայում, տնտեսապես ընդունակ կանանց ակտիվությունը և առաջ-քաշման գործը հայտ բերելու նպատակով, անհրաժեշտ է մամուլում և զեկուցումների մեջ լուսաբանել այն ընկերությունների, արտելների և կոլեկտիվ տնտեսությունների բացասական և դրական կողմերը, ուր կանայք հանդիսանում են ակտիվ գործիչներ։ Դրա համար պետք աշխատել, որպեսզի այդ կոոպերատիվներում ստեղվեն գեղջկուհի-թղթակիցների կադր։

ԱՇԽԱՏԱՆՔ ԿՈԼԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Գյուղատնտեսական կոոպերացիայի սիստեմի մեկ չերրորդ մասը կազմում են կոլեկտիվ տնտեսություններ, կոմունաներ, արտելներ և ընկերություններ, որոնք զբաղված են հողերի հասարակական գործով։ Կոլ-տնտեսությունները հասարակական տեսակետից հսկայական նշանակություն ունեն։ Մեծ մասամբ կոլեկտիվ տնտեսություններում միանում են գյուղացության առաջավոր մասը։ Բոլոր կոմունաներում, համարյա կան Կոմ. և ԼԿՅԵՄ բջիջներ։ Կոմունայի կյանքը լավ գրված դեպքում, անկասկած պետք է փշրվեն՝ գյուղի տնտեսական և կենցաղային հին ձևերը։ Կոլ-տնտեսության մեջ յուրաքանչյուր անդամ ոգտվում է իրական բոլոր իրավունքից, հետևաբար այստեղ գեղջկուհին հնարավորություն կունենար ի հայտ բերել հասարակական ու տնտեսական ասպարիզում իր ընդունակությունները։ Իրենք կոլ-տնտեսություններում աշխատողները ասում են, որ «առանց կնոջ գործունյա մասնակցության՝ կոմունալ շինարարության մեջ կոլեկտիվ տնտեսությունը, գոյություն ունենալ չի կարող»։ Նոր կենցաղի ստեղծելը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ կանայք հոժարակամ կերպով կ'ընդառաջեն, երբ նրանք իրենք կ'ըստեն կազմակերպել աշխատանքը և կը ստեղծեն նոր կենցաղ։

Մի խոսքով, կոլ-տնտեսության մեջ աշխատող կանանցից և կախված այդ նույն տնտեսության վիճակը. հետևապես կանանց մեջ անհամաձայնություն ծագած դեպքում, կոլեկտիվը կարող է ցրվել։

Կոլ-տնտեսության մեջ աշխատող գեղջկուհիների աշխատանքին պետք մոտենալ երկու կողմից։ Այն կոլ-տնտեսություններում և կոմունաներում, ուր կենցաղի, հասարակական դաստիարակության և լուսավորության գործը ավելի լավ և գրված, ուր գեղջկուհիները վորոշ չափով արդեն կուլտուրական են, չեն ճանաչում կրոնը, մասնակցում են հասարակական աշխատանքում— այնտեղ անհրաժեշտ է գեղջկուհուն ոգտագործել վորպես ակտիվուժ, շրջապատող բնակչության մեջ աշխատանք տանելու համար։

Ոգտագործել նրան՝ գյուղացիական լայն զանգվածների վրա ազդեցություն ձեռք բերելու նպատակով։

Մի քանի արտելներում կնոջ աշխատանքը գնահատվում է ավելի ցածր քան տղամարդունը։

Տղամարդիկ ստանում են 100 տոկոս (փայից) իսկ կանայք ստանում են 75-80 (փայից)։ Կան կոլ-տնտեսություններ, որոնցում չեն պահպանվում մայրության պաշտպանության գործը, որինակի համար՝ հղի կնոջը ազատում են աշխատանքից 3 ամիս ժամանակով. բայց իջեցնում են նրա բաժինը կիսով չափ։

Այդպիսի կոլեկտիվներում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել կանանց մեջ տարվելիք աշխատանքին, ընդառաջ գնալ նրանց մեջ յեղած մանկական հիմնարկների կազմակերպելու ձգտումներին, աշխատելով վորպեսզի այդ գործի զարգացման համար տրվեն ստացած ոգուտից տոկոսային հատուցումներ։

Կոմունաների և արտելների վարչությունների մեջ, վորպես ընդհանուր յերևույթ, կանայք քի չեն մասնակցում։ Վորովհետև կոլ-տնտեսություններում կինը հանդիսանում է իրավազոր անդամ ուստի նրան ամեն կերպ պետք է գրավել դեպի ընդհանուր ժողովները, և ընտրություններին՝ կոլեկտիվի վարչության և վերահսկիչ որգաններում պաշտոններ հանձնել։ Մի խոսքով կոլ-տնտեսությունների մեջ աշխատող գեղջկուհիների մեջ աշխատելով, պետք է նախապատրաստել նրանցից նոր կադրեր, գյուղում գեղջկուհիների լայն խավերի մեջ աշխատելու համար։

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԽՆԴԻՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Սպառողական կոոպերացիան հանդիսանում է այն գենքը, վորի միջոցով մենք պետք է պայքար մղենք առևտրի ասպարեզում, մասնավոր կապիտալի կուտակման դեմ։

Սպառողական կոոպերացիան այն գլխավոր ուղին է, որով քաղաքի արդյունաբերական ապրանքները տարվում են գյուղ։

Այդ խնդիրը իրագործելու համար, սպառողական կոոպերացիան ըստ հնարավորության պետք է ավելի լայնորեն գրավի շուկաները, կովի մասնավոր առևտրականների դեմ, մատակարարելով ազգաբնակությանն անհրաժեշտ յեղած ապրանքը ամենաեժան գնով։

Վորպեսզի սպառողական կոոպերացիան հաջողությամբ կարողանա մրցել մասնավոր կապիտալի հետ, անհրաժեշտ է, որ նա ունենա շրջանառության խոշոր միջոցներ, այն ինչ մեր կոոպերացիան սուր կերպով զգում է դրա բացակայությունը։ Այդ իսկ պատճառով, առաջին խնդիրն է հանդիսանում առևտրական շրջանառության՝ սեփական կապիտալի մեծացումը։

Աստեն մի կոոպերատիվ, միայն այն ժամանակ կարող է իր առևտրական աշխատանքը լավ դնել, յերբ նա կունենա բավականաչափ կապիտալ—կազմված անդամակցական փայերից։ Դրա համար անհրաժեշտ է, վորպեսզի յուրաքանչյուր գյուղացի և գեղջկուհի անդամագրվեն իրենց կոոպերատիվին։ Յեվ այդ բոլոր խնդիրները սպառողական կոոպերացիան կարող է կատարել միայն այն դեպքում, յերբ աշխատավորության լայն մասսաները ակտիվ և գիտակից կերպով կ՝մասնակցեն կոոպերատիվ շինարարության գործին։

Այդ դեռ բոլորը չէ։ Բավական չէ միայն անդամագրվել կոոպերատիվին. պետք է ձգտել, վորպեսզի կոոպերատիվի բոլոր անդամները լինեն ակտիվ։ Գյուղի թույլ և միջակ շերտերի շահերը կապահովվեն միայն այնտեղ, ուր գոյություն ունի կոոպերատիվի անդամների՝ ակտիվ դանգվածի մշտական և արթուն հսկողություն։ Միայն կոոպերատիվի անդամների ակտիվ մասնակցությամբ կարելի յե վերացնել կոոպերատիվում կատարվող հանցագործությունները, հափշտակումները, վատնումները և այլն։ Կոոպերատիվի անդամները վոչ միայն պետք է հաճախեն ընդհանուր ժողովներին, այլ և մտնեն վարչության և վերահսկիչ որգաններում, վարչության վերատուգիչ հանձնաժողովում, խանութային հանձնաժողովում և ակտիվորեն աշխատեն վերջիններում։ Բացի այդ, փայատերերի խնդիրն է հանդիսանում, վերընտրական ժողովներում ուշադիր վերաբերմունք ցուցադրել դեպի կոոպերատիվի վարչության անդամներ ընտրվելու համար առաջադրված թեկնածությունները. աշխատել լինել վորպեսզի կոոպերացիան չնկնի կուլակների ձեռքը։ Կոոպերացման յենթարկված մասսան պետք է վարչությունից պահանջի լայն հաշվետվություն, անդամների ընդհանուր ժողովի առաջ, վորտեղ փայատերերը պետք է ազատորեն դուրս գան իրենց նկատողություններով և ցուցմունքներով։ Փայատերերի և փայատիրուհիների նման ակտիվ ու գիտակից վերաբերմունքի շնորհիվ, կոոպերատիվի գործերի ղեկավարությունը վոչ մի դեպքում չի կարող գտնվել կուլակի ձեռքում և կոոպերատիվը յենթակա չի լինի դանազան հիվանդ յերևույթների ու պակասությունների։

Սրանք են ահա կոոպերացիայի և նրա անդամների հիմնական խնդիրները։

ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅՈՒՄ

Ամենից առաջ տեսնենք թե վորքան գեղջկուհիներ են անդամագրվել կոոպերացիային։ Առ 1-ն հուլիսի 25 թվի Միության մասշտաբով—գյուղական ցանցով յեղել են 5 միլիոն փայատեր, նրանցից գեղջկուհի-փայատերեր յեղել են կես միլիոն, այնպես վոր ամեն մի 100 փայատերերին ընկնում է միայն 10-ը փայատիրուհի։ Իսկ Հայաստանում առ 1-ն հուլիսի 25 թվի գյուղական ցանցով յեղել է «27.750» փայատեր, վորոնցից գեղջկ. փայատերեր յեղել են դրա 1%-ը։ Իսկ յեթե վերցնելու լինենք գեղջկուհիների ընդհանուր թիվը ամբողջ յերկրում, այն է 60 միլիոն, այն ժամանակ կ՝տեսնենք, վոր 120 գեղջկուհուց միայն մեկն է անդամագրված կոոպերացիային։

Ինչ վերաբերվում է Անդրկովկասի գյուղսպառողական կոոպերացիային, այնքան էլ լավ պայմաններում չի գտնվում. մեր գեղջկուհին դեռևս անհրաժեշտ մասնակցություն չի ցույց տալիս սպառողական կոոպերացիայում։

Անդրկովկասի սպառողական կոոպերացիայում կանանց մասնակցությունը մինչ 1926 թ. հունվարի 1-ը հետևյալ պատկերն է ցույց տալիս։

ա) փայատերեր 6, 7% մինչև 20, 2% հանդեպ ընդհանուր փայատերերի,

բ) խանութային հանձնաժողովներում 20, 5%։

Ղեկավարող որգաններում և վերատուգիչ հանձնաժողովներում 5. 5%։ Բավարար կարող են լինել այս թվերը թե վոչ։ Անդամագրված գեղջկուհիների այդպիսի չնչին տոկոսը կոոպերատիվում անթույլատրելի յե—և ահա թե ինչու։ Չէ՞ վոր կոոպերատիվից ապառիկ տրելի յե—և ահա թե ինչու։

վերցնողների մեծ մասը հանդիսանում են գեղջկուհիները, որոնք որեցոր շփվում են նրա աշխատանքների հետ, տեսնում նրա լավ ու վատ կողմերը, իսկ ազդել նրա աշխատանքների վրա չեն կարողանում, որովհետև ժողովում ձայնի իրավունք չունեն—քանի որ չեն հանդիսանում կոոպերատիվի անդամներ։

Մեծ մասամբ փայը, յերբեմն եվ մի քանի փայեր՝ ազամարդը գրում է իր անվամբ։ Կոոպերատիվի աշխատանքով ինքը հաճախ չի հետաքրքրվում, կամ թե չե բոլորովին բացակայում է, զյուղից դուրս աշխատանքում գտնվելու պատճառով։ Հենց դրա համար մենք ասում ենք՝ անհրաժեշտ է, որպեսզի գեղջկուհիները ինքնուրույն կերպով լինեն կոոպերատիվի անդամներ կամ փայեր գրեն իրենց անվամբ։ Միայն այս դեպքում գեղջկուհին կարող է ազդել կոոպերատիվի աշխատանքների վրա։ Կոոպերացիան նույնպես չափազանց շահագրգռված կ, որպեսզի գեղջկուհիները հանդիսանան նրա անդամները և ոգտվեն նրա աշխատանքների ճիշտ կարգավորման գործից։ Կոոպերացիան անում է այն, ինչ որ հնարավոր է, որպեսզի թեթեացնի գեղջկուհիների անդամագրվելը կոոպերատիվում։ Այդ իսկ նպատակով, կոոպերացիան նրանց տալիս է արտոնություններ, այսինքն անդամագրման ժամանակ թեթեացնում է բաժնեվճարը։

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ի՞նչ արտոնություններ և տրվում գեղջկուհիներին և ինչումն է կայանում այն։ Կոոպերատիվին անդամագրվող գեղջկուհին տալիս է 50 կոպեկ և ստանում է կոոպերատիվի անդամի բոլոր իրավունքները։ Իսկ մնացած անդամավճարները մուծելու համար, նրան տրվում է մի տարի և ավելի ժամանակ։ Բացի դրանից, մնացած փայավճարը կարելի յե մուծել մաս առ մաս՝ ցորենով, կանեփով, ձվով և այլն։ Մի քանի տեղերում անդամագրվող գեղջկուհիները իրենց բաժնեվճարը տալու համար, տրամադրում են կոոպերատիվին փոխադրական միջոցներ — ապրանք փոխադրելու համար, կամ թե չե կատարում են մի այլ աշխատանք։ Կան դեպքեր, յերբ պատգամավոր-գեղջկուհիները փայավճար մուծելու համար, կոլլեկտիվ կերպով ցանում են մի վորևե հողամաս և ծախելով, նրա հասույթը վճարում են իրենց փայը։

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր ցանկության դեպքում, գեղջկուհիները կարող են հանդիսանալ կոոպերատիվի անդամներ, վորի իրագործման համար անպայման պետք է ձգտել։

ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԸ ԸՆՏՐՈՎԻ ՊԱՇՏՈՆԵՐՈՒՄ

Վորովհետև գեղջկուհիներից շատ քչերն են հանդիսանում կոոպերատիվի անդամներ, դրանով եվ բացատրվում է այն հանգամանքը, վոր կոոպերատիվի ընտրողական որգաններում գեղջկուհիների թիվը չնչին է։ 200 ընտրված ազամարդուն ընկնում է միայն մեկ ընտրված գեղջկուհի՝ վարչության կամ վերատեսուչ հանձնաժողովի անդամ։ Ամբողջ հանրապետության մասշտաբով՝ վարչության նախագահ-գեղջկուհիների թիվը է 167, իսկ զյուղական ցանցում 25։ Մեզանում գավառային մասշտաբով վարչությունների մեջ աշխատում են միայն 2 կին։

Գեղջկուհիների այդպիսի աննշան մասնակցությունը կոոպերացիայում և նրա ընտրովի որգաններում, հանդիսանում է աննորմալ յերևույթ, քանի վոր կոոպերացիան կարող է ծառայել գեղջկուհիների համար վորպես հասարակական մի դպրոց։ բացի դրանից, շատ բանում նրանց տնտեսական ու կուլտուրական շահերը կախված են կոոպերացիայից, ինչպես մթերքների վաճառքը կոոպերացիայի միջոցով, կարևոր, ժամն և լավ ապրանքներ ստանալը, վորոնք անկասկած պետք է հետաքրքրեն գեղջկուհիներին։ Գեղջկուհին նույնպես շահագրգռված է, վորպեսզի կոոպերատիվը աշխատի առանց վնասի, քանի վոր այդ դեպքում, կոոպերացիան կարող է իր ոգուտից վորոշ գումար հատկացնել գեղջկուհիների կուլտուր-կրթական կարիքների և կենցաղի ազատագրման հիմարկների՝ կազմակերպման համար։

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԿՈՒԼՏՈՒՐ-ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Մի շարք կոոպերատիվներ, վորոնք աշխատում են առանց վնասի, արդեն անցել են այդ գործին, կազմակերպում են մուսուրներ, մանկական հրապարակներ, «մայր և մանուկ» անկյուններ. իրենց հաշվին հրավիրում մանկաբարձուհիներ, հիվանդանոցներում պահում են հղի կանանց համար մահճակալներ, ոգնում խրճիթ-ընթերցարաններին, պատգամավորական ժողովներին և այլն։ Այսպիսով Միության մասշտաբով, ըստ կոոպերացիայի տեղեկությունների, կազմակերպված է յեղել 160 մանկական հրապարակներ, 100-ից ավելի գյուղական մուսուրներ, 300 «մայր և մանուկ» անկյուններ, 47 խորհրդատու-կայաններ մայրերի համար և այլն։

Այս բոլոր միջոցները, վորոնք ձեռք են առված կոոպերացիայի կողմից, (վորը պետք է ձեռնարկվի նաև Հայաստանում) գեղջկուհիների համար, չափազանց կարևոր և պետական են, քանի

վոր նրանք հեշտացնում են գեղջկուհու աշխատանքը յերեխաներին խնամելու գործում և պաշտպանում նրանց առողջությունը։

Այս բոլոր ասածներից կարելի յե մի յեզրակացություն հանել,—վորքան կարելի յե, պետք յե լայնորեն բացատրել գեղջկուհիներին կոոպերացիայի նշանակության մասին, և թե՝ ինչով կարող և գեղջկուհին ոգնել կոոպերացիային։

Անհրաժեշտ և ձգտել, վորպեսզի գեղջկուհիները անդամագրվեն կոոպերատիվին, անցնեն վարչության մեջ, վերատուգիչ ու խանութային հանձնաժողովներում, վորպես անդամ և վերջիններում աշխատեն ակտիվ կերպով։

ՇՐՋ-ԿԱԶՄԱԿԵՐՊԶՈՒՀՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ.

Շրջ-հրահանգչուհու անելիքները կայանում և նրանում, վորքան կարելի յե մեծ ուշադրություն դարձնել կոոպերացիային և կանանց կոոպերացիայում դրավելու գործին, ուժեղացնելով նրանց մեջ կազմակերպչական և պրոպագանդային աշխատանքը։

Այդ նպատակով, շրջ-հրահանգչուհին կարող և ոգտագործել տեղում աշխատող կոոպերատիվի աշխատակիցներին և կենտրոնից յեկող հրահանգիչներին։

Մասսայական ագիտացիայի համար, պետք և ոգտագործել ընդհանուր և պատգամավորական ժողովները, խրճիթ-ընթերցարաններին կից գտնող կոոպերատիվ-խմբակները, պատգամավորական ժողովներին կից կոոպերատիվ սեկցիաները (վորտեղ այդպիսիներ կան), դրավելով բոլոր գեղջկուհիներին դեպի այդպիսիները։ Կոոպերացիան իր կողմից ընդառաջում և նման ձեռնարկներին, տալով զեկուցողներ և ըստ հնարավորության մատակարարում և գրականություն։

Տվյալ աշխատանքի ավելի ամրապնդման և խորացման տեսակետից, անհրաժեշտ և ակտիվ փայատիրուհիներին դրավել խրճիթ-ընթերցարաններին կից՝ կոոպերատիվ անկյունների կազմակերպելու գործին, զարթեցնել նրանց ինքնագործունեությունը՝ մասնակցելով մանկական հրապարակների և նման ձեռնարկների կազմակերպման խնդրում։

ԱՌԱՋ-ՔԱՇՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Շրջ-հրահանգչուհու համար չափազանց կարևոր և հետևել, վորպեսզի ակտիվ փայատիրուհիներից առաջ քաշվեն վարչության և վերատուգիչ որգաններում, այստեղ առանձին ուշադրություն պիտի դարձվի թեկնածուների ընտրության վրա և պետք և ընտրել միայն այն կանանց, վորոնք ոգտվում են հեղինակությամբ և ցանկանում են աշխատել։ Մեզ մոտ կան մի շարք ավյալներ, վորոնք ապացուցում են, վոր առաջ քաշված՝ վարչության անդամ-գեղջկուհուն, շատ դժվարությամբ են բերում նիստերին։ Որինակ՝ Ուկրաինայում պահել են այնպիսի դեպքեր, յերբ առաջ քաշված գեղջկուհու հետևից գալիս եր միլիցիոնները և համոզում նրան գնալ ժողովի. յեթե նրան այդ հաջողում եր, այն դեպքում միլիցիոնները նրան ուղեկցում եր մինչև ժողովատեղի և հետ բերում։ Իմաստ ունի արդիոք նման առաջ-քաշումը, թե գեղջկուհիների և թե իրեն առաջ քաշվածի համար. իհարկե վոչ։ Նման թեկնածության շնորհիվ, կորչում և գեղջկուհիների հեղինակությունը և ավելի յե դժվարանում նրանց առաջ քաշման գործը։ Դրա համար, առաջ քաշման ժամանակ անհրաժեշտ և մանրասասն քննության առնել ընդհանուր ժողովներում թեկնածությունը, բացատրել առաջ քաշվողին իր անելիքները և անցկացնել թեկնածությունը նրա համաձայնությամբ։

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱԿՏԻՎԻ ՀԵՏ

Առաջ-քաշման 2-րդ խնդիրն և հանդիսանում ընտրված ակտիվի վերամշակումը և նրան հրահանգելը, հրավիրելով առաջ-քաշված գեղջկուհիների շրջ-խորհրդակցություններ, կազմակերպելով գեղջկուհիների հետ առանձին զրույցներ և այլն։ Առհասարակ լուրջ ուշադրություն պիտի դարձնել ակտիվի հետ տարվելիք աշխատանքին, վորպեսզի մեր կանայք ստիճանաբար կարողանան լծվել կոոպերացիայի գործնական աշխատանքին։

Այնտեղ, ուր առաջ-քաշման գործը հաջող և յեղել և առաջ քաշված գեղջկուհիները կարողացել են իրենց ցույց տալ, վորպես լավ աշխատողներ—այնտեղ դեպի գեղջկուհիները բոլորովին այլ վերաբերմունք ունեն նույնիսկ տղամարդիկ։ Այսպես՝ Կուբանի նահանգում վարչության նախագահ անցկացրին մի կոզակ կնոջ (казачка)։ Կոզակները սկսեցին հետ վերցնել իրենց փայերը։ Բայց կոզակ-կինը վարչության նախագահ դառնալով, կարողացավ այնպես դնել գործը, վոր յերկու տարի անց կոոպերատիվի շրջանառությունը 2 անգամ ավելացավ, փայատիրական կապիտալը աճեց և արդեն 4-րդ տարին և ինչ այդ կոզակ-կնոջը միաձայն ընտրում են վարչության նախագահ։

Սրանք են այն հիմնական մոմենտները, վորոնք անհրաժեշտորեն հաշվի պետք և առնվեն շրջ-կազմակերպչուհու կողմից, կանանց կոոպերացման յենթարկելու ասպարիզում։

Գյուղացիների լայն ինքնագործունեությունը, եներգիան, դիտակցությունն և կյանքի փորձառությունը ամուր հիմք կըծառայեն կոոպերացիայի համար. կամրապնդեն նրա շարքերը, կիրականացնեն կյանքում, սիրելի ուսուցիչ Լենինի ավանդները—մասառների կոոպերացման գործում, որը կը մոտեցնի մեզ լավագույն ապագային, այն է—սոցիալիզմին:

ՏՆԱՅՆԱԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ՅԵՎ ՏՆԱՅՆԱԳՈՐԾՈՒՀԻՆ

ՏՆԱՅՆԱԳՈՐԾԸ ՅԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Միության սահմաններում հաշվվում է ավելի քան 200 զանազան տնայնագործական արհեստներ, որոնցից ավելի տարածված են հետևյալները՝ մետաղային, փայտագործական, կաշվե-կոշկային, ձեռագործային, գորգի և այլն:

Գյուղական տնտեսությունները, որոնք գլխավորապես պարապում են տնայնագործական արհեստներով, Միության մասշտաբով հաշվվում են մինչև 2 և կես միլիոն, Հայաստանում 1925 թ. 800 գյուղերի հետազոտումը պարզեց, որ դրանց մեջ կան 3985 տնայնագործական և արհեստավորական հիմնարկներ, որոնցում զբաղված են 5047 մարդ. դրանցից վարձով աշխատողներ 324:

Անդրկովկասի գյուղերում համեմատաբար ավելի քիչ է զարգացած տնայնաարհեստագործությունը:

Այստեղ տնայնաարդյունաբերության տարածված ճյուղերն են՝ գորգի, շալի, զանազան իրերի արտադրությունը կամ գործվածքը, մետաքսագործությունը և մետաքսի թել պատրաստելը, տնային բաղերի, քեչանների պատրաստելը և այլն:

Մինչ պատերազմը, Ռուսաստանում տնայնագործական արդյունաբերության ընդհանուր արտադրությունը՝ կազմում էր մոտավորապես խոշոր արդյունաբերության արտադրության մեկ քառորդը:

Ներկայումս խոշոր և մանր արդյունաբերությունների (նրանց թվում և տնայնագործների) հարաբերությունը նույնն է, որպիսին յեղել է մինչ պատերազմը. բայց տնայնագործական արդյունաբերության նշանակությունը խորհրդային պետական տնտեսության մեջ ավելի խոշոր է, քան մինչ հեղափոխությունը. դա բացատրվում է նրանով, որ մանր տնայնագործական արդյունաբերությունը, որ գլխավորապես ծառայում է գյուղական բնակ-

չության կարիքներին, ընդգրկում է մի շարք արտադրություններ, որոնք խոշոր արդյունաբերությանը դեռ ևս չեն մոտեցել:

Բացի այդ, տնայնագործական արդյունաբերությունը վերամշակում է կիսաֆաբրիկատները (այնպիսի առարկաներ, որոնք պահանջում են աշխատանքի ավարտումն), որը իր հերթին պատրաստում է խոշոր արդյունաբերությունը. նա յե նույնպես պատրաստում վերջինիս համար կիսաֆաբրիկատներ, որով լրացնում է խոշոր արդյունաբերության աշխատանքը:

Կուսակցության և պետության կողմից այդ նշանակությունը հաշվի յե առնված և վերջին տարում, այդ ասպարիզում շատ բան է արված, որպեսզի հնարավորություն տրվի տնայնագործական արդյունաբերությանն արագ և լրիվ կերպով զարգանալու: Տնայնագործներին տրված են հարկային արտոնություններ. տնայնաարհեստագործական կոոպերացիային, որը միացնում է տնայնագործներին, տրվում են վարկեր, իսկ նրան հում նյութեր մատակարարելը մտցված է պետական ընդհանուր նախագծում:

ԿՆՈՋ ԴԵՐԸ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐՈՒՄ

Կանանց աշխատանքը տնայնագործական արդյունաբերության մեջ խոշոր նշանակություն ունի: Այստեղ կինը աշխատում է միահավասար տղամարդու հետ և հաճախ ավելին (որինակի համար՝ ազգային հանրապետություններում): Տնայնագործական առանձին արհեստներում, մասնավորապես աշխատում են կանայք, ինչպես որինակ՝ մանվածքի և գորգի արհեստներում, ուր կանայք աշխատում են 100 տոկոսով. ուսկանագործության և գուլպայագործության արհեստներում նույնպես քիչ չեն: Ուրիշ արհեստներում կինը հանդիսանում է վորպես ոգնող ուժ:

Տնայնագործական արհեստների նշանակությունը, ընդհանրապես գյուղացու և մասնավորապես գեղջկուհու համար, սկզբունքորեն է:

1925 թվի գյուղական արհեստներում, տնայնագործության գործվածքի ընդհանուր արժեքը կազմում էր 300 միլիոն ռուբլուց ավելի, որից 100 միլ. ռուբլու աշխատանքը հաշվվում էր կանանց կողմից կատարված:

Տնայնագործական արհեստները կնոջը վաստակ տալով, արտեսապես ազատագրում են նրան. ընտանեկան կենցաղում դարձնում են նրան ավելի ինքնուրույն և տղամարդուց անկախ: Սա-

կայն հենց կանանց արհեստներում ավելի ուժեղ և զարգացած աշխատանքի շահագործումը, քան տղամարդկանց հատուկ արհեստներում։ Կինը 10-12 ժամվա աշխատանքի համար ստանում է 12-25 կոպեկ։ Այդ շահագործումը ավելի ուժեղ և ազգային հանրապետություններում (գորգի և մանվածային գործում)։ Այդ դրությունը ավելի վատթարանում է նրանով, որ տնայնագործական գործվածքների գնումները կատարում է մասնավոր կապիտալը՝ մանավանդ գյուղում, որ և ճանկելով կնոջ վաստակի արժեքավոր մասը գնում է իր գրպանը։ Արհեստների կոոպերացումն է այն միակ միջոցը, որով կարելի է պայքարել մասնավոր գնորդների դեմ, (տնայնագործների և տնայնագործուհիների միացումը արտելներում, ընկերութ. և այլն)։

ԱՐՀԵՍՏԱՎՈՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Արհեստավորական կոոպերատիվ - արտելներում կազմակերպված տնայնագործները, ոգտվելով պետության և կոոպերացիայի ոժանդակությամբ, կարող են ինքնուրույն կերպով պատրաստել իրենց արտադրության համար հում նյութ ու կազմակերպել գործվածքների վաճառք, մի կողմ թողնելով մասնավոր գնորդին։ Տնայնա-արհեստավորական ընկերությունն ու արտելը, կարող են իրենց կուտակած միջոցներից գնել լավ մեքենաներ և գործիքներ, բաշխել աշխատանքը արտելի անդամների մեջ այնպես, որ նրանցից յուրանքչյուրը վերցնելով աշխատանքի վորևե մի մասը, կատարի ավելի լավ ու ավելի արագ. հետևաբար կը բարձրացնի գործվածքների քանակն ու վորակը, վորով կավելացնի նաև իր աշխատավարձը։

Ներկայումս արհեստավորական կոոպերացիան աճում և զարգանում է։ Այսպիսով, Միության մասշտաբով արտադրողական-արհեստավորական արտելների թիվը առ 1-ն հունվարի 1924 թվի հաշվվում էր 7,500, վորը միացնում էր 300,000 տնայնագործների։ 1925 թ. արտելների թիվը հասնում էր 11,000-ի, 400,000 անդամներով, իսկ առ 1-ն հոկտ. 1925 թվի. արտելները հաշվվում են արդեն 12,000, 500,000 անդամներով. այլ կերպ ասած՝ յերկու տարվա ընթացքում, կոոպերացման յենթարկված տնայնագործների թիվը աճել է համարյա 2 անգամ։ Յեթե սրան ավելացնենք նույնպես անդամալույծների, վորսորդական և ձկնորսական արտելները, այն դեպքում տնայնագործական արտելների թիվը ավելի կը բարձրանա։

Կանայք ավելի դժվարությամբ են կոոպերացման յենթարկվում, շնորհիվ այն հանգամանքի, վոր կինը կենցաղապես ազատագրված չե ու չունի ինքնուրույնություն։ Բայց այնուամենայնիվ, կոոպերացման յենթարկված տնայնագործուհիները հաշվվում էին 45,000 հոգի, վորոնք միացած էին 230 արտելներում։

Այժմ, այդ հարցին մեր իշխանությունը և կուսակցությունը ավելի խոշոր նշանակություն են տալիս և կարելի յե հուսալ, վոր այդ քանակը կաճի։ Սակայն արհեստավորական կոոպերացիայի միջոցների և աշխատակիցների սղության պատճառով, նա հնարավորություն չունի, առ այժմ ծավալել գեղջկուհիների կազմակերպման աշխատանքը հարկ յեղած մասշտաբով։ Շրջ-հրահանգչուհին այս խնդրում, գեղջկուհիների մեջ աշխատանք տանելու համար, ունի գործունեության լայն ասպարեզ։

ՇՐՋ-ՀՐԱՀԱՆԳՉՈՒՀՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՏՆԱՅՆԱԳՈՐԾՆԵՐԻ ՄԵՋ

Շրջ-հրահանգչուհու հիմնական անելիքներից մեկն ել այն է, վորպեսզի նա պարզի շրջանի արհեստավորական ընակչության՝ նրանց թվում և կանանց, պարզելով թե վորքան հնարավոր է կնոջ աշխատանքը հարմարեցնել գոյություն ունեցող արհեստներում։ Ապա պարզել, թե տնտեսական վորպիսի հնարավորություններ կան կոոպերացման յենթարկելու տվյալ շրջանի գեղջկուհիներին, արհեստավորական արտելներում և ընկերություններում։

Այդ ասպարիզում կարելի յե գործադրել աշխատանքի մասսայական (ժողովներ, ընդհանուր զրույցներ և այլն) և թե անհատական զրույցներ), յելհատական պրոպագանդայի ձևերը (անհատական զրույցներ), յելնելով գեղջկուհիների առորյա կարիքներից։ Վերոհիշյալ աշխատանքում շրջ-հրահանգչուհուն, ամենալավ ոգնությունը կարող է ցույց տալ մեր մամուլը, իսկ գործնական խնդիրների վերաբերյալ նպատակահարմար է դիմել համապատասխան որգաններին։

Այնտեղ, ուր արդեն գոյություն ունեն արտելներ, շրջ-հրահանգչուհու խնդիրը բավականաչափ հեշտանում է։ Այդ դեպքում հրահանգչուհին գլխավոր ուշադրությունը պիտի դարձնի՝ գրավելու կանանց արտելներում, զարկ տալու նրանց կրթական աշխատանքին, առաջ քաշելու վերատուդիչ և հակոդության՝ իսկ հետագայում նաև վարչության որգաններում։

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև տնայնագործների պրոֆ-տեխնիկական դաստիարակման գործի վրա, բացա-

տրել նրանց պրոֆ-տեխնիկական դպրոցներում սովորելու անհրաժեշտությունը, գրավել դեպի խրճիթ-ընթերցարանները, լիկ-կայանները. ծանոթացնել կոոպերատիվ և արհեստավորական գրականության հետ։

Բացի այդ, անհրաժեշտ է անայնագործուհիներին մտցնել խորհրդային և հասարակական որգաններում. մասնակից դարձնել նրանց պատգամավորական ժողովներին, մայրերի և մանուկների պահպանման աշխատանքին, մսուրների և այլ հիմարկների կազմակերպման գործին։

Մեծ նշանակություն ունի անայնաարհեստավորական արտելների սիստեմատիկ զեկուցումների կազմակերպումն, շրջանային և տեղական համայնքների ժողովներում։ Բացի այն, վոր նման զեկուցումները հնարավորություն կը տան անայնագործներին ավելի քննադատորեն մոտենալու արտելի գործունեության, այս կամ այն խնդրին, զեկուցումները միևնույն ժամանակ կը զարթեցնեն մեացյալ անայնագործների և միայնակ անայնագործուհիների մեջ հետաքրքրություն, դեպի արտելների և ընկերությունների աշխատանքը, վորով կաջակցեն նրանց կոոպերացմանը։

Շրջ-հրահանգչուհին իր աշխատանքի բոլոր ձևերը պետք է հարմարեցնի տեղական պայմաններին։ Աշխատանքի արդյունավետ լինելը սերտորեն կապված է նրա հետևողականության հետ։ Անհրաժեշտ է հաշվի առնել և ուսումնասիրել անայնագործուհու բոլոր կարիքներն ու հարցումները, դանել նրանց բավարարելու ճանապարհը. ամենից առաջ կազմակերպելով անայնագործուհիներին անհեստավորական արտելներում և ընկերություններում, տալով նրանց խորհուրդներ։

IV

ՔԱՂ-ԼՈՒՍ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ՄԵՋ

ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Կինը ներկայումս քանի գնում ավելի ու ավելի յե լծվում հասարակական աշխատանքի, աշխատում է գրագետ դառնալ, առանց վորի հասարակական վոչ մի աշխատանք տանել չի կարելի։

Անգրագետ կանանց թիվը ավելի մեծ է, քան անգրագետ տղամարդկանցը։ Ըստ 1920 թ. ցուցակագրության՝ 1000 տղամարդուց անգրագետ եյին 270 հոգի, իսկ 1000 կանանցից—629 հ.։

Այժմ պետք է մեծ ջանք ու յեռանդ գործադրել, վորպեսզի աշխատավորուհուն լուսավորել ու դուրս բերել խավար դրությունից։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՔԱՇՎԱԾ՝ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Մեր առաջ դրված խնդիրներից մեկն է, վերացնել անգրագիտությունը պատգամավորուհիների և հասարակական աշխատանքի քաշված կանանց միջից։ Կան շրջաններ, ուր պատգամավորուհիների կեսից ավելին անգրագետներ են և դրա համար ել նրանց առաջին հերթին պետք է գրավել դեպի ուսումը։ Յեթե գեղջկուհի-պատգամավորը լիկ-կայան չի հաճախում, վերջինիս հեռավորության և այլ պատճառներով, այդ դեպքում պետք է նրան ոգնել տանը սովորելու։

Շրջ-հրահանգչուհին պետք է կապ հաստատի լիկ-կայանի, «Կորչի անգրագիտություն» ընկերության բջիջի և խրճիթ-ընթերցարանների հետ. ստանա այնտեղից դասագրքեր ու գրենական պիտույքներ և դանի գրագետ ընկերների, անգրագետ պատգամավորուհիներին իրենց տներում սովորեցնելու համար։ Հնարավոր է նույնպես խրճիթ-ընթերցարաններին կից կազմակերպել 3–5 հոգուց բաղկացած փոքրաթիվ խմբակներ։

Առաջավոր գեղջկուհիները յուրաքանչյուր աշխատանքի ասպարեզում՝ պետք է որինակելի լինեն, առանձն իրենց յեռեից նաև

իրենց գյուղի մյուս գեղջկուհիներին։ Մենք գիտենք, որ հաճախ գեղջկուհիները չեն գնում սովորելու, որովհետև տան տղամարդը և հարազատները դեմ են լինում նրանց սովորելուն, իսկ հաճախ էլ իրենք են ամաչում։

Այս աշխատանքին հաջող ընթացք տալու համար, անհրաժեշտ է տղամարդկանց նույնպես հասկացնել, որ գրագետ մայրը նեցուկն է իր յերեխային և գրագետ լինելու դեպքում՝ ավելի խելացի կերպով կարելի յե զեկավարել տնտեսությունը։

Պիտի աշխատել, որպեսզի գրագիտություն սովորող գեղջկուհիները, իրենց յերեխաներին մանկատուն, մսուրներ և դպրոցներ ուղարկելիս, ոգավեն վորոշ արատնությունների։ Նման հիմնարկների բացակայության դեպքում, պետք է ստեղծել մայրերի հերթապահություն, գեղջկուհու դպրոցում յեղած ժամանակ—նրա յերեխային նայելու համար։

Ի ՆԶՈՎ ԿԱՐՈՂ Է ԱՐՏԱՀԱՅՏՎԵԼ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Անգրագիտության վերացման ամենտեսակի աշխատանքում, պատգամավորուհին կարող է ցույց տալ իր մասնակցությունը։

1. Վորպեսզի անգրագետ գեղջկուհուն գրավել դեպի լիկ-կայանը, պետք է տանել մշտական, համառ ագիտացիա, համայնական ժողովներում և այլն։ Բացի այդ, պետք է ոգտագործել յուրաքանչյուր հարմար առիթ, ներշնչել գեղջկուհուն, որ նրան անհրաժեշտ է սովորել գրագիտություն։

2. Ագիտացիայի հետ միատեղ, պետք է տանել նաև կազմակերպչական աշխատանք. ոգնել քաղ-լուսին և «Կորչի անգրագիտություն» ընկերությանը, նոր լիկ-կայաններ բանալու և բացված լիկ-կայանների գոյությունը ապահովել։ Ձեռք բերել հարմար շենք, գրենական պիտույքներ, ձեռնարկներ, հոգալ վառելիքի և լուսավորության մասին, գտնել ուսուցիչ, ուշադիր լինել՝ կանանց լիկ-կայանի կանոնավոր հաճախմանը, մասնակցել շրջանավարտների հանդիսավոր յերեկոների կազմակերպմանը և այլն։

Այս աշխատանքի համար ոգնության ստանալու նպատակով, պիտի կապվել գավառական կենտրոններում գտնվող՝ «Կորչի անգրագիտությունը» ընկերության շեֆական բջիջի հետ։

Տեղերում «Կորչի անգրագիտություն» ընկերության բացակայության դեպքում, պատգամավորուհին պահանջում է քաղաքի շեֆ-բջիջից կազմակերպել կամ կազմակերպում է կոմ-բջիջի, գյուղ-խորհրդի և իր ուժերով։ Նրա միջոցով պետք է «Կորչի

անգրագիտություն» ընկերության բջիջի մեջ քաշվեն գյուղի ուսուցիչները, կուսակցականներն ու կոմսոմոլը. զորացրված կարմիր բանակայինը և գյուղի առաջավոր գեղջկուհիները։ Պատգամավորուհին պետք է բջիջի բյուրոյում հանդիսանա ակտիվ անդամներից մեկը, աշխատելով նորանոր ուժեր գրավել հիշյալ ընկերության աշխատանքներին։ Իր գործունեությամբ նա պետք է բարձրացնի հասարակական կարծիքը անգրագիտության վերացման վերաբերյալ։

ԽՄԲԱԿԱՅԻՆ ՅԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՍԻՍՏԵՄԸ

Չնայած կանանց դպրոց գնալու բուռն ցանկության, նրանք սովորելու հնարավորություն չունեն, անտեսությամբ և յերեխաներով զբաղված լինելու պատճառով։ Հենց այդ պատճառով է, որ անգրագիտության վերացման Համամիութենական Արտակարգ Հանձնաժողովը՝ լիկ-կայանների հետ միասին, առաջադրում է կազմակերպել անհատական և խմբակային ուսուցման սիստեմը. այսինքն ուսուցումը պիտի կատարվի տներում անհատների և խմբակների հետ։ Յուրաքանչյուր շրջ-կենտրոնում, կազմակերպվում են «հիմնական լիկ-կայաններ», վորոնց պարտականությունն է հաշվի առնել, սովորել ցանկացող գեղջկուհիներին, մատակարարել նրանց ձեռնարկներ, գտնել ուսուցիչներ և այլն։ Ամենից առաջ պատգամավորուհին պետք է կապվի նման լիկ-կայանի հետ, վորպեսզի նրա միջոցով, հնարավոր լինի տվյալ շրջանի գեղջկուհիների միջից վերացնել անգրագիտությունը, ոգնել լիկ-կայանի վարիչին՝ ուսուցիչներ ճարելու գործում և այլն։

«Հիմնական լիկ-կայաններին» կից կազմակերպվում են «անգրագիտության վերացման» անկյուններ, վորտեղ համախմբում են անհատական և խմբակային պարապմունքներին վերաբերվող բոլոր նյութերը և զանազան մեթոդիկական ձեռնարկներ, այն ընկերների համար, վորոնք իրենց վրա յեն վերցնում ուսուցման աշխատանքը։

Վորովհետև այժմ մեծ կարիք ենք զգում ուսուցիչների, մենք կարող ենք բացի սոց-դաստ-ի ուսուցիչներից, ոգտագործել նաև գրագետ կոմսոմոլիստներին, պատգամավորուհիներին և այլն։ Անհրաժեշտ է, վորպեսզի նմանները անցնեն համապատասխան գործնական դասընթացքներ կամ փորձառու ուսուցչի զեկավարությամբ, վորոշ ժամանակով աշխատեն մի վորևե դպրոցում։ Այդպիսի պատրաստականություն ստանալուց հետո և ծանոթանալով «Կորչի անգրագիտություն» ընկերության կողմից հրատարակված

բակված մեթոդիկական ձեռնարկների հետ—պատգամավորուհին կարող և հաջող կերպով վերացնել անգրագիտությունը իրենհանձնված խմբակում։

ԿՈՄ. ՅԵՎ ԼԿՅԵՄ ԲՋԻՋՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Կոմ. և Յերիտմիության բջիջները են, վոր պետք է կազմակերպեն անգրագիտության վերացման գործը գյուղում։ Այդ գործի կազմակերպման համար անհրաժեշտ է՝

ա) Հաշվի առնել տվյալ շրջանի կուլտուրական ուժերը։

բ) Հաշվի առնել տվյալ շրջանի 14-15 տարեկան հասակ ունեցող անգրագետներին։

գ) Գյուղում գտնվող կուլտուրական ուժերին կցել անգրագետների հետ։

դ) Հաշվեառման վերցնել տվյալ շրջանի գրագետների թիվը, կցելով վերջիններիս անգրագետներին։

յե) Կատարել իր շրջանի՝ ամբողջ աշխատանքի հաշվեառումը։

զ) Հաշվեառման յենթարկել խմբակներում և բջիջներում տարվող անհատական ուսուցման աշխատանքը։

է) Ոգտագործել կոմսոմոլիստներին, «հինգնական լիկ-կայան» և խմբակային պարապմունքների համար շենքեր գտնելու և վերանորոգելու գործում։

ը) Հինգնական կայանները առաջին հերթին կազմակերպել խրճիթ-ընթերցարանների, կամ յերիտմիության բջիջներին կից։

թ) Լիկ-կայանները ավարտողներին՝ գրավել կիսագրագիտության վերացման գլուխներում և ակտիվորեն առաջ քաշել նրանց հասարակական աշխատանքում։

ժ) Անգրագիտության հարցը լայն լուսաբանել հասարակական ժողովներում և յերիտասարդության մեջ։

ի) Ամենուրեք, խրճիթ - ընթերցարաններում կազմակերպել անգրագիտության վերացման անկյուններ։

լ) «Կորչի անգրագիտություն» ընկերության աշխատանքներում ցույց տալ ակտիվ մասնակցություն։

ԻՆՉՊԵՍ ԳՐԱՎԵԼ ԱՆԳՐԱԳԵՏՆԵՐԻՆ ԴԵՊԻ ԼԻԿ-ԿԱՅԱՆՆԵՐԸ

Անգրագետներին լիկ-կայան գրավելու աշխատանքի հիմքում, պետք է դնել հոժարակամ հաճախելու սկզբունքը։ Այդ խնդրի իրագործման համար, պիտի սիստեմատիկորեն ոգտագործել ագիտացիայի բոլոր միջոցները։

ա) Կազմակերպել ներկայացումներ, ագիտ-դատեր, գրագիտության տարածման յերեկոներ, քաղաքի և գյուղի սովորողների

մոտեցման (смычка) յերեկոներ, զեկուցումներ անել այդ աշխատանքի հաջողությունների մասին համայնական ժողովում, կոնֆերանսներում, մաժուլի մեջ, խրճիթ-ընթերցարաններում, գրադարաններում, ակումբներում և այլն։

բ) Ոգտագործել այդ աշխատանքներում՝ արձակուրդով գյուղ վերադարձած ուսանողներին, կարմիր բանակայիններին և «Կորչի անգրագիտություն» ընկերության բջիջի անդամներին։ Ագիտացիայի հաջողությունը ապահովելու համար, պետք է ուժեղացնել տեղերին գեղարվեստական նյութերի մատակարարման գործը, (պլակատներ, գրականություն, լոզունգներ և այլն)։

2. Բացի վերոհիշյալից, առաջադրվում է անցկացնել՝

ա) Խորհրդային, հասարակական և պրոֆեսիոնալ աշխատանքներում առաջ քաշել լիկ-կայանավարտներին։

բ) Կիրառել գրագետի շեֆությունը անգրագետի վրա։

գ) Լավ սովորողներին տալ հասարակական գովասանք և այլն։

3. Նրանց ամենեսակնապես հետաքրքրելու նպատակով, անհրաժեշտ է վերամշակել հետևյալը՝

ա) Սովորողներին առաջին հերթին հատկացնել (արտոնության պայմաններով) սերմի փոխառություն, գյուղատնտեսական մեքենաներ և այլն։

բ) Գեղջկուհիների և բանվորուհիների, լիկ-կայաններում ընտրված ժամանակ, վերջինների յերեխաներին հերթից դուրս ընդունել տալ դպրոցներում և տեղավորել մանկատներում ու մուրներում։

գ) Աշխատել վորպեսզի գեղջկուհիները ձրիարար հաճախեն ներկայացումներ և ատանան թերթեր։

4. Լիկ-կայանների պարապմունքներին չընհաճախողների դեմ մղվող պայքարում, պետք է ունենալ մանկավարժական մոտեցում, աշխատելով ուսուցմանը տալ մի այնպիսի բնույթ, վոր իր բովանդակությամբ մոտ լինի սովորողի կենցաղին ու կենսական շահերին։ Այդ աշխատանքները հաջողությամբ պահելու համար, անհրաժեշտ է սերտ կապ լիկ-կայանների և քաղ-լուս հիմնարկների հետ։

ՊԱՅՔԱՐ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԴԵՄ

Անգրագիտության վերացման աշխատանքի մեջ՝ կարևոր տեղ է բռնում անգրագիտության վերադարձի հարցը, վորում մեծ անելիք ունի պատգամավորուհին։

Վորպեսզի գրագիտություն սովորածները մի վորոշ ժամանակից հետո, չմոռանան իրենց սովորածը ու նորից անգրագետներ չդառնան, պետք է ձեռք առնել հետևյալ միջոցները—կազմակերպել կիսագրագիտության վերացման խմբակներ, կիսագրագետ պատգամավորուհիների և անգրագիտության լիկ-կայաններում ավարտած գեղջկուհիների համար։

Բացի կիսագրագետ խմբակներից, պիտի կազմակերպել նաև ամսագրերի, գրքերի և թերթերի բարձրաձայն ընթերցում—այդ աշխատանքին գրավելով լավ գրագետ ընկերների։

Անգրագիտության վերադարձի դեմ կռվելու համար, կա մի այլ միջոց ևս—կազմակերպել գյուղ-թղթակիցների խմբակ, վորոնք գրելու յեն մեր մամուլի եջերում։

Լիկ-կայանները ավարտածներին. ընթերցանության գրքեր մատակարարելու համար, անհրաժեշտ է նրանց կապել մոտակա խրճիթ-ընթերցարանի կամ գրադարանի հետ. լավ սովորած գեղջկուհիներին պիտի քաջալերել գրել նրանց մասին «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրում և թերթերում, գրել նրանց անունները խրճիթ-ընթերցարանի կամ կարմիր անկյուններում գտնվող՝ Կարմիր Տախտակի վրա։

Հաճախ, նման միջոցները դառնում են գրագիտության ուսուցման համար բավականին լավ միջոցներ։

Բաղ-լուս-վարի կողմից կազմակերպվելիք դասընթացքներին պետք է ուղարկել գրագետ կանանց, վորոնց հետագայում հնարավոր կը լինի ոգտագործել, անգրագիտության վերացման ասպարիզում։

Գեղջկուհիների միջից անգրագիտության վերացումը ամենադժվար խնդիրներից մեկն է։ Խնդրի լուծումն հնարավոր է գիտակից կանանց առաջավոր ուժերի միջոցով, վորոնք թե իրենց որինակով և թե աշխատանքով պիտի վարակեն նաև մյուսներին։

Անգրագիտության վերացման աշխատանքի ընթացքի մասին, պետք է տրվեն հաշվետվություններ պատգամավորական ժողովներում, վորտեղ պատգամավորուհիները ստանում են ցուցումներ հետագա աշխատանքների համար։

Վոչ մի դեպքում չպիտի մոռացության տալ, թե վորպիսի խոշոր նշանակություն ունի անգրագիտության դեմ մղվող պայքարը, մեր պետության ամբողջ շինարարության մեջ։

ԳԵՂՋԿՈՒՀԻՆ ՅԵՎ ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ

Շրջանում գտնվող խրճիթ-ընթերցարանը հանդիսանում է քաղ-լուս ամբողջ աշխատանքի ղեկավարը։ Նրա անելիքների մեջ է մտնում, գյուղի բնակչության քաղաքական գիտակցության և կուլտուրական զարգացման բարձրացումը։ Բայց մինչ այժմ, խրճիթ ընթերցարանները կարողացել են մեծ մասամբ ընդգրկել միայն տղամարդկանց, իսկ գեղջկուհին շատ սակավ է հաճախում խրճիթ-ընթերցարան։ Այժմ արդեն մի քանի խրճիթ-ընթերցարաններ, խոստովանել են գեղջկուհիների մեջ տարվելիք աշխատանքների վողջ կարևորությունը։ Նրանք կազմակերպում են տանքների «գեղջկուհու անկյուններ», կամ շարաթվա մեջ առանձին մի որ հատկացնում գեղջկուհիների համար։

Տեղերից մեզ հասած տեղեկություններն ու զեկուցումները հաստատում են, վոր խրճիթ-ընթերցարանների մեծ մասը, հասկացել են գեղջկուհիներին խրճիթի աշխատանքներին գրավելու լուրջությունն ու կարևորությունը։ Յեվ վորպեսզի այդ աշխատանքը արդյունավետ լինի և խրճիթ-ընթերցարանը մոտենա, կարևոր դառնա գեղջկուհու համար, անհրաժեշտ է գիտենալ, թե ինչ ձևերով պիտի մոտենալ գեղջկուհուն։ Ճիշտ են ասում մեր թղթակիցները, վոր «վաստորեն գյուղի կինը ավելի պահպանողական է քան տղամարդը. բայց այնքան, վորքան կանայք հանդիսանում են «յերկտակ վնաս կրողները» գյուղացության մեջ և վորքան մենք հնարավորություն ունենանք, հաճախ շոշափելու նրա կարևոր կողմերը և բավարարել նրա պահանջները, նրանք այնքան ավելի խորը կարող են հասկանալ Խորհրդային իշխանությանը—քան տղամարդիկ»։

Հենց գրանումն է կայանում ամբողջ գաղտնիքը, թե վոր դիպչել նրա «հիվանդագին լարերին»։ Անհրաժեշտ է վորպեսզի խրճիթ-ընթերցարանը կարողանա գիտենալ թե տվյալ մոմենտում ինչով է հետաքրքրվում կինը և ինչ հարցեր են նրա համար ավելի հարվածային. կան արդիոք ապահարզանի դեպքեր, անհրաժեշտ է մասուրներ կազմակերպել թե վոչ, կարմիր բանակայինների կանայք ստանում են արդիոք նպաստ, չքավոր գեղջկուհին ինչի կարիք է զգում և այլն։ Գեղջկուհիներին հետաքրքրող հարցերի և նրա կենցաղին մոտիկ ծանոթանալուց հետո միայն, կարելի յե սկսել նրանց մեջ աշխատանք տանելու գործը։

Խրճիթ-ընթերցարանի աշխատանքի ծրագիրը, թե մասնայական և թե խմբակային աշխատանքում, պետք է ընդգրկի և արտացոլի գեղջկուհուն հետաքրքրող որվա ցավոտ խնդիրները։

ԶՐՈՒՅՑՆԵՐ ՅԵՎ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ

Խրճիթվարը զրույցների և զեկուցումների նյութերի ընտրության ընթացքում, պետք է մտածի նաև գեղջկուհու մասին։ Գեղջկուհին ցանկանում է իմանալ, թե ինչպես խնամել փոքր յերեխաներին, ինչով կերակրել և ինչպես բժշկել հիվանդության դեպքում—նման հարցերի շուրջը խրճիթում կարելի յե կազմակերպել զրույցներ։ Բժիշկը կը զրուցի գեղջկուհիների հետ—մանկական ու կանանց հիվանդությունների և յերեխաների խնամելու մասին. նրանց համար բավականին հասկանալի ու պարզ լեզվով։ Հարկավոր է նույնպես պարզել գեղջկուհիներին ամուսնության ու ընտանիքի նոր իրավունքների մասին։ Նման զեկուցումների ու զրույցների կազմակերպումով՝ գեղջկուհուն կարելի յե գրավել դեպի խրճիթ-ընթերցարանը։

ԲԱՐՁՐԱՁԱՅՆ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Խրճիթ-ընթերցարանը կազմակերպում է նաև գրքերի և թերթերի բարձրաձայն ընթերցումներ։ Այստեղ նույնպես հարկավոր է հաշվի առնել, թե գեղջկուհուն ինչ հարցերն են ավելի հետաքրքրում։ Թերթերից կարելի յե բավականաչափ նյութեր ընտրել, վորոնք կարող են հետաքրքիր լինել գեղջկուհուն։ Պիտի կարդալ այնպիսի գրքեր, վորոնք դյուրեկան և հասկանալի յեն նրա համար։ Գեղջկուհին սիրում է լսել կնոջ ազատագրման պատմությունից, պատգամավորուհիների աշխատանքի մասին և այլն։ Այդ նպատակի համար, բարձրաձայն ընթերցման ժամանակ լավ է ոգտագործել «Հայաստանի աշխատավորուհի» ամսագիրը։ Զնայած նրանցից շատերն են սիրում մեր ամսագիրը, սակայն շատ քչերն են միայն կարողանում նրան կարդալ։ Ընթերցումից հետո, պիտի զրուցել կարդացածի մասին — մտքերի փոխանակության նպատակով։ Այդ զրույցները կոգնեն, կարդացած ժամանակ վորևե մի բան չհասկացած գեղջկուհիներին՝ պարզելու հայդպիսները։ Բարձրաձայն «ընթերցման յերեկոյի» լավ անցկացումը, մյուս անգամ կ՝գրավի ավելի մեծ քանակությամբ հաճախորդների։

ԵԿՍԿՈՒՐՍԻԱՆԵՐ

Լինում են դեպքեր, յերբ խրճիթ-ընթերցարանը կազմակերպում է եքսկուրսիաներ։ Բայց առհասարակ շատ քիչ են մտածում այդ եկսկուրսիաներին կանանց ևս մասնակից դարձնելու։ Այս հարցում նույն-

պես առանձնահատուկ մոտեցում է հարկավոր։ Առաջին անգամ կարելի յե կազմակերպել եքսկուրսիաներ միայն կանանց համար։ Տանել նրանց մոտիկ քաղաքը և ծանոթացնել, որինակ՝ մանվածային և այլ գործարանների հետ։ Տանը մանվածային գործով զբաղվող գեղջկուհու համար հետաքրքիր է տեսնել, թե ինչպես է կատարում նույն այդ աշխատանքը բանվորուհին գործարանում։ Քաղաք այցելելիս, նրանց կարելի յե տանել մուզեներ և մանկական հիմնարկները, վորոնց դիտումը հաճելի յե գեղջկուհիների համար։

Գեղջկուհիները կանանց եքսկուրսիաներին մասնակցելուց հետո, կը մասնակցեն նաև ընդհանուր եքսկուրսիաներին, խորհրդային տնտեսությունների և ցուցադրական դաշտերը տեսնելու համար։ Գեղջկուհին պետք է գիտենա, վոր եքսկուրսիաները կարող են նրան հսկայական ոգուտներ տալ։

ԱԳԻՏ-ԴԱՏԵՐԻ ՅԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Խրճիթ-ընթերցարանի աշխատանքում մեծ տեղ է գրավում ներկայացումների, ագիտ-դատերի և կենդանի լրագրների կազմակերպումը. բայց ըստ իրենց բովանդակության, նրանք միշտ չեն հետաքրքրել գեղջկուհուն։ Պետք է ընտրել այնպիսի նյութեր, վորոնք կարող են նրանց ևս հետաքրքրել։ Գեղջկուհիները ամենամեծ հաճույքով կը նայեն պատմավորուհու վրա կազմակերպված դատին կամ մի այնպիսի պիեսայի ներկայացմանը, վորը գրված է հատկապես գեղջկուհիների համար։ Գեղջկուհու համար պետք է նաև տեղ հատկացնել կենդանի լրագրում և նրան մասնակից դարձնել նրա աշխատանքներին։

Այսպիսով գեղջկուհին հաճախելով զրույցներին և զեկուցումներին, մասնակցելով եքսկուրսիաներին, ներկայացումներն ու դատերը տեսնելով, նա կը սովորի խրճիթ-ընթերցարան հաճախելը և կը հասկանա նրա ոգտավետ լինելը։ Այդ դեպքում, հնարավոր կը լինի գեղջկուհիներին մասնակից դարձնել խրճիթ-ընթերցարանի խորացրած (խմբակների) աշխատանքին։ Համարյա յուրաքանչյուր խրճիթ-ընթերցարանում, գոյություն ունեն կոոպերատիվ, գյուղատնտեսական և բաղաքական խմբակներ. հենց այդ խմբակներումն է, վոր պետք է մասնակից դարձնել գեղջկուհիների ավելի առաջավոր և ակտիվ մասին։ Խմբակավարը ուշադրության պիտի առնի այն հանգամանքը, վոր նրա ունկնդիրների մի մասը կանայք են։ Անհրաժեշտ է խմբակում ստացած

գիտելիքները կապել նրա առօրյա կյանքի հետ։ Գեղջկուհին պիտի հասկանա, վոր իր ստացած գիտելիքներն անմիջապես կարող է գործադրել կյանքում և դրանով բարելավել իր ապրուստը։ Գյուղատնտեսական խմբակում ստացած գիտելիքների համաձայն, նա կարող է վարել իր տնտեսությունը (բանջարանոց, թռչնապահություն և այլն)։

ԽՄԲԱԿՆԵՐ

Անհրաժեշտ է գեղջկուհուն գրավել խմբակային ակտիվ աշխատանքներում։ Այն բոլորը, ինչ վոր նրան անհասկանալի է, պետք է, անմիջապես բացատրել նրան։ Այլ պես խմբակը կարող է նրան ձանձրացնել ու նա չբավարարելով աշխատանքներից, կլքեռանա։

Խրճիթ-ընթերցարաններին կից կազմակերպել կանանց համար հատուկ խմբակներ, նամանավանդ աշխատանքի սկզբնական շրջանում։ Որինակ՝ տնային տնտեսություն վարելու խմբակ, վորում գեղջկուհիները կը սովորեն տնային կենդանիների և թռչունների ճիշտ խնամելու ձևերը։ Խմբակը նրան կը սովորեցնի, թե ինչպես պահել բանջարեղենն ու մրգեղենն, ինչպես աղ դնել վարունկն ու կաղամբը և այլն։

Մի քանի խրճիթ-ընթերցարաններ կազմակերպում են կարու ձևի խմբակներ, ուր գեղջկուհիները սիրով հաճախում են։ Նա ցանկանում է լավ կարել և ուղիղ ձևել. հավանական է, վոր այդ պատճառով էլ նա հաճախում է խրճիթը։ Շատ լավ կը լինի, վորպեսզի աշխատանքի ընթացքում, զրույցներ կազմվեն զանազան նյութերի վերաբերյալ—Լենինի կյանքն ու գործունեությունը, կուսակցության, խորհրդային իշխանության մասին և այլն։ Առհասարակ ընդունված սովորություն է դարձել խրճիթ-ընթերցարանում գյուղական յերեկույթների կազմակերպումը, վորտեղ գեղջկուհիները գալիս են ամեն մեկը իր ձեռքի աշխատանքով—մեկը իլիկ է մանում, մյուսը գուլպա յե գործում, 3-րդը ձեռագործ է անում և այլն։ Կարելի յե շարթը մի անգամ կազմակերպել գյուղական նման յերեկույթներ, վորոնք միևնույն ժամանակ պիտի ոգտագործվեն նաև զրույցների-բարձրաձայն ընթերցման համար։ Հաճախորդներից կարելի յե կազմել բարձրաձայն ընթերցման մի խմբակ, մեծայուն ունկնդիրներով։ Խրճիթ-ընթերցարանում կարելի յե ունենալ նույնպես գեղջկուհիների համար մի շարք խմբակներ։

ԱՆԿՅՈՒՆՆԵՐ

Հաճախ խմբակները խրճիթ-ընթերցարանում պատրաստում են «անկյուններ»։ Անկյուններում հավաքում են բոլոր այն նյութերը, վորոնք կա-

րևոր են խմբակների աշխատանքի և նրանցում մասնակցողների համար։ Գեղջկուհիներին խրճիթ-ընթերցարան գրավելու համար, պետք է կազմակերպել նման «անկյուններ» նաև գեղջկուհիների համար։ Կարելի յե կարուձևի խմբակում՝ ձեռագործով զբաղվողների աշխատանքից կազմակերպել «ձեռագործի անկյուն» կամ «գեղջկուհու անկյուն»։

Այդ անկյունում պիտի հավաքել բոլոր այն գրքերը, պլակատները և լոզունգները, վորոնք ըստ իրենց բովանդակության վերաբերվում են գեղջկուհիներին, զարդարելով անկյունը կանանց ազատագրման շարժման ղեկավարների՝ Կրուպսկայայի, Կլարա Ցետկինի, Սամոյլովայի և ուրիշների նկարներով։ Անկյան միջոցով խմբակի անդամ-գեղջկուհիների և խրճիթ-ընթերցարան հաճախողների մեջ, տարվում է աշխատանք— զրույցների և «Հայաստ. Աշխ.» ամսագրի բարձրաձայն ընթերցման ձևով։ Միության սահմաններում կան խրճիթ-ընթերցարաններ, վորոնք կազմակերպում են «մայր և մանուկ» անկյուններ, ուր կենտրոնացվում են մոր և մանկան բաժնին վերաբերող բոլոր նյութերը և նրանց շուրջը գեղջկուհիների համար կազմակերպվում են զրույցներ։

Հայաստանում խրճիթ-ընթերցարաններին կից չունենք նման անկյուններ. բայց ամեն կերպ պիտի աշխատել, վորպեսզի կազմակերպվեն այդպիսի անկյուններ, աշխատելով սովորեցնել գեղջկուհուն մանկան խնամելը և այլն։

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՍԵՂԱՆ

Խրճիթ-ընթերցարանի մյուս աշխատանքներում, պիտի նախորդը հաշվի առնել գեղջկուհիների պահանջներն ու շահերը և ըստ հնարավորության բավարարել։ Տեղեկատու սեղանի հերթապահը պետք է գիտենա, վոր գեղջկուհին նույնպես միշտ կարող է գալ նրա մոտ որևե տեղեկանք ստանալու համար։ Մի շարք խրճիթ-ընթերցարաններ իրենց հաշվետվության մեջ շեշտել են, վոր տեղեկանքների մեծ մասը վերաբերվում է գյուղատնտեսական և ամուսնական հարցերին։ Վերջին հարցում մտնում են այն բոլոր խնդիրները, վորոնք ծագում են ապահարզան տալու ժամանակ, այն է՝ ընտանիքի պահպանման, իրերի բաժանման մասին։ Մեծ մասամբ նման հարցերում վարվող կողմը հանգիստանում է գեղջկուհին, վորին տեղեկատու սեղանը պիտի ոգնի խորհուրդներով, գրի դիմում և ուղղի այդպիսին ուր հարկն է։

Գեղջկուհու կյանքի ծանր լծակներին՝ ցույց տրված բարի խորհուրդն ու ոգնությունը, կը տրամադրեն նրան դեպի խրճիթ-ընթերցարանը։

ՊԱՏԻ ԼՐԱԳԻՐԸ

Խրճիթ-ընթերցարանների համարյա մեծ մասը լույս են ընծայում պատի լրագրներ։ Գյուղում նա հանդիսանում է հասարակական կազմակերպիչը։ Շնորհիվ այն հանգամանքի, որ պատի լրագիրը հրապարակորեն լուսաբանում է գյուղի թե լավ և թե վատ կողմերը, կարգավորում է գյուղի կյանքը։ Գյուղում պատի թերթը կարող է գեղջկուհու ոգնականը հանդիսանալ։ Քորովհետև գեղջկուհու կյանքում, նամանավանդ տանը—ընտանիքում, կան ցավոտ կողմեր, որոնք ճնացել են անցյալից և պիտի անպատճառ վերցնել։

Մինչև այժմ, գյուղում տղամարդը դեռ ծեծում է իր կնոջն առանց պատժվելու, իսկ հարբած ժամանակ յերեխաներին ծեծելով անդամալույծ և դարձնում։ Գյուղում նոր կենցաղի կառուցումը դժվար է։ Այս գործում վոչ պակաս դեր պիտի կատարի պատի լրագիրը։ Լրագիրը անպատվելով այն գյուղացուն, որը իր կնոջը ծաղր ու ծանակի յե յենթարկում, կը տախի նրան խելքի գալ և հնարավորություն կը տա կնոջը, դուրս գալու իր խավար կյանքից։

Պատի լրագիրը պետք է աջակցի, գեղջկուհիներին հասարակական աշխատանքներում առաջ քաշելու գործին։ Այդ իսկ պատճառով, պատի թերթում գեղջկուհուն պիտի հատկացնել առանձին անկյուն։ Գեղջկուհիները նրանում կը գտնեն իրենց կյանքից ու աշխատանքից։ Պիտի գրել նույնպես առաջ քաշված գեղջկուհիների մասին։ Յեթե գյուղ-խորհրդի անդամ-գեղջկուհիները լավ են աշխատում, պատի թերթը նրանց պետք է գովաբանի։ Դրանով բնակչության առաջ կը բարձրացնի խորհրդի անդամ գեղջկուհիների հեղինակությունը, դրանով հենց իրենք կը քաջալերվեն և վերընտրությունների ժամանակ, ավելի հեշտ կը լինի գեղջկուհիներին մասնակից դարձնել խորհրդային շինարարության գործին։

ԼԻԿ-ԿԱՅԱՆՆԵՐԸ

Լիկ-կայանը իր աշխատանքում սերտորեն կապված է խրճիթ-ընթերցարանի հետ։ Նա համարյա միշտ աշխատում է խրճիթ-ընթերցարանում։ Այս դեպքում, վերջինս պետք է ոգնի լիկ-կայանի՝ կանանց մեջ տարվելիք անդրադիտության վերացման աշխատանքին։ Անդրադիտությունը վերացնող դասատուն, պետք է պարապմունքների

ժամանակ ուշադիր լինի գեղջկուհիների նկատմամբ, հետևի նրանց կանոնավոր հաճախելուն և նրանց կատարած հաջողություններին։ Թույլ սովորող գեղջկուհիների հետ պիտի պարապել առանձին, վորպեսզի նրանք չը թողնեն սովորելու ցանկությունը և չը կորցնեն իրենց ուժերի ու ընդունակությունների վրա ունեցած վստահությունը։

ԳՐԱԴԱՐԱՆ

Գեղջկուհի-ընթերցողի նկատմամբ, պիտի ունենալ առանձին ուշադրություն։ Այդպիսիները մեզ մոտ դեռ շատ քիչ են։ Գողջկուհուն պիտի խորհուրդ տալ թե ինչ կարդալ. իմանալ ինչը չի հասկացել իր կարդացածից և նրան բացատրել այդ մասին։ Գրքեր քիչ կարդացող գեղջկուհիների մեջ, առանձին հետաքրքրություն զարթեցնելու նպատակով, պետք է կազմակերպել նրանց հետաքրքիր գրքերի պատմելը։ Կարելի յե գեղջկուհիների համար կազմակերպել գրքերի ցուցահանդես։ Յուրաքանչյուր գրադարանում պիտի ունենալ «Հայատանի աշխատավորուհի» ամսագիրը։ Գրադարանը պետք է ձգտի, վորպեսզի գեղջկուհի-ընթերցողների թիվը աճի։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ի վերջո, խրճիթ-ընթերցարանը կարող է գեղջկուհուն ոգնելու միջոցով, զբաղվել նրան քաղ-լուս աշխատանքներին և նվաճել նրա հեղինակությունն ու սերը։ Խրճիթը կարող է իր վրա վերցնել միջոցների հայթայթման կազմակերպման և ոգնության գործը։

ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ՄԵՋ ԱՇԽԱՏՈՂ ՇՐՋԱՆԳԱՌՈՒՀՈՒԴԵՐԸ

Խրճիթ-ընթերցարանի՝ կանանց մեջ տարած ամբողջ աշխատանքը չի տա ցանկացած արդյունքներ, յեթե նրա աշխատանքին ակտիվ չմասնակցեն իրենք գեղջկուհիները, նամանավանդ ինքը հրահանգչուհին։ Գյուղում կինը ամենի աշխատակիցը մշտական մոտիկ հարաբերության մեջ է գեղջկուհիների հետ։ Նա ծանոթ է նրա հոգսերին ու կարիքներին։ Դրա համար էլ անհրաժեշտ է, վորպեսզի նա մասնակցի խրճիթ-ընթերցարանի աշխատանքին։

Համաձայն շրջ. խրճիթ-ընթերցարանների վերաբերյալ կանոնադրության—նրան կից պետք է լինի քաղ-լուս կոմիտե (նա հանդիսանում է խրճիթի խորհուրդը)։ Շրջանային քաղ-լուս կոմիտեներում, պետք է լինի պատգամավորուհիների ներկայացուցիչը։ Լավ կլինի, յեթե այդ ներկայացուցիչը լինի հենց ինքը հրահանգչուհին։ Բնակչության կողմից ընտրված շրջ. քաղ-լուս կոմիտեներ

տեղերում, առաջավոր գյուղացիների հետ մեկտեղ, անհրաժեշտ և նաև մտցնել 1-2 պատգամավոր-գեղջկուհիներ։

Քիչ չեն պատահում դեպքեր Անդրկովկասի պայմաններում, յերբ գեղջկուհին հրաժարվում է գնալու խրճիթ-ընթերցարան միայն նրա համար, վոր այնտեղ հաճախում են նաև տղամարդիկ։ այս պատճառով ել անհրաժեշտություն զգացվեց, ստեղծելու մի շարք, «գեղջկուհու անկյուններ», վորոնք նման դեպքերում փոխարինում են խրճիթներին։ Սակայն այսորինակ աշխատանքի փորձը ցույց տվեց, վոր քաղ-լուսավարները խրճիթի աշխատանքները չեն կապում «անկյունի» աշխատանքների հետ, (խակ բան-գեղջ. բաժինները և հրահանգչուհին ձեռք չեն առնում համապատասխան միջոցներ), մինչդեռ «անկյան» վրա պետք է նայել վորպես անցման մի միջոցի, վոր ծառայելու յե գեղջկուհիների շահերին։

Խրճիթ-ընթերցարանի և գեղջկուհիների հրահանգչի սերտորեն կապակցված աշխատանքի միջոցով, կը հաջողվի իրագործել այն բոլոր խնդիրները, վորոնք դրված են խորհրդային իշխանության առաջ, գեղջկուհիների լայն խավերի քաղաքական ու կրթական մակարդակի բարձրացման ասպարիզում։

ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻ ՄԵՋ ՏԱՐՎԵԼԻՔ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ ՄԱՍԻՆ

Գեղջկուհու կրոնամոլության արմատները պիտի վորոնել նրա կենցաղի մեջ։ Դրա հիմնական գծերն են՝ դարերի ստրկության և հարատահարության մնացորդները, նեղ շրջապատը, ծանր և հոգնեցուցիչ աշխատանքը։ Գյուղական տնտեսության մեջ կնոջ կրոնամոլությունը կապված է նրա հարատահարման հետ։

Կրոնը հանդիսանում է «հոգևոր ճնշման» ձևերից մեկը։ Նա գեղջկուհուն դաստիարակում է այն վոգով, վոր գեղջկուհին հանդիսանում է յերկրի ստորին արարածը, տերերի և իր ամուսնու ստրուկը։ Հոգևոր տերերը այս բոլորին հասնում են ճարպիկ միջոցներով, վոչ այնքան կնոջ մտքի, վորքան նրա զգացմունքի և կամքի վրա իշխելով։ Յեկեղեցական ծիսակատարությունը, վորը հասցնում է հուզման և արցունքների, աղոթքներն վորոնք կյանքի ամեն մի քայլափոխում ուղեկցում են նրան և մայր աստվածածնի նկարը, վորը հանդիսանում է հնազանդության, մաքրության և սիրո նշան ու միշտ խավարի մեջ պահում գեղջկուհուն

Հոկտեմբերյան հեղափոխությունը մահացու հարված տվեց այդ խորամանկություններին։ Կալվածատերերն ու կապիտալիստները գեն շպրտվեցին և դա մի հեղաշրջում եր վոչ միայն տրնտեսագիտության այլև գյուղացության գիտակցության մեջ։ Հեղափոխական հրդեհը, մարդկանց շարժումը, նորանոր հոսանքները, քաղաքական պայքարն ու աշխատանքը գյուղում, կոմբջիջն ու կոմսոմոլը, ակումբը, առանց քահանայի ամուսնությունը—այս բոլորը ջախջախեցին գյուղական հին կենցաղը և նրանում մտցրին հեղափոխական նոր հոսանք։

Գեղջկուհուն կրոնից ազատագրելու գործը կատարվել է նրա տնտեսական և ընտանեկան ստրկության ազատագրման ուղիով։ Դրանումն է հակա-կրոնական պրոպագանդայի բովանդակությունը։ Դուրս յելնելով գործնական խնդիրներից, նա պետք է սերտորեն կապվի այն հարցերի հետ, վորոնք կանգնած են գեղջկուհու առաջ, գյուղի հասարակական կյանքում ու կենցաղում։

Հակակրոնական պրոպագանդայի հիմնական մոմենտները հետևյալներն են՝

1. Ո՞ւմն է ծառայում կրոնը։ Որինակներ մոտիկ անցյալից՝ (կրոնը և պատերազմը, կրոնն և հեղափոխությունը, յեկեղեցին ու կալվածատերը և այլն) և ներկայից՝ (կրոնը և կուլակները)։

2. Կրոնը գյուղական կենցաղում։ Կնոջ տնտեսական և ընտանեկան ստրկությունը կալվածատերերի և կապիտալիստների տիրապետության անխուսափելի հետևանքն է։ Ինչպես կրոնը դաստիարակում ու ամրապնդում է կնոջ ստրկությունը։ Յեկեղեցին, ծիսակատարությունները, դավադրություններն ու կախարդությունը։ Կրոնի հայացքները կնոջ նկատմամբ։

3. Կրոնի դերը գեղջկուհու ազատագրման պայքարում։ Գյուղական տնտեսության բարձրացումը։ Գեղջկուհու մասնակցությունը խորհրդային և հասարակական աշխատանքում. նրա կուլտուրական աճումը։ Ասածս գոյությունը ժխտող նոր կենցաղը—ակումբը, պիոներական և կոմսոմոլական միությունների շարժումը, ֆիզկուլտուրան և բժշկությունը—կախարդության փոխարեն։ Կրոնը՝ վորպես արգելակիչ կնոջ ազատագրման։ Կրոնը դարերի ստրկության դրոշմ։ Կրոնը հանդիսանում է սուտ և ֆանտաստիկական պատկերացում իրականության մասին, վորը խանգարում է գեղջկուհուն ըմբռնել իրերը իրենց գոյությամբ։

4. Կրոնը և առողջապահությունը։ Թալիսմանների, սրբապատկերների, խաչերի համբուրելն հասակավորների և յերեխաների

կողմից, ճաշակումն և յերեխաների թլպատումն ու վարակումն. Հրեաների մոտ Միկվան։ Քահանան և հաղորդվելն մեռնելուց առաջ։ Կնունք։ Սիֆիլիս, խոլերա, տիֆը և այլն ու կրոնը։

5. Մանուկների անկրոնական դաստիարակությունը։ Տատմայրերը, «աստծով», «սատանայով» վախեցնելը ու ջղային հիվանդությունները, ֆանտաստիկական (համարյա կրոնական) հեքիաթներն ու չկատարված յերևույթները, վախով և կաշկանդված ու առանց կամքի դաստիարակելը, «աստված կոգնի», «աստված կը պատժի» և այլն։

Այս աշխատանքը ամբողջովին պետք է ընկնի ՀԿԿ (բ) և ՀԼԿՅԵՄ բջիջների վրա։

Հակակրոնական աշխատանքի ձևերը հետևյալն են.

1) Հակակրոնական գրականություն ձեռք բերելն և տարածելը։ Թերթերում և ամսագրերում կարելի յե գտնել գեղջկուհու կյանքում՝ կրոնի դերը լուսաբանող նյութեր։

2) Պլակատներ։ Կրոնի նյության դիտողական պատկերացումը յերբեմն ավելի մեծ նշակություն է ունենում, քան զրքույկը։ Պլակատը կարելի յե կախել խրճիթ-ընթերցարանում, ակումբում և այլն։

3) «Անաստված»-ի անկյունը կազմակերպվում է ակումբում, այստեղ պլակատներ, փոքր գրադարան, թերթեր։ Անաստվածների անկյուն կազմակերպվում է նույնպես ակումբում, այստեղ ևս կախել պլակատներ, փոքրիկ գրադարան, թերթերից և ամսագրերից կարել այն բոլոր նյութը, որոնք վերաբերում են հակակրոնական պրոպագանդային։

4. Ներկայացումներ։

5) Դասախոսություններ, զեկուցումներ, հակակրոնական գրույցներ։

6) Հոկտեմբերիկներ կազմակերպելը, քաղաքացիական թաղումները, հարսանիքներ և աստծուն չճանաչելու կենցաղային այլ ձևերը։

7) Գեղարվեստական յերեկոների կազմակերպումը տոն օրերին և նրանց նախորյակին, որպեսզի դրանով հետ պահել գեղջկուհիներին յեկեղեցի հաճախելու սովորությունից։

Մասսայական աշխատանքի հաջողությունը ամբողջապես կախված է նրանից, թե որքան կը հաջողվի իրենց գեղջկուհիներին գրավել դեպի այդ աշխատանքը։ Այն գեղջկուհիները, որոնք հրաժարվել են կրոնից, անհրաժեշտ է գրավել անաստվածների միությանը։

Որպեսզի նախապատրաստել նրանց հակակրոնական աշխատանքի համար, հարկավոր է կազմակերպել խմբակ, որի ծրագիրը պետք է հարմարեցնել վերը հիշած պրոպագանդայի հիմնական կետերին։

Իսկ գործնականորեն ինչ կարող է անել գեղջկուհի-անաստվածուհին։ Այստեղ է ահա որ մոտենում ենք մեր նյութի գլխավոր և հիմնական հարցին։

Աշխատանքի մատնանշած ձևերը գլխավորապես ընդգրկում են կույրերին, հավատ ունեցած՝ բայց ներկայումս տատանվող գեղջկուհիներին, հաճախ մեր ագիտացիան չի հասնում մինչ կենցաղի խորքերը, մինչև գեղջկուհիների ավելի հետամնաց շերտերը։ Այստեղ հարկավոր է անմիջական աշխատանք տանել, հենց կենցաղի մեջ ագիտացիա մղելու համար, որ և յուրաքանչյուր կուսակցականի, կոմ-յերիտականի, կին-կազմակերպչուհու կարևորագույն խնդիրներից մեկը պետք է լինի (նաև կարելի է ասել և գիտակից պիոների)։ Այս ագիտացիան պիտի տանեն ուսուցիչները, բժիշկները, գյուղատնտեսները և վերջապես անաստվածները, որոնց համար սրանք անմիջական նպատակ պիտի հանդիսանան։

Ինքնըստինքյան պարզ է, որ գեղջկուհիների մեջ չի կարելի տանել առանձնապես հակա-կրոնական պրոպագանդա, այլ պիտի հարմարեցնել այն մյուս աշխատանքների հետ։ այս աշխատանքը ամբողջապես պետք է ընկնի ԿՈՄ և յերիտմիության բջիջների վրա։

Այդ աշխատանքները պիտի տարվեն ստիճանաբար, բացատրելով կրոնի նյությունը։ Գեղջկուհիների համար հասարակ լեզվով կազմակերպված կրոնի զրույցները կտան ավելի օգուտ, քան անհասկանալի դասախոսությունները։ Պարզ է, որ գեղջկուհիներին պետք է մոտենալ խելացի կերպով և բերել գործնական օրինակներ, որոնք կարող են շահագրգռել նրանց։

Հրահանգչուհու պարտքն է օգնել գեղջկուհուն, զուրս գալ դարերի սարուկության ճիրաններից և գրավել նրան հասարակական աշխատանքում։

Անաստվածը հաղթանակ է տանում այն դեպքում, յերբ գեղջկուհին գնում է վոչ թե յեկեղեցի այլ ակումբ, պատգամավորական ժողով և այլն։ Ագիտացիան առաջին հերթին պետք է տանել յերիտասարդության վերաբերյալ։ գեղջկուհիների հետամնաց շերտերի համար հակակրոնական աշխատանքը վոչ այլ ինչ է յեթե վոչ Լենինիզմի սկզբնական պրոպագանդան, որի միջոցով գեղջկու-

հին գրավվում է գեղի խորհրդային, սոցիալիստական շինարարության ընդհանուր աշխատանքը և պայքարում ստրուկության և ճնշման բոլոր տեսակներից ազատագրվելու համար։

Ամենից լավ է, հակակրոնական զրույցներ մտցնել պատգամավորուհիների հետ անցվելիք զրույցների ցանկի մեջ (առանց հիշելու, որ աստվածների մասին և թողնել գեղջկուհին ինքը յեզրակացություն անի)։ Պետք է հիշել, որ մեր Անդրկովկասյան գյուղում, անհրաժեշտ է այդ հարցին մոտենալ չափազանց զգույշ, որպեսզի չփախցնել գեղջկուհիներին։ Ավելի լավ է գեղջկուհուն տալ տարրական ընագիտական տեղեկություններ և այդպիսով նախապատրաստել նրան, որ գեղջկուհիներին ինքը քննադատաբար վերաբերվի կրոնին և ծիսակատարության խնդրում։ Այդ աշխատանքը պետք է կազմակերպել և տանել միայն կուս-կոմի համաձայնությամբ։ Ծրագիրը մշակել ՀԿԿ ԲԱՆ-ԳՂՋ բաժինների հետ միատեղ, հաշվի առնելով տեղական պայմանները և կենցաղային առանձնահատկությունները։

ԳՅՈՒՂ-ԹՂԹԱԿՑՈՒՀԻՆ ՅԵՎ ՆՐԱ ՀԵՏ ՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Բան. և գյուղ-թղթակիցների թիվը մինչ կուս. 14-րդ համագումարը հասնում էր 215,000-ի, որոնցից միայն գյուղթղթակիցները կազմում էին 115,000։ ՀԿԿ (բ) 4-րդ համագումարի նախորյակին մենք ունեցել ենք 307 բան. և գյուղ-թղթակիցներ։ Զափազանց չնչին են նրանցում կին-թղթակիցները, իսկ գեղջկուհի թղթակիցները կազմում են ոչ ավելի քան 1 տոկոսը։ Դրանից 5-ը բանթղթակցուհի յեն և 3-ը գյուղ-թղթակցուհի։

Նույնիսկ մեր կանանց ամսագրերը դեռ բոլորովին նոր են սկսել բանվորուհիների և գեղջկուհիների միջից հավաքել մամուլի աշխատանքների առանձին կադրեր և գյուղթղթակցուհիների ընդհանուր թիվը, որոնք համախմբված են մեր կանանց ամսագրերի շուրջը, մոտավորապես կարելի յե հաշվել 1500։ Այդպիսով, ամբողջ ԽՍՀՄ մեկ կան մոտ 4500 գյուղթղթակցուհի։ Բանգյուղթղթակցուհիները կարելի յե հաշվել յերկու անգամ ավելի, մոտավորապես 10,000։ Կանանց ամսագրերի շուրջը կազմակերպված են 2500 բանթղթակցուհիներ։ ԱՄՑԽՀ մեջ բանգյուղթղթակցուհիները կազմում են ընդ. քանակի 4% (310 հոգի)։

«Հայաստանի աշխատավորուհի» ամսագիրը արդեն սկսել է իր շուրջը հավաքել բան. և գյուղ-թղթակիցների մի այն 7 տոկոսը։

Անշուշտ, բանվորուհի և գեղջկուհի թղթակիցների այդ քանակը դեռ բավական չե։ Անհրաժեշտ է լարել բոլոր ուժերը, որպեսզի նրանք լինեն ավելի շատ և ոչ թե միայն «Հ. Աշխ.» ամսագրում այլ և ամբողջ մամուլում։

Շրջ-հրահանգչուհին այդ ասպարեզում կարող է հսկայական գործ կատարել։

Ամենից առաջ, անհրաժեշտ է նրան հետաքրքրեցնել ամսագրեր, գրքեր և լրագրեր կարդալով, միևնույն ժամանակ բացատրել նրան մամուլի նշանակության մասին։ Այդ առթիվ կարելի յե դնել դեկուցումներ գեղջկուհիների և պատգամավորուհիների ընդհանուր ժողովներում։ Այդ աշխատանքում պիտի գրավել գյուղական ինտելիգենցիային՝ ուսուցչուհուն, բուժակուհուն, խորհրդում աշխատող ծառայողներին և այլն։

Շրջ-հրահանգչուհու յեկրորդ անելիքն է՝ սովորեցնել գեղջկուհուն գրել թերթում կամ ամսագրում։

Այս գործում մեծ նշանակություն ունի հրահրումը՝ ավելի ընդունակ գեղջկուհիներին և պատգամավորուհիներին, դրդել գրելու իրենց դիտողությունները։ Պիտի զարգացնել նրանց մեջ գրելու իրենց դիտողությունները։ Պիտի զարգացնել նրանց մեջ գրելու իրենց դիտողությունները, ինքնագործունեությունը, իրենց դիտողություններն ու կարծիքը նկատված սխալների ու անարդարությունների վերաբերյալ հրատարակելու, բացատրելով նրանց իրենց պարտականությունները։

Ի հարկե, կիսագրագետ և հետամնաց գեղջկուհուց լավ գյուղթղթակցուհի պատրաստելու համար, պահանջվում է համբերություն և մեծ զգուշություն։ Այստեղ կարող են լինել նաև սխալներ։ Նախ և առաջ պիտի սովորեցնել, ոչ միայն մամուլում արտայայտել իր դիտողությունները, այլև ստուգել, թե որքան ճիշտ են իր արած դիտողությունները։ Գյուղ-թղթակցուհին պիտի գրի ճշտությունը կամ այնպիսի տեղեկություններ, որոնց կարելի յե ստուգման յենթարկել փաստերով և վկաներով։ Հաճախ նրանք իրենց ցանկությունը ընդունում են որպես իրականություն և տալիս են սխալ տեղեկություններ իրենց շրջանի աշխատանքների մասին։

Շրջ-հրահանգչուհին պետք է աչալրջությամբ հետևի, թե որ չափով գյուղ-թղթակցուհու գրվածքը ճիշտ է և ուղղել այն թղթակցուհիներին, որոնք աղավաղում են իրականությունը։

Զատաղանց կարևոր և, վորպեսզի գյուղ-թղթակցուհին հեռու չը մնա հասարակական հարցերից և ինքը մասնակցի հասարակական կյանքին։ Անհրաժեշտ է գյուղ-թղթակցուհիներին առաջ քաշել հասարակական աշխատանքներում, վորը կողնի նրանց զարգանալու, մեծացնելով իրենց շրջահայացքը։

Շրջ-հրահանգչուհին պետք է աչալուրջ կերպով հետևի, վորպեսզի գյուղ-թղթակցուհիները մոտ լինեն կուսակցությանն ու խորհրդային իշխանությանը և հասկանան մեր շինարարության խնդիրները։ Դրա համար, նրանք պիտի տանեն հասարակական աշխատանք և կապված լինեն գյուղ-թղթակիցների խմբակի հետ։ Շրջաններում, հաճախ և գյուղերում, կազմակերպվում են տեղական պատի լրագրերի շուրջը թղթակիցների խմբակներ—այստեղ և անա, վոր ակտիվ աշխատանքի պիտի քաշել թղթակցուհուն, հետաքրքրեցնելով նրան լրագրի և խմբակի աշխատանքով։ Վորպեսզի այդ աշխատանքները ապահովված լինեն, անհրաժեշտ է խմբակի վորևե անդամին հանձնարարել, գյուղ-թղթակիցների աշխատանքին հետևելու գործը և այդ թղթակիցներին քաշել աշխատանքի ասպարեզ։ Կարևոր է վորպեսզի գյուղ-թղթակիցների խմբակը քննության առնի նաև գեղջկուհիներին հետաքրքրող հարցերը։ Գեղջկուհի թղթակիցը, մասնակցելով թղթակիցների խմբակում և պատի թերթում, աննկատելի կերպով լծվում է գյուղի հասարակական կյանքին և ատիճանաբար սովորում գրել՝ նախ պատի լրագրում և ապա կենտրոնական մամուլում։ Շրջ-հրահանգչուհին պիտի ոգնի նրան, յեթե նա չի կարողանում արտահայտել իր մտքերը։ Կան դեպքեր, յերբ գեղջկուհին հրաժարվում է շարունակել հոդվածներ գրելը, պատճառաբանելով, վոր իր հոդվածները չեն տպագրվում։ Այս դեպքում, շրջ-հրահանգչուհին պարտավոր է նրան բացատրել, նրա հոդվածների չտպագրվելու պատճառները։ Յեթե գյուղ-թղթակցուհիների նյութերը անուշադրության են մատնված խմբագրության կողմից, շրջ-հրահանգչուհին կարող է խմբագրության առաջ միջնորդել, նրանց թղթակցությունները տպագրելու համար։

Յեթե թղթակցուհիները կուլակների կողմից հալածանքի ու հետապնդման են յենթարկվում, շրջ-հրահանգչուհին պետք է ոգնի նրանց։ Գյուղ-թղթակցուհիներին պիտի բացատրել, թե վորպիսի առանձին ուշադրությամբ է վերաբերվում կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը գյուղ. և բան. թղթակցուհիների ձայներին։ Մերկացնող բնույթ կրող բոլոր դիտողությունները

քննվում են այդ նպատակի համար նշանակված՝ առանձին քննիչների ու դատախազների կողմից։ Գյուղ. և բան. թղթակիցների նկատմամբ կատարվող յուրաքանչյուր բռնություն, պատժվում է վոչ վորպես հասարակ հանցագործություն, այլ վորպես բռնություն խորհրդային իշխանության և պաշտոնական անձանց դեմ։ Այն դեպքում յերբ դատարանը գտնում է, վոր գյուղ. և բան. թղթակիցների սպանությունը հասարակական բնույթ է կրում, հանցագործը պատժվում է սոցիալական պաշտպանության առավելագույն պատժի չափով։

Շրջ-հրահանգչուհին կարող է ցույց տալ մեծ ոգնություն մամուլի տարածման գործում այլ և մոտեցնել մեր թերթերը, ամսագրերն ու գրքերը գեղջկուհիների շահերին։ Յեթե գեղջկուհին միայն իր ոյժով չի կարող բաժանորդագրվել թերթերին, նա պիտի ոգնի նրան կոլեկտիվ բաժանորդագրվելուն։ Շրջ-հրահանգչուհին պիտի ոգտագործի յուրաքանչյուր ժողով, մամուլը գեղջկուհիներին մոտեցնելու համար։

Ավելի կարևոր է հենց իրենց գեղջկուհիներին գրավել մամուլի տարածման գործում։

Շրջ-հրահանգչուհին պետք է ոժանդակի նաև մեր մամուլի լավացմանը։ Մեր գրքերի և ամսագրերի ընթերցման ու քննադատության փորձերը կցուցադրեն մեր մամուլի առավելությունները ու պակասությունները։ Շրջ-հրահանգչուհին հետևում է, թե ինչպիսի գրականություն է հարկավոր գյուղին, վոր գրքերը գեղջկուհիների համար ավելի մատչելի յեն, մեր ամսագրերն ու գրքերը իրենց բովանդակությամբ համապատասխանում են արդիոք գեղջկուհիների պահանջներին։

Շրջ-հրահանգչուհին վոչ միայն պիտի հետևի այդ բոլորին, այլ հայտնի իր դիտողությունների մասին խմբագրությանը, հրատարակությանը, վորպեսզի բարձրացվի մեր մամուլի վորակն ու ավելի համապատասխան ու ավելի մատչելի գրականություն հրատարակվեն մեր գեղջկուհիների համար։

V

ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱՐԵՎԵԼՔԻ ԿԱՆԱՆՑ ՄԵՋ

Խորհրդային Արևելքի կանանց մեջ՝ կուսակցության կողմից տարվելիք աշխատանքի հիմնական խնդիրներն են.

1) Բարձրացնել Արևելքի կնոջ կուլտուրական մակարդակը։

2) Հասարակական աշխատանքին նախապատրաստելը և

3) Կոմունիստական դաստիարակություն։

Ազգային հանրապետությունների պայմաններում, առաջին խնդիրը բաժանվում է 2 հիմնական մոմենտների։ Ազգային ապաքինության (оздоровление) հարցը և կնոջ աշխատանքի արտադրության բարձրացումը, հետևաբար Արևելյան ծայրագավառների տնտեսության բարձրացումը։

Կուսակցության առաջադրած այդ խնդիրները իրականացվում են բանվորուհիների և գեղջկուհիների բաժնի միջոցով, աշխատանքի հատուկ ձևերով և մեթոդներով, որոնք տարբերվում են ռուսական շրջանների կանանց մեջ տարվելու աշխատանքի մեթոդներից և ձևերից։

Արևելքում աշխատանքի ձևերի տարբերումը հետևանք է Արևելյան հանրապետությունների տնտեսության զարգացման և կենցաղի առանձնահատկությունների։ Խորհրդային Արևելքը բնորոշվում է տնտեսական ձևերի զարգացման մեծ հետամնացությամբ։ Խորհրդային Արևելքի ծայրագավառները, որոնք այժմ խորհրդային իշխանության որոք ներկայացնում են ազգային առանձին ինքնավար հանրապետություններ կամ շրջաններ, ցարական իշխանության ժամանակ նրանք հանդիսանում էին միայն գաղութներ։ Ցարական իշխանությունը յերկար կոիլեների միջոցով, հպատակեցրել էր իրեն փոքր ազգությունները և նրանց դարձրել էր շահագործման առարկա։ Բացի այդ, նա շահագրգռված է

յեղել վորպեսզի նրանք մնան տգիտության և մթության մեջ, իրեն ճանկերում պահելու նպատակով։ Ցարական իշխանությունը հենց այդ նպատակով, աշխատել է հնարավորություն չտալ ազգային ծայրագավառներում արտադրության զարգացմանը։ Ցարական իշխանությունը վախենում էր, վոր արդյունաբերության շուրջը համախմբվող պրոլետարիատը կարող է ավելի վճռական պայքար մղել իր հարստահարողների դեմ։ Այդ իսկ պատճառով էլ, Արևելքում դեռ ուժեղ են հին ավանդությունները, կնոջ վրա բռնանալը, կրոնը, վորը հանդիսանում է կնոջ ճորտացման գլխավոր միջոցներից մեկը։ Դրա համար էլ Արևելքում մինչև այժմ, կանայք ծածկում են չարաշքներ և փողոց են դուրս գալիս միայն աղամարդու թույլտվությամբ։ Արևելքում դեռ ևս գոյություն ունի կրոնի կողմից որոնված-փոքրահասակների ամուսնությունը, բազմակնությունը, փողով կին առնելը, կին փախցնելը. մի խոսքով, միանգամայն կնոջը դարձնում են իրավազուրկ, իբրև տնտեսուհու և մոր։

Ցեվ այստեղ միանգամայն հասկանալի յե, վոր անհրաժեշտություն է զգացվում, Խորհրդային Արևելքում՝ կանանց մեջ աշխատանք տանելիս, ունենալ առանձին մոտեցում և աշխատանքի առանձին ձևեր ու մեթոդներ։

Հետամնաց գավառներում և հանրապետություններում, կանանց մեջ աշխատանք տանելու ավելի ընդունելի ձևերն են համարվում ակումբները, անկյունները, կարմիր վրանները և խրճիթները։

Ակումբներ հատկապես կազմակերպվում են թուրք կանանց համար, ուր արգելվում է տղամարդկանց մուտքը. այստեղ կենտրոնացվում և կուլտ-կրթական աշխատանքների բոլոր տեսակները։ Ակումբներն իրենց գոյության 5-6 տարվա ընթացքում միանգամայն արդարացրին իրենց վրա դրված հույսերը։ ՍԽՀՄ մեջ թուրք կանանց համար կազմակերպված նման ակումբների թիվը հասնում է 51-ի, իսկ անկյունների թիվը հավասար է 120-ի։ Նման ակումբներ Հայաստանում կան առ այժմ դեռ 2 հատ, իսկ անկյուններ կազմակերպված են յուրաքանչյուր գավառում։ Կանանց ակումբներում և անկյուններում ամփոփված են հետևյալ կազմակերպությունները՝ գրագիտության դպրոցներ, քաղ-խմբակներ, արտադրական արտելներ, գյուղատնտեսական խմբակներ, մանկական մսուրներ և խորհրդատու կայաններ, իրավաբանական բյուրոներ, դրամատիքական և յերգեցիկ խմբեր,

գրադարաններ, պատի լրագրներ, Լենինյան անկյուններ, պիոներական կոլեկտիվներ և այլն։ Ակումբներն ու անկյունները կնոջը սովորեցնում են գրագիտություն, արտադրական աշխատանք, պատրաստում են նրան հասարակական աշխատանքի համար և գրավում կուսակցության և կոմսոմոլի մեջ իսկ նրա յերեխաներին պիոներական շարքերը։

Արևելքի կանանց մեջ տարվելիք աշխատանքի յերկրորդ հիմնական ձևերից մեկը հանդիսանում է պատգամավորական ժողովների գոյությունը, վորոնք կազմակերպվում են պատգամավորական ժողովների ընդհանուր սկզբունքով։ Պատգամավորական ժողովները հանդիսանում են Արևելուհու համար 2-րդ աստ. դպրոցներ։ Այս դպրոցներում սովորում են այն կանայք, վորոնք արդեն վորոշ համարձակություն են ձեռք բերել ակումբներում և վորոշ հառաջադիմություն ցույց տվել դեպի հասարակական կյանքը։ Արևելյան հանրապետություններում, 24-25 թ. պատգամավորուհիների թիվը հասավ 59 հազարի։ Պատգամավորական ժողովների աշխատանքների առաջին տարիներում, մասնակցություն ցույց եյին տալիս միայն ռուս-կանայք, իսկ վերջին տարիներում պատգամավորական ժողովների աշխատանքին մասնակցում են մեծ թվով տեղական կանայք, ու մասնակցողների թիվը աճում և տարբերային կերպով։ Հաճախ դժվար և լինում դրանց վրա տարածել կուսակցության ազդեցությունը, շնորհիվ տեղական ըմբիշների թուլության։ Որ-որի վրա աճում և կանանց ակտիվությունը։ Կարող և պատահել, կանանց մասսաների այդ ակտիվությունը ոգտագործվի խորհրդային իշխանության թշնամիների կողմից, այն և՝ հոգևորականների և կուլակների։ Այս դեպքում հարկավոր և աչալուրջ լինել, ունենալ պատրաստված ուժեր, ապա կանանց համար մեծաքանակ գրականություն ազգային լեզուներով, վորոնցով հնարավոր կը լինի պայքարել նման յերևույթների դեմ։

Աշխատանքի նշած ձևերից բացի, Արևելյան հանրապետություններում սկզբնական շրջանում հրավիրվում են նաև անկուսակցական համագումարներ և կոնֆերանսներ, վորոնք ծանոթացնում են կանանց տվյալ շրջանի հասարակական աշխատանքի հետ և գրավում են նրանց ուշադրությունը դեպի կին բաժինները։

Լայնորեն գործադրվում և նաև անդրագիտության վերացման գործը կանանց դպրոցների, ձեռագործի խմբակների, գյուղատնտեսական և արտադրողական նշանակություն ունեցող արտելների—խրճիթ-ընթերցարանների կից անկյունների, կանանց դպրոցների, դասընթացքների կազմակերպումը։ Այդ բոլոր կազմակերպությունները հանդիսանում են անմիջականորեն կին-բաժինների համար քաղաքատիրակչական աշխատանք տանելու միջոցներ։

Արևելքի աշխատավորուհիների կենցաղը բարելավելու նպատակով, կենտգործկոմներին կից գոյություն ունեն կենցաղի բարելավման հանձնաժողովներ, իսկ տեղերում այդպիսիները կազմակերպվում են գործկոմներին կից։ Նման հանձնաժողովներ գոյություն ունեն միայն Անդրկովկասում, իսկ մնացած վայրերում նրանք դեռ չեն կազմակերպված։ Նրանց անելիքների մեջն և մտնում տվյալ յերկրի կանանց կենցաղի ուսումնասիրումն ու բարելավումը։ Այդ նպատակի համար, նրանք հայթայթում են դրամական միջոցներ, համապատասխան որգանների միջոցով։ Կազմակերպում մասուրներ, արտելներ, դպրոցներ, անապատատան մայրերի տուն, իրավաբանական և բժշկական խորհրդատու կայաններ և այլն։ Վերջիններս իրենց աշխատանքով, վորոշ չափով ազատում են կին-բաժիններին տնտեսական և խորհրդային աշխատանքից, վորոնցով հաճախ զբաղված և լինում բաժինը։

Արևելքում նման ձևերով և տվյալ պայմաններում, կանանց մեջ տարվելիք աշխատանքը հաջողություն գտնում և թե վոչ։ Անշուշտ գտնում և։

Բացի նրան, վոր բարձրանում և կանանց ակտիվությունը ու շատանում կնոջ կենցաղը բարելավող հիմնարկների թիվը, սրա հետ միասին, որ ավուր աճում և կանանց ակտիվությունը խորհրդային շինարարության ու կուսակցության մեջ։ 1925 թ. կանանց միջազգային տոնին (մարտի 8-ին) կուսակցության մեջ անցան բավական թվով կանայք։

Ինչ վերաբերում և խորհուրդներում մասնակցողների թվին, այնտեղ յերևում և հետևյալ պատկերը՝ Հայաստանում 1924 թ. ընտրությունների ժամանակ խորհուրդների մեջ անցել են 198 կին, 1926 թ. անցել են 1304։ Կանայք, վորոնց մինչ վերջին որերը բեռնակիր կենդանիների եյին հավասարեցնում և մարդ արարած անգամ չեյին համարում նրանց, այսոր ընտրվում են խորհուրդներում և ղեկավարում իշխանությունը, տալով յուրաքանչյուր դիմողին խորհուրդներ և ուղղություն։

Փաստերը ավելի պերճախոս են քան նրանց նկարագրությունը։ Նրանք ապացուցում են, վոր Արևելքի կինը արթնացել և, դեն և շպրտել սարկության շղթաները, վոր հասել և այն մտ-

մենաը, յերբ կուսակցությունը կարող է կանանց մեջ տարվելիք ագիտացիոն աշխատանքից անցնել ծրագրային և խորացրած աշխատանքների։

Յեզնելով դրանից, ազգային գյուղերի շրջ-հրահանգչուհու աշխատանքի հիմնական անելիքները հանդիսանում են՝

1. Բնակչության հիմնական մասի համար՝ կազմակերպել կանանց կուլտուրական հիմնարկներ, բարելավել նրա կենցաղը, կուսակցության, խորհուրդների ՓՈԿերի—կոոպերատիվների միջոցով, այդ աշխատանքին քաշելով նաև տղամարդկանց։

2. Անկյուններում և խրճիթ-ընթերցարաններում տանել սիստեմատիկ աշխատանք։ Պատգամավորական ժողովների միջոցով համախմբել Արևելքի կին-աշխատավորուհիներին կուսակցության և խորհրդային իշխանության շուրջը և նրանցից ավելի ընդունակ և հարազատներին անցկացնել կուսակցության շարքերը ու քաշել խորհրդային շինարարության գործնական ու շինարար աշխատանքներին։

3. Գրավել հասարակական աշխատանքում և խորհրդային շինարարության մեջ յերիտասարդ կանանց, նախապատրաստել նրանց՝ աղջիկների համար կազմակերպված հատուկ բջիջների միջոցով, կազմակերպելով առանձին խմբակներ նրանց համար խրճիթներին և անկյուններին կից։

VI

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՅԵՎ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՄԵՋ

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՄԵՋ

Գեղջկուհիների մեջ աշխատող՝ շրջ-հրահանգչուհու խնդիրների մեջ և մտնում նաև աղջիկներին հասարակական աշխատանքների մեջ քաշելը։ Այդ աշխատանքը պահանջում է հրահանգչուհուց խելացի մոտեցում։ Նրա պարտականությունն է, զգույշ կերպով մոտենալ աղջիկներին, հետաքրքրեցնել նրանց հասարակական կյանքով, գրավել աղջիկներին խորհրդային նոր գյուղի շինարար աշխատանքին։ Այդ խնդիրը այնքան էլ հեշտ չէ։ Գյուղական աղջկա դրությունը իր ընտանիքում չափազանց ծանր է, վորովհետև նա անմիջականորեն անտեսական կախումն ունի իր ընտանիքից։ Այդ հանգամանքը հարկադրում է նրան, համակերպվել իր ծնողների կյանքի նկատմամբ ունեցած՝ հետամնաց հայացքների հետ։ Ծնողների կրոնամոլ լինելու դեպքում—աղջիկը նույնպես կրոնասեր է։ Նա բոլորովին չի մասնակցում հասարակական կյանքին, վորովհետև ծնողներն էլ հեռու յեն նրանից, մանավանդ մայրը։ Գյուղական աղջիկը ընկճված է, նա վախենում է գնալ զանազան ժողովների իսկ գնալու դեպքում լինում է անպայման ընկերուհու հետ. ժողովներում նա կուչ է գալիս մի անկյուն և վոչ մի մասնակցություն չի ցուցադրում։ Միայն ասնական որերն են, գյուղական քեֆերն ու յերեկոները, ուր հանդես են գալիս աղջիկները։ Վայելքի այս որերը, դեռ խոշոր տեղ են գրավում գյուղական կյանքում։ Աղջիկների կուլտուր-քաղաքական մակարդակի բարձրացման համար, անհրաժեշտ է ոգտագործել այդ տեղերը։ Շրջ-հրահանգչուհին պետք է աշխատի, գյուղական նման յերեկոներին, կոմսոմոլխանների հետ միասին գնալ այդ տեղ, առանց խանգարելու յերեկոների և տոնական որերի առթիվ կազմակերպված քեֆերի ընթացքը։ Շրջ-հրահանգչուհու պարտականությունն է, առաջին հերթին նրանց մոտենալ զգույշ կերպով

և աշխատել աղջիկների մեջ տանել անհատական ու խմբակային զրույցներ, նրանց հետաքրքրող հարցերի շուրջը։ այդ զրույցը կարելի յե սկսել գյուղական առորյա անցուդարձից, վորի ընթացքում կարելի յե նաև արծարծել հասարակական և կենցաղային բնույթ կրող հարցերը։

Ապա նման զրույցների ժամանակ պիտի թույլ տալ աղջիկներին արտայայտվելու, յեթե նույնիսկ նրանք կը խոսեն միայն կենցաղային հարցերի շուրջը։ Շրջ-հրահանգչուհին նման հարցերին պատասխանելիս, պետք է հասկացնի աղջիկներին, վոր իրենց կյանքի բարելավման գործը գլխավորապես իրենց ձեռքումն է գտնվում և դրան հասնելու միջոցն է մասնակցել գյուղի հասարակական աշխատանքներին ու հետևել իր կուլտուրական մակարդակի բարձրացմանը։

Նույն աշխատանքը պիտի տանեն նաև այն բոլոր կոմսոմոլիստները, վորոնք շրջ-հրահանգչուհու հետ միասին, մասնակցում են նման յերեկոներին, աշխատելով իրենց ազդեցության տակ վերցնել նրանց։

Անշուշտ, աղջիկների մեջ տարվելիք աշխատանքի ամեն մի առանձին դեպքում, պետք է յելնել տեղական պայմաններից ու փորձից և դրա հիման վրա գործածել կյանքին ավելի մոտիկ մեթոդներ։

Բայց պիտի ասել, վոր այն դրությունը, վորի մասին խոսեցինք վերևում, չի կարելի ընդհանրացնել գյուղական բոլոր աղջիկների նկատմամբ։ Ճիշտ է, դրանցից մի չնչին մասը կարողացել է համակերպվել կուլտուր-հասարակական կյանքին. դրանք գլխավորապես այն աղջիկներն են, վորոնք գտնվում են Լենինյան կոմսոմոլի շրջանում։

Անդրկովկասյան մասշտաբով, առ 1-ն հունվ. 1926 թիվը կոմսոմոլիստ աղջիկների թիվը հասնում է 11,927։ Կոմսոմոլիստների և անկուսակցական աղջիկների մեջ, այդ ասպարիզում տարվում է հսկայական աշխատանք։ Շրջ-հրահանգչուհին աղջիկների մեջ տարվելիք ամբողջ աշխատանքում պետք է սերտորեն կապված լինի կոմսոմոլի հետ, աղջիկներին միության շարքերը և կոմյերիտական ակտիվ աշխատանքի քաշելու գործում և նամանավանդ անկուսակցական աղջիկների մեջ տարվելիք աշխատանքում պիտի հանդիսանա նրա լավ ոգնականը։

Շրջ-հրահանգչուհին կոմսոմոլի հետ միասին, պիտի անցկացնի աղջիկների կոնֆերանսներ, ուր քննության պիտի առնվեն

կենցաղային, դպրոցական աշխատանքներին, մուրներին և խրճիթ-ընթերցարաններին վերաբերող հարցերը։ Իսկ յեթե գյուղերում կան աղջիկների խմբակներ, պիտի դնել նրանց հաշվությունները, նույնը և կոմսոմոլի նկատմամբ, զեկուցելով կոմյերիտուհիների կողմից՝ անկուսակցական աղջիկների մեջ տարված աշխատանքի մասին։

Կար ու ձևի, ձեռագործի և նման խմբակների կազմակերպումը ընկնում է կոմսոմոլի և շրջ-հրահանգչուհու վրա։

Շրջ-հրահանգչուհու անելիքների մեջ է մտնում նաև խրճիթ-ընթերցարաններում և կարմիր անկյուններում՝ աղջիկների հետ զրույցների կազմակերպումը, նրանց հետաքրքրող ամսագրերի և թերթերի ընթերցումը և կարդացածի մասին զրույցներ կազմակերպելու պարտականությունները

Նա պետք է մասնակցի իրավական ոգնություն ցուցաղրելու գործում, պետք է դրավի աղջիկներին կոմյերիտական և հայրենի ժողովներում, միաժամանակ աշակցելով, վորպեսզի նրանք ժողովներում արտահայտեն իրենց մտքերը։

Պիտի ամեն կերպ աշխատել, վորպեսզի աղջիկները վերացնեն իրենց անգրագիտությունը. ուղարկել նրանց պրոֆտեխնիքական դպրոցներ, դասընթացքներ և այլն։

Շրջ-հրահանգչուհին իր առորյա աշխատանքներում պիտի աշխատի, վորպեսզի աղջիկները իրեն մոտենան, վորպես իրենց ընկերուհու, վորը ոգնում է նրանց լուսավորվելու։

Շրջ-հրահանգչուհին նկատի ունենալով այն հանգամանքը, վոր աղջիկները կախումն ունեն իրենց ծնողներից, պետք է աշխատանք տանի վերջիններիս մեջ, բացատրելով նրանց այն բոլոր ոգուտները, վոր ստանում են իրենց աղջիկները, կուլտուր-հասարակական աշխատանքին մասնակցելով։ Նա պետք է ոգտագործի առաջավոր գյուղացիներին և գեղջկուհիներին և համանքի ժողովները, գեղջկուհիների կոնֆերանսները, նամանավանդ պատգամավորական ժողովները, վորպեսզի բացատրի աղջիկներին հասարակական աշխատանքում դրավելու անհրաժեշտությունը։ Անհրաժեշտ է, վորպեսզի հրահանգչուհին կոմյերիտմիությանն հետ միասին, վճռական կերպով պայքարի գյուղական յերիտասարդության մեջ յերևացող սեռական սանձարձակության դեմ, համապատասխան որգանների միջոցով պատասխանատվության յենթարկել այն յերիտասարդներին, վորոնք կը համարձակվեն խաբել աղջիկներին։ Հրահանգչուհին այսպիսով միևնույն ժամանակ

գյուղում կը ստեղծի հասարակական կարծիք, վոր այդպիսի յերիտասարդները դատապարտվում են նման արարքների համար։ Յերիտասարդ բատրակուհիների մեջ աշխատանք տանելիս, անհրաժեշտ է, վոր շրջ-հրահանգչուհին աշխատանքի ամբողջ ուշադրությունը դարձնի նրանց տնտեսական և իրավական շահերի պաշտպանման գործի վրա այն իմաստով, վոր կանոնավոր և իր ժամանակին վճարվի աշխատավարձը, կիրառվի բանվորական որը, լավ վերաբերմունք ցույց տան, բնակարանային հարմարություններ տան և այլն, հենց այս նպատակով—նրանց գրավել պրոֆմիության շարքերը։ Դրա հետ միասին, բոլոր միջոցների կիրառման ընթացքում հրահանգչուհին պետք է հենվի ուսուցչության վրա, հանձնարարելով նրանց պարապել աղջիկների հետ, ղեկավարել գանազան խմբակների աշխատանքը, պատրաստել ներկայացումներ և այլն։

Այս աշխատանքում շրջ-հրահանգչուհուն պիտի ոգնեն բժիշկն ու գյուղատնտեսը—դասախոսություններ կարդալով սանիտարական, գյուղատնտեսական և այլ հարցերի շուրջը։ Այդ աշխատանքը հաջող անցկացնելու և տանելու համար, կոմսոմոլի շրջ-հրահանգիչը՝ կուսակցության շրջ-հրահանգչի ու գավկոմի ղեկավարությամբ, հրավիրվում է աղջիկների մեջ աշխատողների խորհրդակցություն, աշխատանքի փորձի հաշվեառման համար և աղջիկների մեջ տարվելիք աշխատանքների ծրագիր մշակելու նպատակով։ Կոմյերիտմիության շարքերում աղջիկների հետագա աճումը կախված կը լինի նրանից, թե վորքան մեծ ոգնություն ցույց կը տա կոմսոմոլին շրջ-հրահանգչուհին։ Այդ իսկ պատճառով շրջ-հրահանգչուհու հիմնական անելիքն է, ամեն կերպ ընդառաջել կոմսոմոլին, աղջիկների մեջ աշխատանք տանելու գործում. միաժամանակ աչքի առաջ ունենալով կնոջ հետամնացությունը և նրա լիակատար իրավազուրկ լինելը ընտանիքում։

Աշխատանքը ազգային հանրապետություններում մի քանի անգամ ավելի դժվար է։

Այս տեսակետից էլ, հրահանգչուհուց պահանջվում է հսկայական էներգիա, համառություն, հատուկ մոտեցում աշխատանքին, մեծ զոհաբերություն, վորպեսզի ոգտագործվի գոյություն ունեցող բոլոր հնարավորությունները, (կազմակերպել գանազան արտադրական խմբակներ, պրոֆտեխնիկական դպրոց, դրավել դեպի արդյունաբերությունը) վորոնք կ'աջակցեն աղջկան շփվելու կուլտուրական, հասարակական աշխատանքի հետ։

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿՈԼԼԵԿՏԻՎԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Կոմունիստական պատանեկական կազմակերպությունը ծընունդ է առել 1922 թ., բայց այս ժամանակվա ընթացքում նա կարողացել է ընդգրկել 1,500,000 մարդ, գրավելով իր շարքերը վոչ միայն քաղաքի, այլև գյուղի յերեխաներին։ Յեթե 1923 թ. գյուղում վոչ միայն չեյինք տեսնում պիոներների, այլև չեյինք լսում նրանց մասին, արդեն ներկայումս համարյա յուրաքանչյուր գյուղում կարմիր գալստուկով պիոներ է մտնում գալիս։ Պիոներական կազմակերպության աճումը ընդհանրապես և մասնավորապես գյուղում հետևյալ պատկերն է տալիս։

ՌՍՖԽՀ 1923 թ. 1-ն նոյեմբերի, մենք ունեյինք 100,000 պիոներ, իսկ մինչ 1924 թ. հունվարի 1-ը, պիոներների թիվը հասնում եր 161,347-ի, կոլլեկտիվների թիվը ընդամենը 2,840-ի, վորից 2,200 քաղաքային կոլլեկտիվներ եյին, վոր և կազմում է ընդհանուր թվի 78,7%, իսկ գյուղական կոլլեկտիվների թիվը 640—21,3%։

Առ 1-ն Հունվարի 1925 թվի

Պիոներներ	Կոլլեկտիվներ		Քաղաքային		Գյուղական	
1,000,032	19,814	100%	9,451	47,7%	10,363	52,3%

Առ 1-ն Հուլիսի 1925 թվի

1,460,663	32,547	100%	13,311	40,8%	19,236	59,2%

Առ 1-ն Հոկտեմբերի 1925 թվի

1,491,744	35,380	100%	14,350	40,6%	21,030	59,4%

Անդրկովկասյան պիոներական կազմակերպությունների կազմն ու աճումը.

Պիոներներ	Գյուղական կոլլեկտիվներ	Գյուղական կոլլեկտիվներ	Քաղաքային կոլլեկտիվներ	Գյուղական
Առ 1-ն Հունիսի 24 թ. 20,000 200%	—	—	—	—
Առ 1-ն Հունիսի 25 թ. 64,257 332,7%	—	—	—	—
Առ 1-ն Հունիսի 26 թ. 139,597 697,8%	39,183 28,2%	2,397	806 33%	1,591 67%

Անդրկովկասի տասնձին հաճրապետություններում
առ 1-ն հուն. 1926 թվի.

Պիոներների թիվը	Վերջին ժամանակներս կազմակերպված	Ավելի վաղ կազմակերպված	Պիոներուհի	Պիոներ
Վրաստան 57,391	20,238 35,3%	932	313 33,6%	619 66,4%
Ադրբեջան 56,129	13,107 23,2%	940	351 37,3%	589 62,7%
Հայաստան 26,077	5,938 22,8%	525	142 27%	383 73%
139,597	39,283	2397	806	1591

Ինչպես ցույց են տալիս թվական տվյալները, վերջին ժամանակներս կազմակերպության աճումը կատարվում է ի հաշիվ գյուղի։ Այնինչ պետք է ընդգծել, որ գյուղական պայմանները շատ քիչ են դարձ տալիս պիոներական կոլեկտիվների աճմանը։ Չկան հարմար շենքեր, ուր պիոներները կարողանան տանել իրենց աշխատանքը, չունեն միջոցներ գրականություն ձեռք բերելու համար, բացակայում են պատրաստված կոմսոմոլիստական ուժեր, որոնք կարողանային ճիշտ ղեկավարել պիոներների աշխատանքը։ Բացի այդ, գյուղացությունը՝ մանավանդ գեղջկուհիները, մինչև այժմ չիմանալով ինչի համար գոյություն ունի պիոներական կազմակերպությունը, վերջինիս ոգնելու փոխարեն, խանգարում են նրա աշխատանքի ընթացքը, արգելում յերեխաներին պիոներական կոլեկտիվները մտնելու, տալով նրանց «անսատված», «կուսակցական» և այլ ածականներ։

Շրջ-հրահանգչուհին այդ գործի վրա պետք է դարձնի ամենամեծ ուշադրություն, որովհետև պիոներները թե ընտանիքում և թե յերեխաների մեջ, կարող են ոգնել յերեխաների նոր դաստիարակմանը, կնոջ ազատագրման և նոր կենցաղի շինարարության գործերին։

Անհրաժեշտ է ամեն կերպ աշխատել, որպեսզի պատգամավորուհին հասկանա պիոներական կազմակերպության նշանակությունը, նրա նպատակն ու խնդիրները և ոգնի առորյա գործնական աշխատանքի կիրառմանը։

ԻՆՉ ՆՊԱՏԱԿ Է ԴՆՈՒՄ ԻՐ ԱՌԱՋ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Պիոներական կազմակերպության հիմնական նպատակն է, պիոներներից պատրաստել ապագա մարտիկներ, կոմունիստական հասարակարգի շինարարներ և կոմ. կուսի կոմսոմոլի համար փոխանորդներ։

Պիոներները այժմ արդեն այդ նպատակները իրագործում են, մասնակցելով կոմ. կուսի և կոմսոմոլի՝ նոր կյանքի կառուցման մեջ, պայքարելով անցյալի հին մնացորդների դեմ։

Ահա թե ինչ է ասում կոմսոմոլի 6-րդ համագումարը, այդ առթիվ իր վորոշումներում.

«Գյուղում պատանեկական շարժումը ղեկավարելով և կապելով կոմսոմոլի ըջիջների շուրջը, իսկ ուր հնարավոր է— դպրոցական կյանքի հետ, կոմյերիտմիությունը պետք է միևնույն ժամանակ խնդիր դնի, գյուղական պիոներների կոլեկտիվների առաջ, մտցնել հեղափոխական կուլտուրական նոր հոսանք գյուղի հասարակական և ընտանեկան կենցաղում։ Գյուղում պիոներները իրենց յետևից պիտի տանեն գյուղական յերեխաների ամբողջ մասսան, ազատելով նրանց ընտանիքի մանր-բուրժուական ազդեցությունից և փոքր ժամանակվանից սովորեցնել նրանց, ընդհանուր, կոլեկտիվ աշխատանքին, այլև քաղաքի բնավորների հետ միատեղ պայքարելուն։

Նոր գյուղի պայքարի գործում, պատանի պիոներները հանդիսանալու յեն կուսակցության և կոմսոմոլի ոգնականներն ու դաշնակիցները, այսինքն գյուղացության կոոպերացման, գյուղական մասսայի կուլտուրական մակարդակի բարձրացման, գյուղատնտեսության տեխնիկական հեղափոխություն առաջացնելու գործում և այլն»։

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՊԻՈՆԵՐՆԵՐԸ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ ԻՐԵՆՑ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այդ բոլորը պիոներները կատարում են՝ գյուղում հասարակական գործնական աշխատանքի միջոցով և կոլեկտիվում ներդաստիարակչական աշխատանքի միջոցով։

Հասարակական գործնական աշխատանքը կազմվում է մի քանի առանձին մասերից՝ ոգնություն հասարակական կազմակերպություններին, աշխատանք ընտանիքում, դպրոցում և այլն

Բայց պիոներների հիմնական խնդիրը կայանում է անկազմակերպ յերեխաների մեջ տարվելիք աշխատանքի կազմակերպումը։

Պիոներները իրենց ազդեցության տակ վերցնելով անկազմակերպ յերեխաներին, գրավում են նրանց ակումբներում ու կոլեկտիվներում. պիոները յերեխաներին հեռու յե պահում ամեն տեսակի սրիկայությունններից ու հայհոյանքից, ծխելուց և այլ վատ հատկություններից ու սովորեցնում նրանց կոլեկտիվ կյանքի ու աշխատանքի։

Պիոներները անգրագիտության խմբակներ կազմելով, վերացնում են իրենց ու ապա ուրիշ յերեխաների միջից անգրագիտությունը։ Ապա կոմյերիտմիության միջոցով նյութական աջակցություն են ցույց տալիս չքավոր յերեխաներին, քաշելով նրանց դեպի դպրոցները։ Իսկ դպրոցում նրանք ձգտում են, վորպեսզի յերեխաները լավ սովորեն, վորպեսզի դպրոցը կապված լինի գյուղի հասարակական կյանքի հետ և վերջապես, իրենք յերեխաները սովորեն կառուցել աշխատանքային նոր դպրոց։

Պիոներները ոգնում են խրճիթ-ընթերցարանի աշխատանքին, այստեղ նրանք հետևում են մաքրության, աշխատում են գրադարանում, տոների և զանազան կամպանյաների ժամանակ, զարդարում են խրճիթը, հայտնում են բնակչության դասախոսությունների, զեկուցումների և յերեկույթների մասին, ոգնում գյուղացիների համար թերթերի ընթերցման աշխատանքին և այլն։

Փոխոգնություններին ոգնում են չքավոր տնտեսությունների համար կիրակնորյակներ կազմակերպելով, (արտը վարում, զետնախնձոր տնկում և այլն)։

Բացի հասարակական կազմակերպություններին ոգնություն ցույց տալուց, պիոները աշխատում է և ընտանիքում, վորտեղ ձգտում է բարելավել գյուղական տնտեսությունը, ոգնում է մորը փոքրիկին խնամելու գործում, աշխատում է գրավեր մորը և ընդհանրապես բոլոր բարկամներին դեպի խրճիթ-ընթերցարանը, ակումբներում կայացող՝ պատգամավորական և գյուղական համայնքի ժողովները և այլն։

Կոլեկտիվները միաժամանակ տանում են ներդասարակչական աշխատանք։ Կազմակերպում են կոլեկտիվներում խաղեր, ընթերցումներ, եքսկուրսիաներ, զրոսանքներ, սովորում յերգեր և այլն։

Ահա սրանք են հանդիսանում աշխատանքի այն ձևերը, վորոնք գործադրվում են պիոներական կոլեկտիվի կողմից։

Այդ աշխատանքը բազմազան է և պահանջում է ղեկավարից՝ մեծ ընդունակություն իսկ շրջապատից՝ լավ վերաբերմունք։

ՇՐԱՇԱՆԳԱԶՈՒՇՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Այն բոլոր աշխատանքը, վոր տանում է պիոները, հսկայական նշանակություն ունի թե իրենց պիոներների դաստիարակության տեսակետից և թե շրջապատի համար, վորովհետև մի կողմից սովորեցնում է գյուղական բոլոր յերեխաներին մասնակցել հասարակական կյանքին, իսկ մյուս կողմից՝ ստիպանաբար ուժասպառ դարձնելով գյուղական ընտանիքի հին կենցաղը և քանդելով նրա հիմքերը, հին սովորությունների փոխարեն մտցնում է հասարակության կուլտուրայի ելեմենտար սովորությունները։ Շրջ-հրահանգչությանն կուլտուրայի ելեմենտար սովորությունները։ Շրջ-հրահանգչությանն անմիջականորեն շահագրգռված լինելով գյուղական ընտանիքի կենցաղի բարելավմամբ և յերեխաներին նոր ուղղությամբ դաստիարակելու գործով, պարզ է, վոր չի կարող անտարբեր լինել դեպի պիոներական կազմակերպությունը, ուստի պետք է ցույց տա ամեն տեսակի աջակցություն ԼԿՅԵՄ-ին, պիոներների մեջ աշխատանք տանելու համար։

Առաջին և հիմնական ոգնությունը պետք է արտահայտվի նրանում, վոր շրջ-հրահանգչությանն թե գեղջկուհիների հետ ունեցած իր անձնական զրույցներում և թե ժողովներում ու նիստերում, պետք է ծանոթացնի նրանց պիոներական կազմակերպության նպատակների ու խնդիրների հետ, մատնանշելով թե ինչ ոգուտ է տալիս այդ կազմակերպությունը իրենց։

Դրա հետ մեկտեղ շրջ-հրահանգչությանն պետք է աշխատի, զարգացնել հասարակական կարծիքը պիոներների մասին, զարգացնի գյուղի հասարակական կազմակերպությունների հետաքրքրությունը դեպի պիոներական կոլեկտիվները։ Բացի այդ, շրջ-հրահանգչությանն պետք է ա) կազմակերպի զրույցներ պիոներների համար։

բ) Միջնորդի գյուխորհրդի կամ կոոպերացիայի և այլ հասարակական կազմակերպութ. առաջ, վորպեսզի սրանք ցույց տան պիոներական կոլեկտիվին նյութական ոժանդակություն (շենք և այլն),

գ) Ոգնել կանանավորելու կոլեկտիվում աշխատանքային պարապմունքները (ցույց տալ թե ինչպես են ձևում, կարում և կարկատում սպիտակեղենները, կամ կազմակերպել կարի և ձեռագործի խմբակներ և այդ աշխատանքներին գրավել անկազմակերպ յերեխաներին)։

Պիոներական կոլլեկտիվների և կանանց կազմակերպությունների մեջ փոխադարձ ոգնություն կազմակերպելու նպատակով, անհրաժեշտ է, վորպեսզի շրջ-հրահանգչուհին սերտորեն կապված լինի շրջ. կամ գյուղական բյուրոների կոլլեկտիվի հետ,

---

VII

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Վերջին յերկու տարվա ընթացքում, մանավանդ ներկայումս, մեծ ուշադրություն և դարձվում՝ գյուղում կյանքը կարգավորելու համար։ Գյուղատնտեսության բարձրացման խնդրի հետ միաժամանակ, հսկայական նշանակություն ունի նաև գյուղական ազգաբնակության առողջության խնդիրը։ Գյուղական տնտեսությունը չի կարող վերականգնվել առանց կնոջ մասնակցության, իսկ նրա մասնակցությունը չի կարող ջնջել նրա ընտանիքին։ Առաջացող նոր սերնդի համար, անհրաժեշտ է լայն կերպով գյուղում դնել մոր և մանկան պաշտպանության խնդիրը։

ՇՐՋԳՈՐԾԿՈՄՆԵՐԻՆ ԿԻՑ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

Այդ նպատակով գյուղխորհրդներին, շրջգործկոմներին և գավգործկոմներին կից կազմակերպվում են մայրության և մանկության պաշտպանության մշտական հանձնաժողովներ։

Այդ հանձնաժողովները կազմված են հետևյալ ներկայացուցիչներից՝ ա) Խորհրդից, բ) Փոխադարձ Ոգնության Կոմիտեից, գ) Գյուղական կոոպերատիվից դ) Կոմերիտմիությունից, յ) Գյուղական հիվանդանոցի բժշկից և մանկաբարձուհուց, զ) Գյուղի կնոջ կազմակերպչուհուց, ե) Գեղջկուհի պատգամավորներից և ը) Ժողդատավորից։

Գյուղխորհուրդներին կից այդ կազմակերպված հանձնաժողովներն ունեն հետևյալ նպատակները.

ա) Աջակցում են հիվանդանոցներին կից՝ ծննդաբերական բաժիններ կազմակերպելուն և նրանց աշխատանքի ընթացքին, այլ և մտածում են ավելացնել մանկաբարձուհիների թիվը։

բ) Նպաստում են շրջանային հիվանդանոցներին կից խորհրդատու կայանների բացմանը—ծծկեր մանուկների ու հղի կանանց համար։

գ) Կազմակերպում են ամառային մսուրներ։

դ) Գյուղական բնակչության մեջ տանում են կուլտ-կրթական աշխատանք, հղիության, ծննդաբերության և մաքրության համար դասախոսություններ են կազմակերպում՝ ծծկեր յերեխաների ճիշտ կերակրելու և խնամելու վերաբերմամբ, վորի համար հրավիրում են գյուղական ինտելլիգենցիային, զրույցներ կազմակերպելու։

յե) Ցույց են տալիս նյութական և իրավական ոգնություն մայրերին, միայնակներին, բատրակուհիներին և չքավոր գեղջկուհիներին։ Պարզ և ուրեմն, վոր հրահանգչուհին հանձնաժողովում կարևոր տեղ պիտի բռնի։ Նա պիտի հանդիսանա հանձնաժողովի սիրտը։ Հետագայում, տեղական խորհուրդների վերաբերյալ կանոնադրության մեջ ասված է՝ վոր շրջանային և գյուղական խորհուրդների աշխատանքը պետք է տարվի քաղաքային խորհուրդների աշխատանքի ձևով, այսինքն խորհուրդներին կից պետք է ստեղծվեն սեկցիաներ, խորհրդային շինարարության զանազան հարցերին վերաբերվող, նրանց թվում նաև առողջապահության։ Բնական է վոր առողջապահական սեկցիան պետք է զբաղվի մայրության և մանկության պաշտպանության հարցերով և մեր հանձնաժողովը այդ դեպքում պետք է կազմի սեկցիայի մի մասը։ Բնական է նայն, վոր ավելի ակտիվ աշխատողներ կ՝լինեն պատգամավորուհիները վորոնց ներշնչողն ու ղեկավարողը հանդիսանում է շրջ-հրահանգչուհին։ Շրջ-հրահանգչուհին ամեն ջանք պիտի թափի հանձնաժողովների ու ասլա կենտրոնական մարմնի միջոցով, անցկացնելու հետևյալ հիմնարկների կազմակերպումը՝, մսուրների ցանցի լայնացումը, վորը մտնում է գյուղի կենցաղի մեջ և վորը իր հերթին հանդիսանում է գլխավոր մի միջոց կուլտուրական գյուղացության վրա ազդեցություն գործելու համար։ ասլա կոնսուլտացիոնների կազմակերպումը, վորը հանդիսանում է մայրության և մանկության պաշտպանության զարգացման գլխավոր ետապներից մեկը։ հիվանդանոցներում ավելացնել մահճակալների (ծննդականների համար) և մանկաբարձուհիների թիվը։

Ի հարկե ինքը շրջ-հրահանգչուհին չի կարդալու դասախոսություններ, այլ այդ նպատակի համար հրավիրելու յե գլխավորապես բժշկի կամ մանկաբարձուհու։ Բայց ժողով հրավիրելը, խրճիթ-ընթերցարանում՝ մայրության և մանկության անկյուններ կազմակերպելը, դրա համար հանրամատչելի գրականության դուրս գրելը, վորպիսին այժմ արդեն գոյություն ունի, շրջ-հրահանգչուհին այդ պետք է կատարի, վորովհետև նա ավելի հեշտ

կերպով կարող է բարձրացնել այդ հարցը շրջգործկոմում, ստանալով այդ նպատակի համար թեկուզ և չնչին միջոցներ, վորով բժշկի աշխատանքը կարելի յե արդյունավետ դարձնել։

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՇՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մոտ անցյալում կայացած մայրության և մանկության պաշտպանության համագումարը՝ նշեց նաև մի նոր խնդիր, վոր գյուղում չի կարող կիրառվել առանց պատկամավորուհիների և հրահանգչուհու ակտիվ մասնակցության։ Դա մայրության փոխադարձ ապահովագրություն անցկացնելն է։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո մտցված է սոցիալական ապահովագրություն։

Ինչ՞ է նշանակում այդ։ Դա նշանակում է, վոր ամեն մի բանվոր ու բանվորուհի, վորոնք աշխատում են արտադրության մեջ իրենց և իրենց ընտանիքի անդամների հիվանդության, անզորության կամ ծննդաբերության ընթացքում, ստանում են ամբողջ աշխատավարձը կամ նրա մի մասը։ Աշխատանքի յուրաքանչյուր հաշմանդամ, վորոշ զառամյալ հասակի հասնելուց հետո՝ չի մնում վորպես աղքատ-անապատան, այլ մինչ իր կյանքի վերջը ստանում է դրամական նպաստ։ Այդ նպաստները տալու համար անհրաժեշտ են միջոցներ։ Մեզ մոտ խորհրդային հանրապետության մեջ, բանվորուհիների ապահովագրումը կատարվում է ի հաշիվ ձեռնարկատերերի և վորովհետև մանր ու խոշոր արդյունաբերության հիմնարկությունների մեծ մասը պատկանում է պետության, հետևորար կարելի յե ասել, վոր բանվորուհիների ապահովագրումը կատարում է պետությունը։ Բայց պետությունը վորտեղից է վերցնում այդ մեծամեծ գումարները—բանվորությանն ապահովագրելու համար։ Այդ գումարները ստացվում է բանվորների աշխատավարձի վորոշ հատակացումներից, վոր և ամեն ամսվա ընթացքում գանձվում է այդ նպատակի համար—հիմնարկության կողմից։ ահա թե ինչու ապահովագրությունը տարածվում է միայն արդյունաբերության մեջ աշխատող բանվորների—այսինքն աշխատավարձ ստացողների վրա։

Սոցիալական ապահովագրության այդ սիստեմը մայրության և մանկության պաշտպանության աշխատանքում ունի խոշոր նշանակություն։ Ցեվ շնորհիվ սոցիալական ապահովագրության, ամեն մի բանվորուհի իր հղիության և ծննդաբերության ժամա-

նակ, ոգտվում է 4 ամսվա արձակուրդով, վորի ժամանակ նա ստանում է իր աշխատավարձը։ Նորից շնորհիվ ապահովագրության նա և յերեխայի խնամքի համար նպաստ է ստանում։

Յեվ հենց այդ նպաստների բաշխման շնորհիվ է, վոր քչացել են յերեխաներին՝ հարևանուհիների դռները գցելու յերևույթը։

Բայց ապահովագրությունը միայն ընդգրկում է նրանց, վորոնք զբաղված են արդյունաբերության մեջ։ Մեզ մոտ մնում է դեռ կանանց մի մեծ մասսա, վորոնք դեռ չեն ապահովագրված—գեղջկուհիների, կարմիր բանակայինների և զինվորական ծառայության մեջ գտնվողների կանայք, ուսանողուհիները և այլն։ Այդպիսի մայրերին ծննդաբերության ժամանակաշրջանում նույնպես անհրաժեշտ է ցույց տալ ոգնություն։ Այստեղ նույնպես անհրաժեշտ է սահմանել ապահովագրություն, այսինքն նախորոք ապահովել նրանց վորոշ նպաստով։ Տվյալ պայմաններում այդ կարելի յե անել միայն, այսպես կոչված փոխադարձ ապահովագրության կազմակերպմամբ, ստեղծելով մայրական դրամարկղներ։

Այդ դրամարկղները կազմակերպվելու յեն հոժարակամ սկզբունքներով և չպետք է լինեն պարտադիր, բայց բոլոր կանայք պիտի հասկանան ու ըմբռնեն, թե վորպիսի խոշոր նշանակություն ունի իրենց համար այդ դրամարկղները։ Գյուղացությունը ապահովագրում է իր տունը հրդեհից ու անասունները սատկելուց։ Կինը նույնպես պիտի ապահովագրվի ծննդաբերությունից։ Ամեն մի կին պետք է ապահովագրվի այն հասակում, յերբ նա ընդունակ է ծննդաբերության, այսինքն 16-50 տարեկան ժամանակում։ Բոլոր ապահովագրվածները կազմում են մայրական դրամարկղ, վորտեղ յուրաքանչյուր ամիս մուծում են վճարներ 10, 20 և 30 կոպեկ և հետո ծննդաբերության դեպքում կարող են վերցնել դրամարկղից միանվագ 26-30 և 50 ռ. ու ավելի դրամ, նայած թե վորքան հարուստ է դրամարկղը։ Դժվար թե գտնվի մի կին, վորը կարողանա իր ծննդաբերության համար դրամ կուտակել և կարող է արդյոք շատ հավաքել այդ նպաստակի համար ամսական 10 կոպեկ խնայելով։

Իսկ այստեղ յեթե կանայք գիտակցորեն վերաբերվեն այդ գործին, նրանք ովքեր իրավունք ունեն ապահովագրվեն և յեթե յուրաքանչյուր դրամարկղ ունենա բազմաքանակ անդամներ, այն դեպքում դրամարկղները վոչ միայն կարող են տալ վորոշ նպաստ, այլև կարող են կառուցել մանկական հիմնարկներ իրենց անդամների համար, մսուրներ և խորհրդատու կայաններ, իսկ նմաններին

բավարարելը պետության ուժերից վեր կ՝լինի։ Կարող է հարց ծագել—ինչպես վերաբերվել այն կանանց վորոնք յերեխաներ չունեն։ Բայց չե վոր կարող է պատահել մի տարի չունենան յերեխա իսկ մյուս տարում ունենան։ Յերբ ապահովագրում են տունը հրդեհից, կովը սատկելուց, այն ժամանակ ել են ասում՝ իսկ յեթե չայրվի յեթե չսատկի։ Իսկ յեթե չապահովագրված տունը այրվի, այդ դեպքում նա վոչինչ չի կարող ստանալ. բայց սատիճանաբար մտցնելով չնչին գումարներ, կարիք չկա վախենալու, վոր կարող ես մնալ առանց տան։ Նույնը և այս խնդրում։ Դու անպայման յերեխա կունենաս, բայց չգիտեմ յերբ։ Կարելի յե ասել, վոր մոտավորապես 25-30 տարեկան հասակ ունեցող 100 կանանցից՝ ամեն տարի 20 հոգին անպայման կ՝ունենան յերեխաներ։ Դա անվանվում է ապահովագրական համարձակություն։ Ով քիչ համարձակ է—նա քիչ է մտցնում փայավճարը, իսկ ով համարձակ է նա շատ է մտցնում։ 20-30 տարեկան հասակի կանայք հաճախ են ծնում, յենթադրենք, վոր այդ հասակի կանանց ծննդաբերության համար պիտի վճարել ավելի հաճախ քան 40 տարեկան կանանց, վորոնք ավելի քիչ են հղիանում։ Դրա համար ել 40 տարեկան կանանց համար վճարները պիտի լինեն ցած, իսկ նպաստը բարձր։ 40 տարեկան կինը հավանորեն կարող է ծնել միայն դրամարկղում անդամագրվելուց 5 տարի հետո, իսկ 25 տարեկան կինը այդ 5 տարվա ընթացքում կարող է ծնել 3 անգամ և ստանալ դրա համար նպաստ։ Բնական է, վոր համարձակ յեղած դեպքում, նա պետք է իրեն ավելի ուժեղ ապահովագրի, այսինքն մուծի դրամարկղ ավելի բարձր վճար, յեթե նա ամեն ամիս վճարի 50 կոպեկ, այսինքն տարեկան 6 ռ. այդ տարվա ընթացքում ծնելու դեպքում կստանա 30 ռուբլի իր մուծած 6 ռուբլու փոխարեն։ Դա պարզ հաշիվ է։

Անհրաժեշտ է կազմակերպել մայրության—նման դրամարկղներ, գյուղերում փոխոգկոմներին իսկ քաղաքներում մայրության և մանկության պաշտպանության բաժինների հիմնարկներին կից։ Նրանք կ՝հանդիսանան սոցիալական ապահովագրության գործնականի համար անգնահատելի լրացնողներ. նրանք հնարավորություն կտան ընդգրկելու բնակչության լայն մասսաներին մայրության և մանկության պաշտպանության աշխատանքով քան մինչ այժմ է յեղել։ Այդ հարցը այժմ մշակվում է և տեղական կազմակերպությունները, մայրության և մանկության պաշտպանման յենթաբաժինները, կին-բաժիններն ու շրջ-հրա-

հանդչուհիները պետք է իրենց առաջ դնեն մի նոր խնդիր՝ դրավել այդ դրամարկղներում ժողովրդական լայն մասսաները։ Եթե բոլոր այդ միջոցները շրջ-հրահանգչուհու ոգնությամբ, թեկուզ հնարավոր լինի մասամբ անցկացնել գյուղում, դա կոժանդակի նրան, որ «կ՝կտրվի այն վերջին կապը, որը կապում է ժողովրդին խավար և սնոտիպաշտ անցյալի հետ», ինչպես շեշտվեց այդ, մայրության և մանկության պաշտպանության համամիութենական խորհրդակցության մեջ։ Չի կարելի կնոջը թողնել թիկունքի խորքերում և առաջ շարժվել։ Դրա համար միակ լավ ճանապարհն է մայրության հոգացողությունը։ Նրան հարկավոր է բարձրացնել և լուսավորել։

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂՈՒՄ։

ԻՆՉՊԵՍ ՈԳՆԵԼ ԳԵՂՋԿՈՒՀՈՒՆ

Ներկայումս, գյուղում տարվելիք հիմնական խնդիրներն են—գյուղատնտեսության բարձրացումը, գյուղացիական լայն մասսաների կոոպերացումը և գյուղի կուլտուրական մակարդակի բարձրացումը։ Չի կարելի անցնել այդ խնդրի լուծմանն, առանց գեղջկուհիների մասնակցության. բայց առաջին հերթին նրան պիտի ազատագրել ընտանեկան լծից, ազատելով նույնպես յերեխաների մշտական հոգացողությունից։ Գեղջկուհու դրությունը մինչ այժմ էլ մնում է անփոփոխ։ Նրա կյանքը շատ քիչ բանով է փոխվել անցյալից։ Նա շարունակ ծանրաբեռնված է յերեխաներով, տնային տնտեսությամբ, դաշտային աշխատանքով. նրան բոլորովին էլ ժամանակ չի մնում ինքնաշխատությամբ պարապելու, իսկ խոսք անգամ լինել չի կարող գյուղի հասարակական կյանքում մասնակցելու մասին։ Հենց այս գործում անհրաժեշտ է նրանոգնել։

Այնուհետև գեղջկուհու ազատագրման, նրա աշխատանքի արտադրողականության բարձրացման ու հասարակական կյանքում դրավելու հետ մեկտեղ, առաջ է գալիս նայև նրա յերեխայի հարցը։

Պատերազմի և տնտեսության քայքայման տարիներն անդրադարձան այդ ժամանակաշրջանում ծնված յերեխաների վրա։ Մեծ մասամբ նրանք թույլ են ու նվազ։ Գյուղական յերեխաների հետազոտումը տվեց հսկայական թվեր, որոնք յենթակա յեն թոքախտի, золотуха հիվանդության ու բռնված են կաշվի հիվանդությամբ՝ հետևաբար բնական է, որ մեր առաջ դրվում է գյուղական յերեխաների առողջության խնդիրը։

Այդ խնդրի իրականացմանը կարող են ծառայել ամառվա ընթացքում՝ մանկական հրապարակը իսկ ձմեռը մանկապարտեզը, որոնք կարող են գյուղում հանդիսանալ լավագույն ոգնականները յերեխաների նախադպրոցական դաստիարակության և նրանց առողջապահության պահպանման խնդրում։

Մանկապարտեզն ու հրապարակը ոչ միայն ամրացնում են նրանց առողջությունը, այլև դաստիարակում, սովորեցնում են կարգ ու կանոն—այստեղ գեղջկուհու յերեխան վարժվում է կոլլեկտիվ կյանքի։ Նրանք ոչ միայն դաստիարակում են յերեխաներին, այլև ոգնում են իրենց ընտանիքներին, մանուկների դաստիարակման գործում։ Մանկապարտեզների և հրապարակների ղեկավարները հանդիսանում են գեղջկուհիների բարեկամներ, նրանց են դիմում գեղջկ. այս կամ այն խնդրի համար, նա շատ բան կարող է իմանալ այստեղից և սովորեցնել այն նաև ուրիշներին։

Հաճախ մանկապարտեզն ու հրապարակը՝ ինչպես ցույց է տվել փորձը, գյուղում հանդիսանում են կուլտուրական կենտրոններ, որոնց շուրջը ղեկավարները աշխատանք են տանում գյուղացության, յերիտասարդության և անչափահասների մեջ։ Այդ աչքի յե ընկնում գլխավորապես այն գյուղում, ուր չկա ոչ կոմբջիջ, ոչ կոմսոմոլ և ոչ էլ կոոպերատիվ։ Հրապարակների ղեկավարները հանդիսանում են շրջ-հրահանգչուհիների ոգնականներ, գեղջկուհիների մեջ տարվելիք աշխատանքի ընթացքում։ Փորձը մեզ ցույց է տվել, որ մանկապարտեզների և հրապարակների աշխատանքի կազմակերպումը հնարավոր է միայն հրահանգչուհու մասնակցության դեպքում։

Նախադպրոցական աշխատողի համար, շատ ծանր է գյուղում աշխատել. նրանց անվստահությամբ են վերաբերվում, հաճախ թշնամաբար, բայց հրապարակի աշխատանքների հետ ծանոթանալուց հետո, գյուղացիների այդ տրամադրությունը փոխվում է բարյացակամ վերաբերմունքի։ Վորպեսզի տեղերում բանալ մանկական հրապարակներ՝ անհրաժեշտ է ծանոթ լինել տեղական պայմաններին։

Անհրաժեշտ է աշխատանքի ընթացքում անմիջապես հենվել գյուղում գտնվող կազմակերպությունների՝ առաջին հերթին հրահանգչուհիների վրա։

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՇԻՄՆԱՐԿՆԵՐ

Բայց վճռն է շրջ-հրահանգչուհիների դերը նախադպրոցական աշխատանքում։ Պետք է վորոշակի ասել, վոր գյուղացիները գնահատում են միմիայն այն, ինչ վոր կտա վորոշ արդյունքներ։ Ցելնելով այս հանգամանքից, շրջ-հրահանգչուհին՝ վորը իր հիմնական խնդիրն է դարձրել գեղջկուհիների կազմակերպումը, պետք է ամենից առաջ մտածի՝ ինչպես է ավելի հեշտ կազմակերպել նրանց, ինչ պիտի անել, վորպեսզի գեղջկուհիների համար ստեղծել այնպիսի պայմաններ, վոր նրանք կարողանան հաճախել և խորհուրդը և խրճիթ-ընթերցարանը և լիկ-կայանը և գյուղ-փոկը։ Հետևապես բոլորովին պարզ է, վոր հրահանգչուհու աշխատանքի ծրագրում պիտի մտնի նաև հրապարակների և մանկապարտեզների կազմակերպումը, քանի վոր մանկապարտեզների միջոցով ավելի հեշտ է կազմակերպել գեղջկուհիներին։

Մոտակա տարիների ընթացքում, մեզ չի հաջողվի գյուղում կազմակերպել մեծ քանակությամբ մանկական հրապարակներ. չնայած նրան, վոր մի շարք գյուղերում նրանք արդեն գոյություն ունեն։ Նրանց աճումը կատարվելու է դանդաղ կերպով, բայց ամառային մանկական հրապարակներ պետք է բացվեն յուրաքանչյուր գյուղում։ Մենք արդեն անցել ենք հրապարակների կազմակերպման գործին ամեն մի գյուղում և ամեն ամառ նրանց բացումը կ՝բազմանա այնքան, վորքան հրահանգչուհին հիշյալ գործում կ՝գա ոգնության։

Յուրաքանչյուր գարնան բացման ժամանակ, պետք է նախորոք մտածել, վճռել և վոր գյուղում կարելի է ստեղծել մանկական հրապարակ։

Հարկավոր է նախորոք հարցը պարզել շրջ-գործկոմում, խորհրդում, թե ինչպիսի միջոցներով կարող են ոգնել նրանք հրապարակների կազմակերպման գործին։ Բացի այդ, պիտի պարզել թե հրապարակին ինչով կարող են ոգնել՝ կոոպերատիվը, փոխոգկոմը և այլն։ Հետո անհրաժեշտ է գտնել շենք, կամ դպրոցին կից՝ եթե ամառվա ընթացքում պարապմունքներ չկան, կամ հակառակ դեպքում գյուղական խրճիթում։ Հրապարակների ղեկավարներ ստանալու համար, կարելի է դիմել լուսարաժնին, իսկ ինչվերաբերում է տեխնիքական աշխատողներին—գյուղում կարելի է գտնել։ Կահ-կարասիք (աթոռ սեղան), վորոնք հարմար են յերեխաների հասակի համար, կարելի է պատրաստել նույնիսկ

գյուղացիների միջոցով, եթե մոտակայում անտառ կա կամ թե կարճացնել մեծ սեղանների և նստարանների վոտները։ Պնակներ, գդալներ, սրրիչներ և այլն ամեն մի յերեխա կարող է իրենց տնից բերել, իսկ ամանեղենների մի սասը կարող է տա կոոպերատիվը։

Բացի այդ, հրապարակում պիտի տրվի սնունդ, վորը պետք է հոգա ղեկավարը շրջգրահանգչուհու ոգնությամբ, ճարելով սննդի համար միջոցներ։ Գյուղում մեր տարած աշխատանքի փորձը մեզ ասում է, վոր գյուղացիներն ևս կարող են ոգնել հրապարակին ով ինչով կարող է (կաթ, հավկիթ և այլն)։ Անհրաժեշտ է միայն, վոր հրապարակի հարցը դրվի ամեն տեղ և համայնական ժողովում և խրճիթ-ընթերցարանում։ Շրջ-հրահանգչուհին պետք է ոգտագործի հրապարակի ղեկավարին կանանց և գյուղացիների մեջ աշխատելու համար, վորպես կուլտուրական և հասարակական ուժի, քանի վոր գյուղը աշխատանքի յե ուղարկում այնպիսիներին, վորոնք ընդունակ կ՝լինեն տանելու նաև հասարակական աշխատանք։ Հրապարակի բացումը պիտի կատարել հանդիսավոր կերպով, վորպեսզի այդ մասին ամբողջ գյուղը իմանա։ Անշուշտ լավ կ՝լինի աշխատանքները տոն որերին սկսել։

Լուս-ժողկոմը այս տարի առաջարկում է իր աշխատակիցներին, վորպեսզի հրապարակի բացման որը հարմարեցնել Համաշխարհային Պրոլետարիատի Տոնի—Մայիսի մեկի որվան։ Հրահանգչուհու անելիքն է—գյուղացիներին նախորոք ծանոթացնել այդ հարցի հետ։

Հրապարակում յերեխաների ընդունելությունը պիտի կատարվի առանձին հանձնաժողովի կողմից, վորի մեջ պիտի մտնեն խորհրդի, փոխկոմի ներկայացուցիչները, ինքը—հրահանգչուհին։ Մեր խնդիրն է հրապարակը ծառայեցնել գյուղական յերեխաներին 100 տոկոսով. բայց մեծ գյուղերում ուր գոյություն ունի միայն մի հրապարակ և հազիվ նա կարողանում է ընդգրկել 15—20 տոկոսը գյուղական մանուկների (յերբեմն եկ 10-ը), ահա հենց այդ պատճառով պիտի չափից դուրս լուրջ մոտենալ յերեխաների ընդունելություններին, առաջին հերթին ընդունելով չքավոր ու բատրակ ընտանիքների յերեխաներին։ Լուս-ժողկոմը այս տարի առաջարկեց լուս-բաժիններին, վոր հրապարակների բացում կատարել առաջին հերթին այն գյուղերում, ուր կազմակերպված են յեղել 1925 թ. դա պիտի անել այն նպատակով, վորպեսզի հրապարակի մեծ տոկոսը հնարավոր լինի ձմեռվա ընթացքում

վերածել մանկապարտեզների։ Հաճախ պատահում են դեպքեր, յերբ հրապարակները փակվում են միջոցների և ուժեղ ղեկավարների բացակայության պատճառով։ Իսկ մեզ հարկավոր է ամեն կերպ ձգտել, վորպեսզի նրանք վերածվեն մանկապարտեզների։

Անհրաժեշտ է Մարտի 8-ի կամպանիայի անցկացման ծրագրում՝ մտցնել նախադպրոցական դաստիարակության վերաբերվող հարցեր, բացատրելով նրա նշանակությունը գյուղում։ Պետք է ոգնել գեղջկուհուն և նրա մանկան։

Հրահանգչուհին պիտի հանդիսանա այդ գործի կիրառողներից առաջինը։

Անհրաժեշտ է նույնպես նախադպրոցական դաստիարակության հարցերը մտցնել քաղաքա-հասարակական կամպանյաների ծրագրում. մասնավորապես խորհուրդների համագումարների ընթացքում, յերբ կարելի յե շրջ-գործկոմների բյուջեներում մտցնել ծախսերի մի մասը նախադպրոցական հիմնարկների համար։

Ներկայումս լուս-բաժինները արդեն տանում են ամառային կամպանիայի նախապատրաստական աշխատանքները, հայթայթում են միջոցներ (միջոցների մի մասը նախատեսված է բյուջեյով), աշխատողներ և այլն։ Պետք է շրջ-հրահանգչուհիներն ել սկսեն այդ նախապատրաստական աշխատանքը—վորովհետև միայն ընդհանուր ուժերով կարող են ստեղծել գյուղում մանկական նախադպրոցական հիմնարկների ցանց, վորի միջոցով ազատել գեղջկուհուն, դրա հետ մեկտեղ, դաստիարակել յեվ առողջ փոխարինողների։

ՀԱՎԵԼՎԱԾ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միությունը կազմվել է 1922 թ. դեկտեմբերի վերջին։ Մինչ այդ՝ խորհրդային հանրապետությունները կապված էին իրար հետ պայմանագրական հարաբերությամբ (դաշնագրով)։ Ուկրայնան, Բելոռուսիան, Ադրբեջանը—Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո, ՌՍՖՍՀ հետ կապեցին ռազմա-տնտեսական դաշնագրեր՝ ներքին և արտաքին հակահեղափոխության դեմ միասնական պայքար մղելու նպատակով։ Այդ դաշնագրերը ինչպես հարկն է ձևակերպված չէին։ Քաղաքացիական կռիվների ժամանակ այդ ձևակերպման համար ժամանակ չկար։ Պետք էր միասնական զորաճակատով հարվածել և խեղդել հակահեղափոխական թշնամիներին։

Առաջացած այս բոլոր հանրապետությունները դաշնագիր կնքելով ՌՍՖՍՀ հետ, միմիանց հետ պայմանագրեր չունեին, այսպես որինակ՝ կապած պայմանագիր չկար Վրաստանի և Հայաստանի, Հայաստանի և Ադրբեջանի, Անդրկովկասյան հանրապետությունների և Ուկրայնայի, Ուկրանիայի և Բելորուսիայի միջև և այլն։

Քաղաքացիական կռիվները վերջանալուց հետո՝ բոլոր հանրապետությունների առաջ կանգնեցին տնտեսական շինարարության խնդիրները իրենց ամբողջ մեծությամբ։ Այդ խնդիրների հետ միատեղ նաև կապիտալիստական պետությունների հետ տնտեսական կապերն ու փոխհարաբերությունները կարգավորելու նպատակով, անհրաժեշտություն եր զգացվում առանձին հանրապետությունների փոխհարաբերությունների ձևակերպման և ավելի ամուր ու սերտ միություն կազմելուն։

Պարզ հասկանալի յե վոր, առանձին հանրապետություններն անջատված ջանքերով չէին կարող բարձրացնել՝ կռիվների ընթացքում քայքայված յերկրի տնտեսական դրությունը։ Տնտեսության մի քանի ճյուղերում անհրաժեշտ եր միայն միավորել

ջանքերի համաձայնեցումն, իսկ մի քանի տնտեսությունների լրիվ ձուլվելը ու կենտրոնացումը հրամայական պահանջ եր դարձել։ (ճանապարհների հաղորդակցություն, փոստի և հեռագրատան, Ադնեֆթի Դոնբասի և այլն)։

Թշնամի իմպերիալիստական շրջապատը թելադրում եր խորհրդային հանրապետություններին, ստեղծելու միասնական ռազմական, տնտեսական և դիվանագիտական ճակատ։ Բացի այս բոլորից, զանազան ազգություններից կազմված՝ խորհրդային հանրապետությունները ձգտում էին դեպի միավորումն. ունենալով միատեսակ դասակարգային շահեր։ Դրանք բոլորն էլ համահավասար թշնամի յեն կապիտալիստական աշխարհի համար և ընդհակառակը կապիտալիստական աշխարհը թշնամի յե այդ բոլորին։

Անդրկովկասի հանրապետությունները հավաքվեցին 1922 թ. դեկտեմբերի սկզբին Անդրկովկասի առաջին խորհուրդների համագումարում և այդ համագումարում գտան, վոր անհրաժեշտ և միասնական ընդհանուր խորհրդային միութենական պետություն կազմակերպել։ Նման վորոշում են կայացրել Բելոռուսիայի, Ուկրաինայի և Ռուսաստանի խորհուրդների համագումարները։

Նույն տարվա դեկտեմբեր ամսվա վերջում, հրավիրվեց համամիութենական խորհուրդների առաջին համագումարը։ Այդ համագումարը ընդունեց դեկլարացիա և պայմանագիր՝ Միության Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն կազմելու մասին և ընտրեց այդ միության գերագույն որգանը՝ Կենտ. Գործ. Կոմ.։ Վերջինիս հանձնարարվեց դեկլարացիան ու պայմանագրերը հարմարացնելով բոլոր հանրապետությունների հետ և վերջնականապես մշակված ձևով հրատարակել Միության Սահմանադրությունը։ Միության Կենտգործկոմը ընդունեց և հրատարակեց Միութենական Սահմանադրությունը 1923 թվի հուլիսի 6-ին։

Սկզբում Միության մեջ մտնում էին 4 հանրապետություն, Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. Ա. Ս. Ֆ. Խ. Հ. Ուկրայնան և Բելորուսյան։ Իսկ հետագայում միության մեջ մտան նաև Թուրքմենիստանի և Ուզբեկիստանի ՍԽՀ-ները։

ՍԽՀՄ, սա ազգերի մի միություն է, վոր ղեկավարվում է պրոլետարիատի կողմից։ Խորհրդային Միության հիմքում դրված է հետևյալ սկզբունքը—կազմավորություն, հավասարաիրավություն, միությունից հեռանալու ազատություն, առաջավոր ազգերը պիտի ոգնեն հետամնաց ազգերին և յուրաքանչյուր ազգին հնարավորություն տալ զարգացնել իր ազգային կուլտուրան։

Այդ բոլորին համապատասխանում է միության կենտրոնական որգանների կառուցվածքը։ Միութենական յուրաքանչյուր ինքնավար հանրապետություն ունի իր ինքուրույն կոմիսարիատները, վորոնք պետք է ծառայեն հանրապետությունների ազգերի կուլտուրային և կենցաղային հարցերին։

Կոմիսարիատները հետևյալներն են, Լուսժողկոմատ, Առժողկոմատ, Արդժողկոմատ, Հողժողկոմատ, Ներք-ժողկոմատ և Սոցապժողկոմատ։ Այդ հանրապետություններում խորհրդային որգանների աշխատանքը տարվում է մայրենի լեզվով։ Յուրաքանչյուր հանրապետություն ունի իր դպրոցները, թերթեր, քաղաքական լուսավորչական հիմնարկներ իրենց մայրենի լեզվով և այլն։ Միութենական յուրաքանչյուր հանրապետություն ունի տնտեսական կոմիսարիատ, վորոնք աշխատում են իրենց ժողկոմատների և միության տնտեսական կոմիսարիատների դիրեկտիվների համաձայն։ Տնտեսության միայն այն ճյուղերը, վորոնք ունեն համամիութենական նշանակություն (մեզ մոտ Ադնեֆթ) կառավարվում են անմիջականորեն միության ժողկոմատների կողմից։

Միութենական Կենտգործկոմը բաղկացած է յերկու խորհրդներից— միութենական խորհրդից և ազգությունների խորհրդից։ Այդ յերկու խորհուրդներն էլ ոժտված են հավասար իրավունքներով, առանց վորևե մեկի խորհրդներից համաձայնության վոչ մի որենք չի կարող հրատարակվել։ Պատգամավորները միութենական խորհրդում ընտրված են յուրաքանչյուր հանրապետության բնակիչների թվի համեմատ։ Ազգերի խորհրդում յուրաքանչյուր հանրապետություն և ինքնակամ շրջան ուղարկում են հավասար ներկայացուցիչներ. հանրապետությունները հնգական, իսկ շրջանները մեկական պատգամավոր։ Միութենական խորհուրդը բոլոր հարցերը քննության և առնում միութենական տեսակետից։ Իսկ հարցերը քննում, վճռում և ազգությունների խորհուրդը միության մեջ մտնող յուրաքանչյուր ազգության մասի տեսակետներից։ Արտաքին առևտրի, միջազգային քաղաքանության, ռազմական գործերի, ճանապարհների հաղորդակցության վերաբերվող հարցերը, կենտրոնացված են և կառավարվում են համամիութենական ժողկոմատներով։

Միության հանրապետությունների ներսում կան ինքնավար հանրապետություններ։ Անդրկովասը իրենից ներկայացնում է յերեք ինքնուրույն հանրապետությունների ֆեդերացիա— Ադրբեջան

ջանի, Վրաստանի և Հայաստանի. այս հանրապետությունները միացել են ազգային համերաշխություն հաստատելու և տնտեսական վերելքի ու յերկրի ինդուստրիալիզացիայի նպատակով։

Ադրբեջանի ՍԽՀ մեջ մտնում և Լեռնային Ղարաբաղի ինքնավար հանրապետությունը (Լ. Ղ. Խ. Հ.)

Վրաստանի ՍԽՀ մեջ մտնում են՝ Աբխազիայի պայմանագրական հանրապետությունը, Աջարիստանի ինքնավար հանրապետությունը և Հարավ-Օսեթիայի ինքնավար շրջանը։

Վ Ե Ր Ն Ա Գ Ր Ե Ր

Հ. Կ. Կ. Անդր. Յերկկոմի Բան. Գեղջ. Բաժնից 3

Կուսակցության հիմնական խնդիրները կանանց մեջ տարվելիք աշխատանքում 4

1. Գեղջկուհիների մեջ տարվելիք աշխատանքների ձևերն ու մեթոդները

1) Գեղջկուհիների մեջ տարվելիք աշխատ. կազմակերպում . 10
2) Մասայական աշխատանք. 16
3) Աշխատանքը բատրակուհիների մեջ 22

2. Աշխատանքը խորհուրդների կին-անդամների և հասարակական աշխատանքի հաշված գեղջկուհիների մեջ

1) Աշխատանքը խորհուրդներում 30
2) Հասարակական փոխադարձ ոգնությունը և շրջ-կազմակերպչուհու խնդիրները. 37
3) Գեղջկուհիների մասնակցությունը դատարանական աշխատանքներում 44
4) Աշխատանքը հողային որգաններում 52
5) Հողային որենքի հիմնական կանոնը 55

3. Աշխատանքը կոոպերատիվի անդամ գեղջկուհիների մեջ

1) Լենինը կոոպերացիայի մասին. 60
2) Գյուղատնտեսական կոոպերացիա 62
3) Սպառողական կոոպերացիա. 71
4) Տնայնաարհեստագործական կոոպերացիան և տնայնագործ-ծուհին 78

4. Քաղաքաշխատանքը գեղջկուհիների մեջ

1) Անգրագիտության վերացումը 83
2) Գեղջկուհին և խրճիթ-ընթերցարանը 89
3) Գեղջկուհիների մեջ տարվելիք հակակրոնական պրոպագանդայի մասին 96
4) Գյուղ-թղթակցուհին և նրա հետ պարվելիք աշխատանքը . 100

5. Արեվելքում

1) Կուսակցության տարվելիք աշխատանքը Արևելքի կանանց մեջ 104

6. Աշխատանքը յերիտասարդների և մանուկների մեջ

1) Աշխատանքը աղջիկների մեջ 109
2) Պիոներական կոլեկտիվը գյուղում 113

7. Կենցաղային հարցեր

1) Մայրության և մանկության պաշտպանություն 119
2) Նախադպրոցական դաստիարակությունը գյուղում . . . 124

8. Հավելված

1) Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների միություն . . 131
2) Անդրկովկասի հանրապետությունների տեղական իշխանության որգանների կազմի մասին ըստ սեռի (1926 թ.)։
3) Անդրկովկասի Կ. Կ. (բ.) կազմը ըստ սեռի առ 1-ն հունվարի 1926 թ.
4) Վիճակագրական հաշվետվություն
5) 1925-26 թ. Անդրկովկասում հրավիրված պատգամավորական ժողովների կազմի մասին
6) Պատգամավորուհիների ազգային կազմը։

Հանրապետություններ		Պատգամավորուհիների ընդհանուր թվաքանակ	Դրանց թվում													
			Ըստ հասակի					Ըստ ընտանեկան դրության					Ըստ կրթության			
			մինչ 20 տարեկան	20—29	30—39	40 և բարձր	Առանց ցույց.	Աղջիկ	Անուսնացած	Այրի	Ապրանքաբանված	Առանց ցույց.	Գրագետ	Կիսագրագետ	Անգրագետ	Առանց ցույց.
Վրաստան	թվ.	9679														
	%	100,0														
Ադրբեջան	թվ.	6063	1064	2730	1822	418	29	916	3483	1503	104	57	1578	1716	2551	218
	%	100,0	17,5	45,0	30,1	6,9	0,5	15,1	57,4	24,8	1,7	1,0	26,0	28,3	42,1	3,6
Հայաստան	թվ.	5686														
	%	100,0														
Անդրկովկաս	թվ.	21428														
	%	100,0														

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Անդրկովկասի հանրապետությունների տեղական իշխանության մարմինների կազմի մասին ըստ սեռի (1926 թ.)

Թված է Անդրկովկասի հանրապետությունների և նրանց ավտոնոմ միավորումների.	Ընդամենը	Դրանց թվ. Տղամ.	Դրանց թվ. Կին.	Ընդամենը	Դրանց թվ. Տղամ.	Դրանց թվ. Կին.	Ընդամենը	Դրանց թվ. Տղամ.	Դրանց թվ. Կին.	Ընդամենը	Դրանց թվ. Տղամ.	Դրանց թվ. Կին.	Ընդամենը	Դրանցից Տղամ.	Դրանցից Կին.
	Գյուղխորհրդներում			Շրջ-գործկոմներում			Քաղխորհրդներում			Գավգործկոմներում			Ընդամենը		
Հայաստանի Ս. Խ. Հ.	14232 100%	13066 91,8%	1166 8,2%	517 100%	480 92,8%	37 7,2%	962 100%	871 90,5%	91 9,5%	203 100%	193 95,1%	10 4,9%	15914 100%	14610 91,8%	1304 8,2%
Ադրբեջանի Ս. Խ. Հ. (առանց ավտ. միավորների)	42803 100%	37170 86,8%	5633 13,2%	927 100%	844 95,1%	83 4,9%	324 100%	286 88,2%	38 11,8%	393 100%	364 92,5%	29 7,5%	44447 100%	38664 87%	5783 13%
Վրաստանի Ս. Խ. Հ. (առանց ավտ. միավորների)	18328 100%	16751 91,4%	1577 8,6%	1532 100%	1508 98,4%	24 1,6%	1036 100%	933 90,1%	103 9,9%	545 100%	515 94,5%	30 5,5%	19909 100%	18199 91,4%	1710 8,6%
Աբխազիայի Ս. Խ. Հ.	2135 100%	1886 88,3%	249 11,7%	— —	— —	— —	158 100%	144 91%	14 9%	98 100%	94 95,9%	4 4,1%	2391 100%	2124 88,8%	267 11,2%
Հար. Ռուսիայի ավտ. շրջան	735 100%	670 91,2%	65 8,8%	47 100%	46 97,7%	1 2,3%	135 100%	115 85,2%	20 14,8%	42 100%	40 95,3%	2 4,7%	912 100%	825 90,5%	87 9,5%
Աջարիստ. Ս. Խ. Հ.	2740 100%	2637 90,1%	103 3,9%	162 100%	155 96,7%	7 3,3%	570 100%	521 89,7%	49 10,3%	100 100%	95 95%	5 5%	3410 100%	3253 95,4%	157 4,6%
Ա. Ս. Ֆ. Խ. Հ.	80973 100%	72180 89,2%	8793 10,8%	1444 100%	1324 91,7%	120 8,3%	3185 100%	2870 90,1%	315 9,9%	1381 100%	1301 94,3%	80 5,7%	86983 100%	77675 89,3%	9308 10,7%

Անդրկովկասի Կ. Կ. (Բ) գազիք քաղ սեռի առ. 1-ն հունվարի 1926 թ.

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Կ. Կ. (Բ) անդամներ			Կ. Կ. (Բ) թեկնածուներ			Ընդամենը կոմունիստ		
	Ընդամենը	Դրանցից կանայք		Ընդամենը	Դրանցից կանայք		Ընդամենը	Դրանցից կանայք	
		Արտաքուստ թվերով	% %		Արտաքուստ թվերով	% %		Արտաքուստ թվերով	% %
Վրաստան	15.563	730	4,7	11.364	872	7,4	26.927	1602	5,9
Ադրբեջան	16.973	636	3,8	9.494	836	8,9	26.467	1472	5,6
Հայաստան	4.031	118	2,9	3.374	239	7,1	7.405	357	4,8
Անդրկովկաս	36.567	1484	4,0	24.232	1.974	8,1	60.799	3.431	5,6

Հ. Կ. Կ. Կ. Կ. (բ)
Վիճակագրական բաժին

192 192 թ. Պատգամավորական ժողովների աշխատանքի արդյունքների

ԱՊՐԱՆՊԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.

	1	Պատգամավորական ժողովների թիվը: Աշխատանքի սկզբին	Հաշվետվություն կազմելու մոմենտին: Դրանցից: Աշխատում է	Դրանցից: Լիազորված չեն	Դրանցից: Դադարեցրել է գործունեությունը	Պատգամավորների թիվը: Ընդհանուր	Դրանցից գտնվում է հաշվետու տարվա ընթացքում	Գործնական աշխատանքում զբաղված պատգամավորների թիվը և կազմը: Այդ թվում: Ընդհանուր	Արտադրության բանվորներից	Տարբեր գործարանների բանվորներից	Գեղջկացիներից	Ծառայողներից	Այլ	Ակտիվ մասնակցություն պատ. ժողով. սեկցիաների աշխատանքներում: Ընդհանուր	Արդյունաբերական	Արդյունաբերական գործարանների բանվորներից	Արտաքին և ներքին գործերի	Երկրագործական	Կենցաղային	Զինվորական	Ազգությունների	Սեկց. աշխատ. և ժողովս պրակտիկան. հասար. կազմակերպ.: Ընդհանուր	Ցեղի հարցերում	Ցեղերի հարցերում	Գյուղատնտեսության	Գրագիտության	Ֆինանսական	Դատական	Ազգությունների	Պատգամավորների թվից մեկ են: Ազգությունը	Պատգամավորների թվից մեկ են: Ընդ. Ն. Ն. (Ա)	Ընդ. Ն. Ն. Ն.	Ընդհանուր գրագիտություն	Ընդհանուր գրագիտություն գրագիտ.
		2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36
ԳԱՂԱՓԱՐ	Գավառներին և շրջկոմներին կից																																			
	Արդյունաբեր գործարանների բջիջներին կից																																			
	Այլ բջիջներին կից																																			
	Ընդհանրը																																			
ԳՅՈՒՂԱՅԻՆ	Արդյունաբերական գործարան. բջիջներին կից																																			
	Գյուղ. բջիջներին կից																																			
	Ուր չկան բջիջներ: Միայնակ կոմունիստներին կից																																			
	Ուր չկան բջիջներ: Շեֆ. ֆրակց. ղեկավարությամբ																																			
	Ընդհանրը																																			
ԸՆԴՀԱՄԵՆԸ																																				

ՏԵՂԵԿԱՏՈՒ

1925—26 թ. Անդրկովկասում հրավիրված պատգամավորական ժողովների կազմի մասին.

Հանրապետություններ		Ընդամենը պատգամավորներ	Դրանց թվում. Ով և պատվիրակել. Բանվորներ դեղի կազմից	Գեղջկացիների կազմից	Ծառայողների կազմից	Տարբեր անձանաչների կազմից	Այլ ընդարձակ հիմների կազմից	Ըստ կուսակցության. Կ. Կ. (բ) անդամ և թեկնածու	Լ. Կ. Յա. Մ. թեկնածու անդամ	Անկուսակցակ.	Ըստ պրոֆմիության. Պրոֆմիությունի վրա անդամ	Պրոֆմիությունի անդամ	Ըստ ազգության. Վրացի	Հայ	Թուրք	Անդրկով. այլ ազգությունները	Ռուս	Այլք	Առանց ցույց.	Ըստ սոցիալական դրության. Բանվորներ	Գեղջկացիներ	Ծառայողներ	Տարբեր անձանաչներ	Տարբեր ծառայություններ	Զորքերի մասերի	Ուսանողներ և այլն
Վրաստան	աբս.	9679	Տեղեկություններ չկան					107	263	9309	Տեղեկութ. չկան		4656	828	322	341	802	980	—	955	6289	602	1473	—	—	360
	%%	100,0						1,0	3,0	96,0			66,7	8,6	3,3	3,5	8,3	9,6	—	9,8	65,0	6,2	15,0	—	—	4,0
Ադրբեջան	աբս.	6063	1185	2610	665	1577	26	321	485	5257	1916	4147	7	1247	2360	90	2073	303	3	1243	2279	863	1555	39	59	25
	%%	100,0	19,5	43,1	11,0	26,0	0,4	5,3	8,0	86,7	31,6	68,4	0,1	20,6	38,6	1,5	34,2	5,0	0,0	20,6	37,6	14,2	25,6	0,6	1,0	0,4
Հայաստան	աբս.	5686	—	—	—	—	—	—	—	—	1629	4057	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
	%%	100,0	—	—	—	—	—	—	—	—	28,8	71,2	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Անդրկովկաս	աբս.	21428																								

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԸ.

ԱԶԳՈՒԹՅՈՒՆ	Պատգամավորություններ Թիվը			Գործնական աշխատանքում գրավված պատգամավորությունների Թիվը և կազմը						Պատգամավորությունների ընդհանուր թիվից յենթարկված են													Անգրագիտությունը վերացրած գավառներում ընտրված ներկայացուցիչների թիվը	Պատգամավորությունների թիվից մտել են		Առանց են բաշխած գնարանի պարտականություններում	Առանց են բաշխած վարչական գործերում	Ինչ լեզվով են տարվում պարապմունքները	Պատգամավորական ժողովների Թիվը				
	Աշխատանքի սկզբում	Հաշվեհամեմատությունը կազմելու մասնակցությունը		Գրագրության գործերի	Բնակչության գրանցման գործերի	Տարեկան գրանցման գործերի	Գրագրության գործերի	Հաշվեհամեմատության գործերի	Ա ն ա ռ	Կանանց	Հայերենի	Ռուսերենի	Ռուս ուսուցիչների	Ամբ և ամենին պարտ. գործերի	Ամբ.	Գյուղատնտեսության վերաբերյալ	Գյուղատնտեսության վերաբերյալ	Գյուղ. փոխադրությունների	Դպրոցական արգասիքների	Ֆրանցիսկյան արգասիքների	Կոոպերատիվ գործերի	Գեղջկական աշխատանքների	Ամբ.	Հ. Կ. Կ. (բ) մեջ	Հ. Լ. Յեր. Կ. Ա. մեջ				Ամենաքիչ սկսվածներ	Հաշվեհամեմատությունը կազմելու մասնակցությունը	Գրանցեց		
34	35	36	37	38	39	40	41	42	43	44	45	46	47	48	49	50	51	52	53	54	55	56	57	58	59	60	61	62	63	64	65	66	67

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Ս.Խ.Հ.Մ.

- Ուկրաինա — Խարկով
- Բելոռուսիա — Մինսկ
- Ռ.Ս.Ֆ.Խ.Հ. — Մոսկվա
- Թուրքմենստան — Պոլտորացկ
- Ուզբեկստան — Սամարղանդ
- Անդրկովկասյան Ս.Ֆ.Խ.Հ. — Թիֆլիս
  - Վրաստան — Թիֆլիս
  - Հայաստան — Երևան
  - Ադրբեջան — Բաքու

ԻՆՖՆԱՎԱՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մոլդավիա — Բիրզիա
- Կարելիա — Պետրոզավոդսկ
- Բաշկիր — Ուֆա
- Թաթար — Կազան
- Չուվաշն — Չեբոկս.
- Վոլգադերմ — Պոկրովսկ
- Դաղստ. — Մախաչկալա
- Ղրիմ — Սիմֆերոպոլ
- Բուր.Մոնղ. — Վերխնե-ուդինսկ
- Յակուտն. — Յակուտսկ
- Կիրգիզ. — Պիշպեկ
- Կազակ. — Կրզըլ-Որդա
- Թաջիկն. — Դյուշամբե
- Աբխազիա — Սուխում
- Ջավախք — Բաքում
- Նախիջև. — Նախիջև.

ԻՆՔՆԱՎԱՐ ՇՐՋԱՆՆԵՐ

- Ռոմիկ(Ջիրյուս Ենկ.) — Սուտ-Սիու
- Վոտյակն — Իժևսկ
- Մարի(Ջերեմիս) — Կրասնոկ.
- Ղալմուխն. — Աստրախ.
- Ոյրատյան — Ուլալա
- Ադիգե — Կրասնոդ.
- Հոպուշեթ — Վլադիկավ.
- Կար.Բալկ — Նալչիկ
- Կար.Չերք — Բատալպաշ.
- Չեչենիա — Գրոզնի
- Հ.Ոսեթիա — Վլադիկավ.
- Կալա.Կալմ — Տուրտկուլ
- Հարմսեթ — Ցխինվալ
- Փրն.Ղարաբ. — Ստեփան.


120
140
160
80
180
70
60
180
50
160
40
140
ՈՒՑՅԱԼ
ՈՎԿԻԱՆՈՍ
Հ.
ԲԵՐԻՆԳՅԱՆ
ՕՐԵՐ
21
Լենա գ.
Խ.
ՈԽՈՏՍԿ
ԾՈՎ.
20
Ամուր գ.
18
Ադրբեջան
ստան
5
3
ԱՆԴՐԿԱՎԿԱՍՅԱՆ ԱՖԻՀ.
ԻՆՔ. ՅԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
1 Աբխազիա
2 Աջարստան
3 Նախիջևանի
ԻՆՔ. ՇՐՋԱՆՆԵՐ
4 Հար. Ոսեթիա
5 Լեռնային Ղարաբաղ
Հյուս. Կովկաս
ԻՆՔ. ՇՐՋԱՆՆԵՐ
6 Ադիգե (Չերքեզների)
7 Ինգուշեթիա
8 Կաբարդին-Բալկարներ.
9 Կարաչայ Չերքեզների
10 Չեչենների
11 Հյուս. Ոսեթիա

ՀՀ Ազգային գրադարան
NL0232099

56.299